



№

ՄԱՅԵՆԱԴԱՐԱՆ

38.

БИБЛИОТЕКА
Никиты Осиповича
№ ЭМИНА. 191.

(ՄԿՐՏԶԻ ԷՄԻՆ.)

САНКТ-ПЕТЕРБУРГЪ

191.



ՊԱՏՄՈՒԹԵԱՆՅ

ՀԵՄԸՌՕՏՈՒԹԻՒՆ

ԴՊՐԱՏԱՆ ՏՂՈՅ

ՀԱՄԱՐ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ



25079 (47.925) 1415-44

36-75

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

Կ.

ՀԵՅՈՅ

ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԵԱՄԲ

Հ. ԵՓՐԵՄ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ս Ե Թ

Մ Խ Թ Ա Ր Ե Ա Ն



2004

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԸ

1839

Ք

9(47.925)



5316

38

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պատմութիւն կարգաւորվ ու սորվելով մարդիկ աս մեծ օգուտը կը քաղեն, որ ուրիշի ըրածէն խելք կը սորվին. թէ որ աղէկ բան է նէ՝ իրենք ալ նմանը ընել կը ջանան. թէ որ գէշ՝ իրենք ալ կը զգուշանան: Ասոր համար ինչպէս որ պատմութիւն չի սորվող մարդը շատ բաներու մէջ անփորձ ըլլալով միշտ տղայ կը մնայ, ասանկ ալ պատմութեանց տեղեակ մարդը՝ գլխէն շատ բան անցած, շատ բանի փորձ եղած, ու կատարեալ մարդ կըսեալի:

Միայն թէ ինչպէս ամեն գիտութիւն՝ նոյնպէս ալ պատմութիւնը ինչչան որ կարգաւորեալ կերպով մը չի սորվըլի, օգտակար չըլլար: Այն մարդ սուրբ գրոց պատմութիւնը սորվէլէն ետքը, ուրիշ ամեն պատմութիւններէն առաջ իր ազգին պատմութիւնը պէտք է որ սորվի.

վասն զի ինչպէս որ սուրբ գրոց պատմու-
թեան մէջ հաւատոյ սկզբունքը և Աս-
տուծոյ նախախնամութիւնը մասնաւոր
կերպով կրտեանայ, ասանկ ալ իր ազգին
պատմութեանէն կիմանայ՝ թէ՛ որ կատարե-
լութիւնը ազգային ըլլալով զինքն ալ կը
պարտաւորեն անոնցմէ ետ չիկենալու, և
ազգին պատիւը չիկորսընցնելու, և որ
պակասութիւնները կամ ախտերը բոլոր
ազգին վերայ նոյնպէս երևնալով իրեն ալ
կրնան աւելի բնական ըլլալ, և թէ ինքը
ինչպէս պիտի զգուշանայ անոնցմէ, որ
ազգին պէս ինքն ալ տեսակ տեսակ
թշուառութիւններու մէջ չիյնայ :

Ասով կիմացելի որ ճշմարիտ ազգասէր
ու խելացի մարդը իր ազգին պատմու-
թիւնը միայն զուարճութեան համար
պիտի չիկարգայ, ինչպէս որ կրնայ կարգաւ
ուրիշ ազգաց պատմութիւնը, հապա
իրեն և իր ազգին օգուտ ընելու համար :

Մենք ալ որ մեր ազգին պատմութիւնը
աշխարհաբառ լեզուով ու սարղ և ան-
կողմնասէր ոճով համառօտեցինք, կը-
յուսանք որ կարգացողներուն միտքը
շատ բանի մէջ մեծ համարմունք կրճդենք

մեր հայրենեացը վերայ, և իրենց սիրտը
կրվառենք ճշմարիտ ազգասիրութեամբ-
անանկ որ ազգին ետքի ատենները քա-
շած խեղճութիւններուն վերայ ջաւին,
և ան խեղճութիւններուն բուն սլատ-
ճառները հասկընալով իրենք զգուշա-
նան: Ասով իրենք իրենց ազգին սլար-
ժանքը կրլան, և ազգը իրենց իմաստու-
թեամբն ու բարի կրթութեամբը օրէ օր
կրսլայծառացնեն. մենք ալ տեսնելով,
մեր աշխատանայ փոխարէնը առած կը-
սեպւինք:



ՏԵՊ ԵԿՈՒԹԻՒՒՆ

Հ Ա Յ Ո Յ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԸԱՅ

Ա

Հ. ՄԵՐ ազգը ինչո՞ւ Հայ կրուի: Գրե՛ն
Պ. Որովհետև էն առջի նահապետը որ Առաջ
իշխեց մեր ազգին վերայ՝ Հայկ կրուէր,
անոր անունէն իր ազգն ալ Հայ ըսեցաւ:
Իսկ ուրիշ ազգերուն մեզի Էրմէնի կամ
Առմէնի կանչելը՝ մեր Արամ նահապետին
անունէն առած է, որ իր քաջութիւն
ներով երևելի եղաւ ուրիշներուն առջին:
Անոր համար մեր ազգին բնակած երկրին
անունն ալ որ մենք Հայաստան կրուենք,
օտար ազգերը Էրմէնիստան կամ Առմէ
նիա կրկանչեն:

Հ. ՄԵՐ ազգին ըսկիզբը ո՞ր դարուն
մէջ է:

Պ. Մեր ազգը ջրհեղեղին դադրելէն
ետև մէկէն՝ Նոյ նահապետէն ըսկսած կը
սեպուի. որովհետև էն առաջ Նոյ նահա
պետն ըսկսաւ ծաղկեցընել Հայաստանը:
Երբոր ուրիշ ազգեր էլան Հայաստա
նէն, գացին Բաբելոնին աշտարակը շինե
լ

23/2

2243

Ք. Ա լու, Հայաստանին բնակիչներն ալ իրենց երկիրը ծաղկեցրնելու հետ էին, ասոնք Յարեթին որդւոյը մէկ մասն էին, անոր համար մեր ազգը Յարեթեան ալ կրկոչել: Իսկ Հայ անունը ունեցան՝ երբոր Հայկ դարձաւ նորէն Հայաստան եկաւ իր ազգականներուն քովը, ու ըսկաաւ մինակ իշխել Հայաստանին վրայ, մասնաւոր հոգ տանելով թշնամիներուն ձեռքէն երկիրը պահպանելու, անոր համար մեր ազգին առջի գլուխը և հոգացողը կրճանչանք զինքը:

Հայկին տիրապետելուն ժամանակն է Ասիայի էն հին ազգերուն նոր ըսկաած առջի դարը: Ուստի թէ որ ուրիշ ազգեր իրենց ըսկիզբը հինցրնելու համար առասպելներու ժամանակ կրտանին նէ, մենք ասանց առասպել մը խառնելու՝ յայանի կրցուցրնենք մեր ազգը՝ Նոյնա հասկետէն ըսկաած, և ուրիշներուն ըսկսելու ատենը՝ մերը Հայկայ ձեռքովը նորոգւած:

2107 Ասանկ ալ բարեկարգութեան կողմանէ ջրհեղեղէն ետև էն առջինը կրրնանք ըստել մեր ազգը, ինչու որ՝ երբ ուրիշ ազգերը դեռ ասդիս անդին ցրուած՝ քնակելու տեղ կրփնարուէին, Հայաստանին բնակիչները հանդիստ նստած իրենց տղը, աշխարհքին զարդարելու հետ էին:

2229 Հ. Հայոց պատմութեան իրաւ ըլլալը ինչէն յայանի է:

Պ. Հին ատենի պատմիչները պատմութիւն գրելու ատեն ասասպելներով

կըզարդարէին պատմութիւնը, որ ժողովրդեան հաճոյ ըլլայ. ուստի մէկ հին պատմութիւն մը որ մէջը առասպել չունի, յայտնի նշան է որ զարդարած չէ, հասպա միայն հարկաւորութեան համար եղած պատմութիւնը գրեր են: Ինչպէս որ մեր ազգին պատմութեանը շինելու կերպէն ալ յայտնի է. որովհետեւ Ազգարչակ թագաւորը ուղեց խմանալ թէ ինչ ազգ է հայոց ազգը, Մարիբաս ասորին խրկեց որ երթայ Նինուէի գրքատունէն գտնայ, ուր որ մեծն Աղէքսանդր ամէն ազգ գերուն պատմութիւնն ու յիշատակները ժողովել ու պահել տրւեր էր, և իր հոգը չէր թէ հայերը գովելի կամ փուճ ազգ մը ըլլան: Եւ Մարիբաս ասորի ըլլալով՝ ամենևին պատճառ մը չունէր մէջը սուտ խառնելու, կամ հայերը գովելու. իսկ թէ որ Ազգարչակ հայ ըլլար, կրնայինք բտել թէ Ազգարչակին հաճոյական բան մը ընելու, կամ անոր աչքը մրանալու համար պատմութեան մէջը սուտ բաներ խառնել է: Մանուանդ, թէ վախալ ունէր որ չըլլայ թէ սխալ բան գրէ, ու ետքը ազգին մէջի գտնուած պատմութիւններէն խնայելի իր գրածին ստութիւնը:

Հ. հայոց ազգին տէրութիւնը որչափ ատեն քշեց:

Պ. Նախ Նոյնահապետէն սկսած ինչւան հայկին հայաստան դառնալու ատենը հայաստանին մէջի բնակիչները ի-

րեքհարիւր տարիի չափ Տանոսփերայան Իշխանութեամբ կրվարուէին որ ամէն մարդ իր տունը տեղը կրկառավարէր : Անկէ ետև երբոր Հայկ դարձաւ եկաւ, ամէնուն վերայ իշխեց, ըսկաւ Հայկազանի Իշխանութեանը, որ է Հայոց պատմութեան սկիզբը . ասիկայ դիմացաւ ինչևան Վահէ 1779 տարի : Վահէին մեռնելէն ետքը 180 տարի անիշխան մնացին՝ հնազանդելով մեծին Աղեքսանդրի յաջորդող կուսակալներուն :

Հայոց երկրորդ իշխանութիւնն ըսկրսաւ Վաղարշակէն, որ ըսւեցաւ Թագաւորութեան Արշախանեայ, և դիմացաւ 580 տարի ինչևան Արտաշիր . ասոր աքսորւելէն ետքը առանց Թագաւորի մնացին 456 տարի . առջի բերանը Պարսից տակը մարդպաններու ձեռքով կրկառավարուէին ետքերը Արաբացւոց ոստիկաններուն ձեռքովը :

Հայոց երրորդ իշխանութիւնն ըսկրսաւ մեծն Աշոտէն, որ է Թագաւորութեան Թագաւորութեանը, և դիմացաւ 196 տարի՝ ինչևան Գաղիկ վերջին Թագաւորը . որուն մեռնելէն ետքը 35 տարի առանց Թագաւորի մնացին :

Հայոց Չորրորդ իշխանութիւնն ըսկրսաւ առաջին Ռուբէնէն, և ըսւեցաւ Թագաւորութեան Ռոբէնեանի . ասիկայ դիմացաւ 295 տարի, ինչևան վերջին Առնին բռնըւիլը, անկէց ալ ինչևան հիմա 467 տարի է :

Հայկէն ըսկսած ինչւան հիմա ժա-
մանակագրաց հաշուովը 3900 տարիէն
աւելի է . իսկ եօթանասնից հաշուովը
4100 տարիէն աւելի է :

Աս չորս իշխանութիւններուն կար-
գովը մենք ալ սա համառօտութիւնս
չորս մաս կըբաժնենք . ամէն մէկ մասին
եանէն ալ հարկաւոր գիտելիքները էւել-
ցնելով :





ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Յ

Մ Ա Մ Ն Ա

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ

Բ

Հ. Ո՛վ էր Հայկ, և ի՛նչ կերպով մեր ազգին նախահայր եղաւ:

Պ. Հայկ նահապետը Նոյին թուանը թուռնէ. այսինքն՝ Նոյին տղան Յաբեթ, Յաբեթին տղան Գամեր, Գամերին տղան Թորգոմ, Թորգոմին տղան Հայկ¹: Աս Հայկը՝ Բաբելոնին աշտարակը շինելու համար Գացող կարիճներուն հետ մեկտեղ էր. երբ որ աշտարակը կործանեցաւ ու մարդիկը ցրեցան, Բէլը՝ որ Ներքով թ ալ կըսէ՛

1 Խորենացին Կրտի հեղինակներէն հանած՝ Գամերէն եքե կաւելաճէ Թիբասը:

- Ք. Ա կուզէր ամենուն վերայ տիրել, և ամենէն
 աստուծոյ պէս պաշարել: Հայկ երբոր
 աս բաննս լսեց, նեղացաւ, ու իրէք հա-
 թիւր կարիճ՝ ընկերներով և իր ընտանի-
 քովը նորէն գարձաւ եկաւ Հայաստան՝
- 2107 Արարատ գաւառին կողմերը: Հոն նստե-
 ցուց իր կադմոս անունով թուր, և
 ինքը աւելի առաջ անցաւ, ըսկաւ կարդ-
 կանոն դնել Հայաստանի բնակիչներուն,
 որ չեցրելին ու չիկորսընցընեն ունեցած
 խաղաղութիւնն ու շեղունին: Ինքն
 ալ նորէն ըսկաւ վարժիլ առջի խօսած
- 2106 շեղուն: Հոն Արարատին մօտերը քաղաք
 մը շինեց, անունը դրաւ Հայկուն: Իր
 բնակած գաւառին ալ անունը հարք
 դրաւ:

Հ. Բէլ երբոր լսեց թէ Հայկ զինքը
 արհամարհեր ու փախեր է, ինչ բրաւ:

Պ. Բէլը Հայկին ապստամբութեանը
 վերայ նեղանալով, մէկէն դեսպան խրկեց
 ետեէն՝ ըսելով որ ետ գառնայ, չէնէ ինքը
 անձամբ վերան կելէ ու անով տեղով կը-
 ջնջէ: Երբոր Հայկ անոր խօսքին մտիկ
 չբրաւ, Բէլ կատղած՝ անթիւ զօրք առաւ
 հետը, Հայկին վերայ եկաւ: Հայկ վախ-
 նալու տեղ իր կարիճները քովը թողվեց ու
 անոր գիմացն ելաւ, գնաց Անայ ծովուն
 քովը՝ գաշին յարմար կողմը պատրաս-
 տըած կրսպասեր: Բէլ զարմանալով Հայ-
 կին համարձակութեանը վերայ, քիչ մը
 զօրքով առաջ անցաւ՝ որ գայ տեսնէ թէ
 Հայկը ինչ բանի ասպաւիններ է, ու զինքը

Համոզէ որ հնազանդի: Հայկ երբոր տե սաւ որ Բէլ մինակ առաջ կուգայ, սիրտ տրւաւ իր կարիճներուն որ մէկէն վազէն Բէլին վերայ, ու ամէնքը մէկէն Բէլին գրտ. նրւած կողմին հետ զարնըւին, ըսաւ ու մէկէն վերան վազեց: Եփոթեցաւ Բէլ, կուղէր ետ քաշել, քայց շարժելու ասէն չիմնաց. Հայկ քաշեց աղեղը, անանկ սաստիկ ուժով զարկաւ նետը Բէլին կուրծքին, որ առջնի սղնձէ զրահէն մտուց, ու կունըկէն դուրս հանեց: Ինկաւ Բէլ, հողին փշեց. զօրքը մէկէն ցրուեցան, և աշխարհս ազատեցաւ այնպիսի բռնաւորի մը ձեռքէն որ աստուածս պաշտութիւնը կուղէր ջնջել, և ինք զինքը պաշտել տալ: Հրամայեց Հայկ որ առնեն Բէլին մարմինը զըմուսեն ու հարք գաւառին մէջ բարձր տեղմը թաղեն. որ աչքը վեր վերցընողը երբոր մէկ կողմը Նոյին տապանը տեսնէ, յիշէ մարդուս անկարգութիւններուն համար եղած սխախտը. մէկալ կողմն ալ նայի ու փառասիրութեան և հպարտութեան ախտին վերջը մտածէ:

2104

Հ. Հայկ Բէլին յաղթեւէն ետքը ուրիշ ինչ երևելի գործքեր ըրաւ:

Պ. Հայկ երբոր տեսաւ որ պատերազմը յաջողութեամբ լրմնցաւ, նախ Բէլին հետ պատերազմ ըրած տեղը քաղսք շինել տուաւ, ու անունը Հայք դրաւ, որ ետքը ան գաւառին անունն ալ Հայոց ձոր ըսուեցաւ: Ինքը մեծ յաղթանակով դարձաւ հարք գաւառը. շատ քաղսքներ շի

- Ք. Ա նեց ու կարգեր կանոններ դրաւ : Ասանկով շատ տարիներ խաղաղութեամբ տիրեւէն ետքը՝ տերութիւնը յանձնեց իր
 2027 Արմենակ աղուն, ու 400 տարւան մեռաւ :

Գ

Հ. Արմենակայ վերայ ինչ բան կրպատ մըւի :

- Պ. Արմենակ Հայկին որդին Հայաստանին ամէն կողմերը ծաղկեցընել ուղիւ լով՝ Հարբ գաւառը յանձնեց իր խոռ ու Մանաւաղ եղբայրներուն, ու ինքը գնաց դէպի արևելեան դին մեծ դաշտի մը մէջ ըսկաւ շինութիւններընէլ : Հոն սօսի ծառերով մեծ անտառ մը տնկեց, անոր մօտիկ լեռը Արագած անուանեց. ան լեռան տակը շինած քաղքին անունն ալ դրաւ Ա
 2022 րագածոտն. ուրիշ շատ քաղաքական կարգեր դնելէն ետքը՝ Ժամանակին բաժանմունքներն ալ աւելի կարգաւորեց՝ Մոկաց գաւառին մէջ գտնուած իմաստուններուն ձեռքովը : Արմենակին իշխանութեան վերջի տարիները՝ Նոյ նահապետը ծերացած՝ ինրհարիւր յիսուն տարւան վախճանեցաւ, ու թաղեցաւ Նսրատ անունով բարձր լեռան վրայ Մասիսին դիմացը, ինչպէս որ Նոյ իրենց ապրտպրեց : Իսկ Նոյին կինը որ Նոյեմզարա կըսէր, Մարանդ գաւառին մէջ թաղեցին : Արմենակ շատ տարի խաղաղութեամբ կառավարե-

էնն ետքը մեռաւ , և իրեն յաջորդ դրաւ Ք. Ա. որդին Արամայիսը :

Հ. Արամայիսին վերայ ինչ գիտե լիք կայ :

Պ. Արամայիսը հօրը տեղը անցնելէն ետե մեծագործութեան ետեւ ըլլալով Արագածու դաշտին մէջ մեծ ամուր քաղաք մը շինեց մեծամեծ քարերով, ու անուներ Արմաւիր դրաւ , որն որ հայկազանց տէրութեան մայրաքաղաքն եղաւ : Եւ հոն տեղն գետին անուեն ալ Արասի դրաւ իր թոռանը անուենովը :

1975

Հ. Ո՞վ է Շարա , և վրան ինչ գիտե լիք կայ :

Պ. Արամայիսը տղայ մը ունէր՝ անուներ Շարա, որ խիստ շատակեր էր , ուտել խմել կըսիրէր . անոր համար Արամայիս իրեն մէկ սաղաքեր երկիր մը տուաւ . հոն բնակեցաւ Շարան , քաղաքներ շինեց զարդարեց , անոր համար ան գաւառին անուներ Շիրակ ըսեցաւ : Ասկէ առակ եղաւ հայոց մէջ որ շատ կերուխում սիրող մարդու ասանկ կըսեն եղեր . « Եթէ բո Շարայի որկորն է , մեր Շիրակայ ամբարքն չեն » :

Արամայիս քառսուն տարի իշխելէն ետքը մեռաւ , ու տեղը անցաւ իր տղան Ամասիա :

1940

Հ. Ամասիայի վերայ ինչ գործք կայ յիշած :

Պ. Ամասիա իրեք տղայ ունեցաւ . Գեղամ , Փառոսիս , Յոլակ : Ուղեւով որ մէջերնին խռովութիւն չըլլայ , և դատարկ

Ք. Ա կեանքի չնվարժին, առաւ զանոնք ու
 դնաց Արարատայ մօտերը . հոն Փառու-
 խին ու Յորակին համար շատ ծախքով
 երկու քաղաք շինեց՝ օրւան մը ճամբայ
 իրարմէ հեռու, և յանձնեց անոնց որ
 կառավարեն ու շէնցընեն : Մէկուն ա-
 նունը Փառախոտ ըսւեցաւ, մէկաւինը Յո-
 լակերտ : Արարատ լեռան չորս գին շէն-
 ցընելով լեռան անունը Մասիս դրաւ,
 ան դաւառին անունն ալ Մասեաց օան-
 և ինքը Գեղամ անդրանկին հետ դարձաւ
 1908 Արմաւիր ու շատ տարի կառավարելէն
 ետքը մեռաւ . ու տէրութիւնը յանձնեց
 Գեղամին :

Գ

Հ. Գեղամին վերայ ի՞նչ մասնաւոր
 գործք կը պատմուի :

Պ. Գեղամ քանի մը տարի Արմաւիր
 նստելէն ետքը, տէրութիւնը յանձնեց
 իր հարմա տղուն . ինքը Երասխ գետէն
 անդին անցաւ, դնաց Սեանայ ծովին քո-
 վերը քաղաքներ շինեց, ու անտեղւան
 1900 քին անունը Գեղարբունիք դրաւ . անոր
 համար ան լիճն ալ ըսւեցաւ Գեղամայ
 ծով : Ետքը ան տեղանիքը մէկալ Սիսակ
 տղուն յանձնեց, ու ինքը դարձաւ Երաս-
 խէն անդին գաշտի մը մէջ Գեղամէ քա-
 ղաքը շինեց, որ ետքը իր մէկ թուանը
 անունովը Գառնի կոչւեցաւ : Հոն Գե-
 ղամ շատ տարի կենալէն ետեւ մեռաւ : Իսկ

Միասկ՝ որ իրեն ունեցած կատարելու
 թիւններուն համար Ազու ալ կըսէր, շատ
 շէնքերով զարդարեց ան կողմերը, և ան
 գաւառները իրեն անուանովը Միասկան
 կոչեցան, որ Սիւնիք ալ կըսէի: Անկէց
 իր երկիրները ինչան Աուր գետը և ինչան
 Կասալից ծովին եղերքը տարածելով, ան
 տեղւանքին անուան ալ Ազուանիք ըսե-
 ցաւ, որ ետքը զատ տէրութիւն եղաւ:

Հ. Հարմային վերայ գիտնալու ինչ
 բան կայ:

Պ. Հարմա մեծագործութեան ետեւ
 ըլլալով, Արմաւիր քաղաքը ամուր ու
 փառաւոր սրբիստով պատեց, և շատ
 շէնքեր շինեց թէ քաղաքին մէջ և թէ
 դուրսը. իր հօրը մեռնելէն ետքն ալ շատ
 տարի տիրելով, Արամ սղուն թո-
 ղուց կառավարութիւնը ու ինքը մեռաւ:

1858

1827

Հ. Արամին վերայ ինչ կըսասմընքի:

Պ. Արամ իսխտ անուանի եղաւ իր
 խելքին ու քաջութիւններուն համար:
 Իր ատենը ըսկսեր էին օտար ազգերը չորս
 կողմէն հայերը նեղելու. Արամ ամէ-
 նուն գէմն ելաւ յաղթեց, տէրութիւնն
 ալ մեծցուց:

Գլխաւոր թշնամիներուն մէկն էր
 Նիւքար Մարաց իշխանը, որ Հարմային
 ատենը հայոց երկրին մէկ մասը իրեն
 հարկատու ըրեր էր. Արամ յիսուն հա-
 զարի չափ զօրքով վերան վաղեց, յաղ-
 թեց, ու զինքն ալ բռնեց Արմաւիր բե-
 րաւ; հրաման տրւաւ որ երկըթէ ցիցով

Նխաքարին ճակատէն աշտարակի մը ծայրը
գամեն. Նխաքարին երկիրներուն մէկ մասն
ալ իրեն հարկատու ըրաւ :

Արամին մէկալ Թշնամին էր Բար-
շամ Բաբեղացոց իշխանը, որ քառսուն
հազար հեռեակ և հինգհազար ձիաւոր
զօրքով վերան եկեր էր. Արամ իր կըր-
րիճ զօրքովը դիմացը ելաւ, ցրուեց ջար-
դեց Բարշամին զօրքը, զինքն ալ բռնեց
սպաննեց: Երրորդ Թշնամին էր Պայա-
պիս Կապադովկացոց իշխանը. անոր ալ
յաղթեց ու վաճեց:

Տ. Պայապիս իշխանին ինչպէս յաղ-
թեց Արամ :

Պ. Պայապիս Արամին քաջութիւն-
ները լսելով, ու վախնալով որ չըլլայ թէ
իր երկիրներուն ալ տիրէ, շատ զօրքով
Արամին դէմն ելաւ: Արամ վերան գնաց
ու մեծ ջարդ տալով փախուց Պայապիսը՝
Միջերկրական ծովուն կողիններէն մէկը
ձգեց, ու Կապադովկիային վերայ հայ
կուսակալ մը դրաւ Մշակ անունով. հրա-
ման ալ հանեց որ ան տեղի բնակիչներն
ալ հայերէն խօսին :

1 Անոր համար իոյր Ասիային ան փեղատե՛ւ
Յոյնք Արմէնիա անուանեցին. Բայց հայե-
լը ան փեղին անուանը Երէն Առաջին հայտ,
հայաստանէն Երուսաղիմ քաղաքը երկունին ըւ-
լաւուն համար: Եւ որովհետեւ անիւ երբեք Ա-
րամ ան իողմ որեւէ երկրներուն ալ փրկեց ու-
ամէնուան ալ հրաման հանեց որ հայերէն խօսին,

Իսկ Մշակ մարդկանը ըսկաւ ան տեղ
ւանքը շէնքերով զարդարել, մէկ մեծ
քաղաք մըն ալ շինեց, ու անունը Մշակ
դրաւ. ետքէն աս քաղքիս անունը ծուռ
հնչուելով եղաւ Մաժակ, որ է Կեսարիան
(Ղայսերի) :

Հ. Արամին ծերութեան գործքերը
որոնք եղան :

Պ. Արամ Կասաղովկիայէն դառնալէն
ետքը, Հայաստանին ուրիշ տեղւանքն
ալ շատ քաջութիւններ ըրաւ, երկիրը
ամէն թշնամիներուն ձեռքէն խաղաղ
ցուց ու ըսկաւ նոր կարգեր կանոններ
դնել՝ շէնցընելով Հայաստանին ամէն
կողմերը :

Ան միջոցին Նինոս Ասորեստանի թա-
գաւոր նստաւ. և իմանալով որ Արամին
նախահայրը զՆերքով թիւ սրապը ըսպան-
ներ է, աս մեծ նախատինքը ուղեց ջնջել
իր հզօր տերութեանը վերայէն. ըսկաւ
սպառերազմի մեծ սպարաատու թիւն տես-
նել : Բայց Արամին քաջութիւնները
լսելով աչքը չիկարեց անոր հետ կրուե-
լու, անոր համար խաղաղութիւն ըրաւ
Արամին հետ, ու իր երկրորդը անուա-
նեց զինքը :

Արամ ասանկ փառքով յիսուելու 1769

անոր համար անոնք ալ ըստեցան Երեւոյտ Հայտ,
Երեւոյտ Հայտ : Իսկ Բուրժ յիկէն Փոտե Հայտ
ըստեցան :

Ք. Ա թը տարիի չափ իշխելէն ետքը մեռաւ ու տէրութիւնը թողուց իր Արայ տղուն :

Ե

Հ. Արային երևելի դորձքերը որոնք եղան :

Պ. Արան՝ որ գեղեցկութեանը համար Արա Գեղեցիկ կոչուեցաւ, երբոր իր հօրը տեղը անցաւ, ըսկաւ ալ աւելի զարգարել հայաստանը : Անոր համար ալ Արմաւիր մայրաքաղաքին շրջակայ գաւառը Արարատ ըսուեցաւ :

1767

Երբոր Ասորեստանցոց թագաւորը նինոս մեռաւ, իր կինը Շամիրամ տեղը անցաւ¹ : Ասիկայ անկարգ ըլլալուն, ուղեց կարգը իւր Արային հետ, խոստանալով որ իրեն հետ մէկտեղ տիրէ բոլոր Ասորեստանին ալ : Բայց Արան ամէն բանի մէջ բարեխառն ու զգաստ ըլլալով, Շամիրամայ խոստմունքները յանձ չառաւ, ու միշտ անոր դեպքանները ետ խրկեց : Ինչւան որ Շամիրամ յուսահատած՝ վերան սպառերազմի ելաւ, սպըսպրելով իր զօրքին որ Արան ողջ բռնեն, ու իրեն բերեն : Բայց Արան՝ սաստիկ վրէժխընդրութեամբ թշնամիները ջարդելու աւան, ինքն ալ զարնըւեցաւ մեռաւ : Մեզի յիշատակ թողուց իր գիւցազնա-

1 Աշխարհիս շէրայ էն տալի կին Բագա-
տըր էրա- Շամիրամ :

կան առաքինութիւնը, որ անկարգութեանէ փախչելու համար՝ զո՛հ եղաւ սպառնալով մէջ:

Իսկ Շամիրամ լսելով Արայի մահը, ուզեց զինքը կախարգութիւնով ողջն պահելու. բայց յոյսը փուճ ելաւ:


Հայերը խիստ ցաւելով իրենց առաքինի նահապետին մահուանը վերայ, ամէն իրենց ուժովը սպառնաատրեցան սպառնալով: Շամիրամ տեսնելով անոնց ասանկ կատաղութեամբ սպառնաատրելը, վախցաւ, ու Արային նման մարդ մը գտաւ իր քովը, Արային հագուստները անոր հագցուց, ձայն հանեց թէ Արան կենդանի է ու իր քովն է: Աս ձայնէս մեծ շփոթութիւն կննարով Հայոց զօրքին մէջ՝ Շամիրամին գէմ ելլալէն ետ կեցան: Շամիրամն ալ ելաւ Հայաստան եկաւ. և Արայի սիրուն համար՝ անոր որդին Կարգոսը յաջորդ նստեցուց, անունն ալ Արայ դրաւ:

Շամիրամ տեսնելով Հայաստանին ազւոր տեղւանքը և օդին քաղցրութիւնը, Աղթամարայ ծովուն քովը փառաւոր քաղաք մը շինեւ առաւ, որուն անունը դրաւ Շամիրամակերտ, որ ետքը Անի ըստեցաւ:

Հ. Կարգոսին վերայ ի՛նչ մասնաւոր գործք կը յիշուի:

Պ. Կարգոս իր Անուշաւան տղան Արմենակին տնկած սօսիներուն նըւիրեց, անոր համար Անուշաւանը Սօս կոչեցաւ:

2507
5316-38



Բ. Ա

1725

Ան որերը Համիրամին տղան՝ Անոււասը իր մօրը դէմ պատերազմի ելաւ . Համիրամն ալ Հայաստան փախաւ, և Վարդոսին հետ մէկտեղ Անոււասին վերայ պատերազմի գացին ու յաղթուեցան . Վարդոսն ալ զարնրուեցաւ մեռաւ երեսուն տարեան :

Հ. Վարդոսէն ետե սվ եղաւ Հայոց նահապետ :

Պ. Վարդոսին ըսպաննըւելէն ետքը Հայերը քանի մը տարի անտէր մնացին, որովհետեւ Անոււաս բռներ էր Վարդոսին տղան Անուշաւանը տասնըջորս տարեան, ու գերիի տէս իր պալատին մէջ կրտահեր : Բայց Անուշաւան խելացի ու բնութեամբ անուշ ըլլալով, սիրելի եղաւ մեծերուն, ու անոնց միջնորդելովը Հայաստանին մէկ մասին վերայ տիրեց, խոտանալով որ տուրք տայ : Եւ իր խելացի ու աղէկ կերպովը՝ քիչ ատենէն բոլոր Հայաստանն ալ ձեռք ձգեց, և շատ կարգաւորութիւններ ըրաւ վաթսունւիրէք տարիի չափ ու մեռաւ :

Զ

Հ. Անուշաւանին սվ յաջորդեց :

Պ. Հայկէն ինչւան Անուշաւան որդի, որդի նահապետ ընտրուեցան . բայց Անուշաւանին ցեղէն մարդ ջիգանըւելով, Հայկայ ցեղէն Պարեա անունով կարիճ իշխան մը տիրեց . ու շատ անգամ պատերազմ

1662

ներ ըրաւ յիսուն տարւան մէջ : Ասոր Բ. Ա
 յաջորդեց Արբակ անունով մէկը , անոր 1612
 ետեւէն ալ ուրիշ մը : Եւ ասանկ ետեւէ
 ետե զորաւոր մարդիկներ տիրեցին ինչ-
 ւան Պարոյր :

Հ . Արբակէն ինչւան Պարոյր Հայաս-
 տանին տիրող նահապետներուն վերայ
 ինչ գիտելիք կայ :

Պ . Ան միջոցին տիրող նահապետնե-
 րուն մէջ թէպէտ շատ կարիճներ գըտ-
 նըւեցան , բայց իրենց գործքերէն խիստ
 քիչ բան յիշւած է . վասն զի մեր ազգը
 սովորութիւն չունէր իրենց նախնեաց
 սխառմութիւնը գրելու : Իսկ թէ որ նշա-
 նած կարնէ գիւաններու մէջ , անոնց հետ
 մէկտեղ ամէն հնութեան յիշատակներն
 ալ կորսըւեցան : Աւրիշ ազգաց գիւան-
 ներէն մէկ բանի բան միայն կը պատմե-
 Մովսէս խորենացին , լալով մեր ազգին
 ուսումնասեցուէր վերայ : Ասոնց մէկն է
 Հայկակ նահապետը , որ խիստ սրտե- 1381
 ըազմ սիրող և քաջ ըլլալով յաղթեց
 Ասորեստանցոց Ամինթէոս թագաւորին 1366
 ու ետքը անոր յաջորդին Բեղոքոս թա-
 գաւորին ալ յաղթել ուղեւով , սրտե-
 ըազմի մէջ զարնըւեցաւ ու մեռաւ : 1362

Զարմայր նահապետը իր կարրճու- 1194
 թեամբը ամէնքը զարհուրեցուց , և Յու-
 նաց օգնութիւն գնաց Տրոյիայի սրտե-
 ըազմին ատենը , ու հոն շտաքաջութիւն
 ներ ցուցնելէն ետքը ինքն ալ ընկաւ :
 Աս բանիս լուրը Հայաստան գալով երկու 1182

Բ. Ա տարի խառնութիւն եղաւ, ինչւան որ
երկրորդ Շաւարշ նահապետը յաղթեց
ու տիրեց :

1883 Պերճ նահապետը շատ զօրաւոր ըլլա-
լով տիրեց շրջակայ ազգերուն վերայ :
Ասոր նման ըրաւ Կայսրակ նահապետն
ալ ¹ :

Տ. Պարոյրին վերայ յիշատակած ինչ
բան կայ :

1748 Պ. Պարոյրը խելքով ու քաջութիւ
հինկ տարի տիրեց : Անկէց ետքը Մարայ
Վարբակէս իշխանին հետ Վէկտեղ գնայ
Ասորեստանեայց Սարդանաբաղ թագա-
ւորին վերայ. յաղթեցին անոր, ու ձեռ-
քէն թագաւորութիւնը առին . Վարբա-
կէս ալ Պարոյրին օգնելուն շնորհակա-
լութեան համար՝ թագ ու գաւազան տը-
լաւ անոր՝ որ անկէ ետքը ինքն ալ թագա-
ւորի անունով իշխէ Հայոց վերայ :

1746 Պարոյրը թագաւորի անուն առնելով՝

1 Անուշա-անէն երգը այն-այն յեղէ քի-
րոզ նահապետները ինչւան Պարոյր իարգա-
ստոնք էն . Պարէք, Արբակ, Զա-ան, Փառ-
նակ, Սուր, Հա-անակ, Վաչագակ, Հայկակ,
Աճբակ, Առնակ, Շա-արշ, Նորայր, Ասպաճ,
Կար, Գոռակ, Տրանք, Ընձակ, Գլշակ, Հօ-
րոյ, Զարճայր, Շա-արշ, Պերճ, Արբո-ն,
Պերճ Բ, Բաղդակ երկայնակեաց, Հոյ հրա-
շակերք, Յո-սակ, Աճբակ Բ, Կայսրակ, Փառ-
նա-սալ, Փառնակ, Սկայորդի, եւ Սկայորդ-ոյն
քշան Պարոյր :

մեծ փառքով գարձաւ Հայաստան, ու
քառասունըութը տարիի չափ թագաւոր
ելէն ետքը մեռաւ : Աս Պարոյրին ատե-
նը 'Նինուէի Սենեքերիմ' թագաւորին
տղաքը Ագրամելէք և Սանասար փախան
եկան Հայաստան . Պարոյր զանոնք սլա-
տուով ընդունեցաւ , որ ետքը մեծ նա-
խարարութիւնեղան . Սենեքերիմէն առաջ
եկաւ Սասունք նախարարութիւնը , Ագ-
րամելէքէն Արծրունիք ու Գնունիք :

Է

Հ . Պարոյրին տեղը ո՞վ թագաւոր նըս-
տաւ :

Հ . Պարոյրին տեղը անցաւ իր որդին
Հրաչեայ . ետքը ասոնք ետեւէ ետեւ կար-
գաւ իրարու յաջորդեցին . Փառնաւաղ
Բ , Պաճոյճ Բ , Կոռնակ , Փաւոս . որոնց
վերայ յիշատակած բան չիկայ :

700

Հայկակ Բ , Փաւոսին տղան , Նաբու-
գոդոնոսորայ հետ Երուսաղէմի վերան
գնաց , և Հրէից գերիներուն մէջէն Շամ-
բատ անունով իշխանմը առաւ Հայաստան
բերաւ : Ասոր ցեղէն ելաւ Բաղարատ մեծ
նախարարը՝ Աղարշակին ատենը . անոր
անունովը Շամբատայ ցեղը ամէնքն ալ
Բաղարատունիք բուեցան ¹ :

605

1 Բագրատունեաց յեղին Սմբատ և Ազոպ
անունները՝ Հրէից Շամբատ և Ասոր անուն-
ներն են :

Ք. Ա. Հայկակին ետևէն նստաւ իր որդին
 569 Երուանդ առաջին: Արուանդէն ետքը
 565 Թագաւորեցանորադան Տիգրան առաջին:

Հ. Տիգրան առաջինին վերայ ինչ երևելի գործք կըստամբուի:

Պ. Տիգրան իրմէ առաջ եղած Թագաւորներուն ամէնէն երևելի եղաւ ամէն կողմանէ: Նախ շատ քաջուններով իր տէրութիւնը մեծցուց: Երկրորդ՝ շատ ազգերու յաղթելով, Յոյներն ալ իրեն հարկատու ըրաւ երկայն ատեն, և Պարսից Վիւրոս Թագաւորին հետ մէկտեղ Մարաց և Բաբելոնի Թագաւորներուն յաղթեց: Երրորդ՝ հայու ազգը պայծառացուց, կարգ կանոն դնելով զգետտի և կերակուրի, զինուորներու, ու քաղաքներու. իր ազգն ալ հարստացուց:

Հ. Տիգրան առաջին ինչո՞ւ համար Մարաց վերայ պատերազմի ելաւ:

Պ. Երբոր Տիգրան չորս դիւ թշնամիներուն կըյաղթէր ու տէրութիւնը կըկարգաւորէր, լսեց թէ Պարսից Թագաւոր նստաւ Վիւրոսը. անոր մարդ խրկեց ուրախակցութեան համար, և հետը խաղաղութեան դաշինք դրաւ: Աժդահակ Մարաց Թագաւորը երբոր լսեց Տիգրանին ըրած բարեկամութիւնը, դժարը եկաւ. վասն զի դիտէր թէ Վիւրոս իրեն դէմ պատերազմի պիտի ելլէ, և Տիգրանէն ալ խիստ կըվախնար: Աս վախով միտքը բռնըւած, սորսամիտ իրազմըն ալ տեսաւ՝ որ իրէք կարին՝ Թագաւորներ

բոլոր աշխարհիս կրտսիրէին, անոնցմէ մէկն ալ վաղեց իրեն գէմ ու պատերազմելով զինքը վերաւորեց: Ան վախէն արթըննալով, խորհուրդ ըրաւ որ պատերազմի պատրաստուի Բարեւազուոյ ու Պարսից Թագաւորներուն գէմ: և որովհետև աչքը չկտրեց Տիգրանին գէմ ելլալու, ուզեց խարէու թեամբ մեռցնել անիկայ: Խարէու թեան հնարքը աղէկմը մտածելէն ետքը, Տիգրանին ընծաներով մարդ խրկեց, և ուզեց որ Տիգրանին քոյրը իրեն մեծ թագուհի ընէ: Տիգրան աս ըն բերանը ջիմանալով անոր միտքը, ինդիքը կատարեց ու իր քոյրը Տիգրանուհին անոր հարս խրկեց: Աժգահակ զանիկայ տիկնաց տիկին ըրաւ, ու ամէն բան անոր խորհրդովը կընէր. ինչան որ վատահանալով վերան՝ յայտնեց անոր իր միտքը, և ըսաւ թէ Տիգրան Ալեքոսին հետ մէկ եղած պատրաստուեր են զիս և զքեզ մեռցնելու. ուստի դուն պէտք է որ ետեւէն ըլլաս ու եղբայրդ Տիգրանը մեռցնել տաս. չէնէ քեզ տիկնու թենէդ կըծգեմ: Տիգրանուհին որ շատ խելացի էր, Աժգահակին միտքը խմանալուն պէս հաւնիլ չըցուց, ու դադտուկ թուղթ գրեց Տիգրանին, ամէն բան տեղնիտեղը խմացուց: Տիգրան Աժգահակին միտքը հասկըցանէ, շուտ մը մարդ խրկեց ու յորդորեց Ալեքոսը, որ շուտ ընէ ընելիքը, խոստանալով որ ինքն ալ կօզնէ: Իսկ ինքը Տիգրան մէկէն զօրք ժողովեց, ելաւ Աժ-

Ք. Ա դահակին դէմ, և վեց ամիսի չափ սլատե-
 րազմը երկընցուց, ինչւան որ իր քոյրը Տիգ-
 րանուհին փախաւ Աժդահակին քովէն:
 Ան առե՛նը Վիւրոսն ալ եկաւ ու մէկտեղ
 սաստիկ զարնըւեցան Աժդահակին հետ.
 Կռիւին առե՛նը ինքը Տիգրան վազեց Աժ-
 դահակին վերան, զարկաւ ըսպաննեց, ու
 յաղթուածիւնը լրմնցուց, Աժդահակին ըն-
 տանիքին հետ ուրիշ շատ գերիներ ալ
 առնելով գարձաւ հայաստան: Տիգրանու-
 հին տուաւ Տիգրանակերտ քաղաքը որ
 ինքը շինեւ էր. Աժդահակին ընտանիքն
 ալ Երասխին քովերը բնակեցուց, որոնց
 ցեղը Վիշապազունք ըսեցան: Ետքը Վրե-
 սոս լիւրացոց թագաւորին ու Բաբելոնին
 վերայ ալ գընաց յաղթեց: Տիգրան ա-
 սանկ քաջութեամբ ու խելքով քառսու-
 նըհինգ տարի թագաւորեւէն ետքը մե-
 ռաւ, ու իրեք զաւակ թողուց, Բաբ, Տի-
 րան, Վահագն:

553

546

Ը

Հ. Տիգրան Երուանդեանին ո՞վ յա-
 ջորդեց:

520

Պ. Տիգրանին իրեք տղոցը մէջէն Վա-
 հագնը ամէնէն աւելի քաջ ըլլալով տի-
 րեց հայոց վերայ, և մեծ մեծ քաջու-
 թեան գործքեր ըրաւ. ինչւան հայերը և
 Վրացիք զինքը հերակլէսի նմանցընելով
 սկսան վերան երգեր շինել ու երգել:
 Վահագն քսանըեօթը տարի թագաւորե-

էն ետքը երբոր մեռաւ, Արաստանի մէջ Ք. Ա իր արձանը տնկեցին ու սպաշտեցին . և կրսէին թէ վիշապներու հետ սրատերազ մեր ու յաղթեր է :

Իր ցեղը Ահաճնիք ըսւեցան . որոնցմէ շատերը քուրմ եղան ու Ահազներ կը սպաշտէին իբրև իրենց ցեղին աստուածը :

Ահազներն ետքը որդիէ որդի նրաստան աս թագաւորները . Աւաւան, Ներսէհ, Զարեհ, Արմոգ, Բայգամ, Ան որ Շամիրամակերտ քաղաքը նորոգեց ու իր անուամբը Ան կոչեց : Ասոնց վրայ ասկէ զատ մասնաւոր գործք չի պատմուիր :

Հ. Հայկազանց էն ետքի թագաւորը ո՞վ եղաւ, և ի՞նչպէս կորսընցուց տէրութիւնը :

Պ. Ահէ Անին որդին հայկազանց վերջի թագաւորը . ասիկայ առջի բերանը քաջութիւնով Հայաստանը ազատեց ամէն թշնամիներուն ձեռքէն : Եւ բոլորովին վատահասցած իր քաջութեանը վերայ, երբոր մեծն Աղեքսանդր Պարսից վերայ կրվազէր, քառսուն հազար հետեակ և եօթը հազար ձիաւոր Պարսից օգնութիւն խրկեց : Բայց տեսնելով որ Պարսիկները յաղթըւեցան, և Աղեքսանդր կուզէ իր երկրին վերայ ալ գալ, ինքը չորս դիւ ազգերէն ալ զօրք ժողվելով դիմացը ելաւ, և Աղեքսանդրին անթիւ զօրքին հետ սրատերազմելով թէպէտ շատ վնաս հասցուց, բայց էն ետքը ինքն ալ սրատերազ մի մէջ ընկաւ, զօրքն ալ ցրուեցան . ա-

Ք. Ա

493

371

351

328

Ք. Ա սանկով Աղէքսանդր տիրեց Հայաստանին :

Աս եղաւ Հայու տէրութեան առջիկործանումը : Մեր առջի նահապետներուն և Թագաւորներուն կտրճութիւնը պատճառ եղաւ ազգին պայծառանալուն, և իրենց ազատութեանը մէջ 1800 տարիի չափ մնալուն : Թէպէտ շատ անգամ Թշնամիներ ելան, բայց միշտ յաղթըւած ամբոցած դարձան : Իսկ Ահաճէ իր կտրճութեամբը այնչափ տարւան ազատ տէրութիւնը իր կենացը հետ մէկտեղ կորսընցուց : Բայց չէ Թէ կտրճութիւնը հասա խոհեմութեան պակասութիւնը սս մեծ զնասը բերու գլխուն : Ասան զի Աղէքսանդրի ուժը խմանալէն և իր զօրքին ալ յաղթըւիլը տեսնալէն ետքը, նորէն յանդգնեցաւ անոր դեմացը ելլելու : Երանի՛ր Թէ Ահաճէին տըւած զնասովը և ցըցուցած փորձովը խրատեէին անկէ ետքը եկող Թագաւորները : Գէշն աս է որ մարդիկ չեն հաւտար ըլլալու զնասին, ինչւան որ իրենը ալ անձամբ չխորձեն :

Թ.

Հ. Ահաճէին մեռնելէն ետքը Հայոց տէրութիւնը ինչ վիճակ ունեցաւ :

Պ. Իրեք տարի Աղէքսանդրին իշխանութեանը տակը անտէր մնալէն ետքը, Միհրան անունով մէկը կուսակալ դրուեցաւ Աղէքսանդրին կողմանէ, ասիկայ

հինգ տարիէն ետ կանչըւեցաւ, ու տեղը Ք. Ա
 եկաւ Նէոպտողոմէոս, որ շատ նեղու-
 թիւն տուաւ Հայերուն:

Ան օրերը Կասպադովկացւոց թաղա-
 ւորին տղան Արթիթէոսը Հայաստան փա-
 խաւ, ու առաջուց թշնամի ըլլալով Նէո-
 պտողոմէոսին, յորդորեց Հայերն որ անոր
 դէմ ելլեն: Ան ասե՛նը Ադուարդ Սիւնեաց
 նախարարը գլուխ կեցաւ ու Հայերը
 միաբանեց, յանկարծ Նէոպտողոմէոսին վը-
 րան վազեց. անիկայ հազիւ կրրցաւ փախ-
 ջիլ ու ազատիլ. Ադուարդն ալ գլուխ
 քաշեց Մակեդոնացոց տէրութենէն ու
 ըսկաւ ինքնագլուխ տիրել:

317

Պերդիկկաս Մակեդոնացին աս բանս
 երբոր լսեց, բարկացաւ, ու Եւմենէս իշ-
 խանը խրկեց որ երթայ Հայաստանը՝ նուա-
 ձէ: Բայց Եւմենէս տեսնելով որ բռնու-
 թեամբ չի կրնար, խաղաղութեամբ պատ-
 գամ խրկեց Ադուարդին, որ Նէոպտո-
 ղոմէոսին ձեռքովը սովորական հարկը
 տայ: Ադուարդ տեսնելով որ այսչափ խո-
 նարհեցաւ Եւմենէս, և վախնալով իրեն
 ներուն անմիաբանութենէն, յանձն ա-
 ռաւ: Ուստի նորէն դարձաւ Նէոպտողո-
 մէոսը, ու իբրև Ադուարդին երկրորդը կը-
 կենար Հայաստանին մէջ. բայց միշտ առ-
 թի կը սպասէր որ վրէժը առնէ Հայե-
 րէն և որովհետև Եւմենէս անոր ուզա-
 ծին հակառակ էր, Նէոպտողոմէոս չի կր-
 ցաւ համբերել, ըսկաւ Եւմենէսին դէմ
 ելլել. Ադուարդէն ալ շատ զօրք իրեն օգ-

Ք. Ա նահան տուաւ, գնաց Եւմենէսին դէմ, երկու անգամ սաստիկ զարնըւեցաւ հետը, ինքն ընկաւ մեռաւ, զօրքն ալ ցըրւեցան: Մէկ քանի տարիէն Եւմենէսն ալ մեռաւ:

Ագուարդ Արիթէոսին ալ զօրք օգնահան տալով խրկեց որ երթայ իր հայրենի Կասպադովկացոց թագաւորու թեանը տիրէ: Արիթէոս տիրէլէն ետքը շատ ընծաներով Ագուարդին զօրքը եւս դարձուց: Ագուարդ երեսուն իրերք տալի իշխելէն ետքը մեռաւ:

Հ. Ագուարդին տեղը ո՞վ իշխեց հայոց վերայ:

Պ. Ան ատենները Սելևկացիք զօրացած ըլլալով հայոց և Պարսից կողմերը, խրկեցին հրանտ կուսակալը, որ քառասուն հինգ տարի իշխեց հայոց, Պարսից, Մարաց ու Պարթևաց վերայ:

Երբոր հրանտ մեռաւ, Արտաւազ հայոց մեծ իշխանը Սելևկացոցմէ գլուխ քաշելով տիրեց ու ըսկսաւ տերութիւնը մեծցընել: Ան ատենը Անտիոքոս Սելևկացոց թագաւորը բարկացած՝ շատ զօրքով ըսկսաւ վերան վազել: Արտաւազ վախցաւ դէմն ելլելու, անոր համար շատ ընծաներով մարդ խրկեց, Անտիոքոսին սիրար առաւ, խոստանալով որ ատենին ամբողջ հարկը վրձարէ, ասանկով յիսուն տարիի չափ իշխելէն ետքը մեռաւ:

Հ. Արտաւազ կուսակալին մեռնելէն ետքը ո՞վ իշխեց:

Պ. Անտիոքոս Սեչևկացոց թագաւորը երկու կուսակալ խրկեց, Արտաշատը մեծ հայոց վերայ, Գարեհէր վաբր հայոց վերայ: Աս աստեններս Աննիրազ կարբեդոնացոց զօրաստեար հռոմայեցոց ձեռքէն փախաւ Արտաշատին քով եկաւ: Արտաշատ անոր խորհրդովը շատ կարգաւորեց իր տէրութիւնը, և Աննիրազին արեւած ձեռովը Արտաշատ քաղաքը շինեց Երասխ գետին վերայ:

Արտաշատ և Գարեհէ տեսնելով որ հռոմայեցիք երթալով կրզօրանան, անոնց հետ դաշինք դրին ու Սեչևկացոցմէ գլուխ քաշելով ինքզինքնին թագաւորանուանեցին ու ըսկսան տէրութիւննին կարգաւորել:

Երբոր Անտիոքոս Եպիփան թագաւորեց Սեչևկացոց վերայ, իմանալով որ Արտաշատ ինքնագլուխ թագաւորեր է, վերան պատերազմի ելաւ: Արտաշատ յաղթուելով բռնի հնազանդեցաւ, ու շատ ըստակ խաւրեց հարկը վճարելու համար: Բայց կասկածելով թէ Գարեհէ կուսակալը պատճառ եղեր է աս բանիս, ուղեց Գարեհէին վերայ պատերազմի ելլել: Գարեհէ վախցաւ, շատ ընծաներով Արտաշատին սիրտը առաւ, և իր պղտի տղան դարանը անոր պատանդ խրկեց: Երբոր Գարեհէ մեռաւ, և Մորփիւղիկէս տղան տեղը յաջօրդեց, Արտաշատ ուղեց Մորփիւղիկէսին վերան երթալ, ու փոքր հալքը ձեռքէն առնել, Մորփիւղիկէս ալ

Ք. Ա Կապագոյ վիճակի Արեւթ թագաւորին ապաւինեցաւ: Ան ատենը Արտաշաս խորհուրդ տրւաւ Արեւթին որ Մորփիւղի կէսն ըստաննէ, խոստանալով որ ինքն ալ անոր Գարան եղբայրը կըստաննէ. ասանկով փոքր Հայոց կէսին ինքը՝ մէկալ կէսին ալ Արեւթը տիրեն: Բայց Արեւթ աս անգուծ խորհուրդին գէմ կեցաւ, ու Մորփիւղի կէսը թագաւորեցուց: Արտաշաս թէպէտ կուզէր նորէն Մորփիւղի կէսին վերայ ելլել, բայց մահը վերայ հասնելով արգիլեցաւ:

159 Տեղը անցաւ իր տղան Արտաւազդ որ տասը տարի թագաւորելէն ետքը,
149 Արշակ պարթևը եկաւ զինքը վաճառեց, ու իր Վաղարշակ եղբայրը Հայոց թագաւոր նստեցուց. որ է Արշակունեաց թագաւորութեան ըսկիցը:

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Հայոց տէրութիւնը կանգնելու համար ինչ առաքինութիւններ պէտք եղած են:

Պ. Ինչպէս ամեն տէրութիւն, ասանկ ալ Հայոց տէրութիւնը ըսկսելու և առաջ տանելու համար իրեք առաքինութիւն պէտք եղած է. ի՞նչ, Միաբանութիւն. ք, Կարգի կանոնի հպատակութիւն. ք, Գըլ խաւորին վերայ սէր: Ասոնցմով տէրութիւնը հաստատուեցաւ, քաջութեամբ ալ մեծցաւ ընդարձակեցաւ. ինչպէս ո՞ր

յայանի կերևնայ Հայկին, Արամին, Տիգրանին, և ուրիշ քաջ նահապետներուն ըրածներէն :

Հ. Հին ատենը Հայաստանի շէնքերը ինչպէս էին :

Պ. Թէպէտ Հայաստանին հիմակեան վիճակէն ամենեկին չիմացելը անոր շէնքերուն հին ատենը ինչպէս ըլլալը, բայց շատ հաւանական է թէ խիստ մեծագործ բաներ եղած են : Ասիկայ կիմացելի մէյմը ինչեան հիմա ասդիս անդին մնացած աւերակներէն ու շէնքերէն . երկրորդ Բաբելոնի աշտարակին շինուելուն պատմութենէն . երրորդ՝ անատենի իշխաններուն մեծագործութեան ջանքէն, որ շատին վերայ յայանի կերևնայ . ասոր ալ մէկ նշանը ան է որ իրենց շէնքերուն քաղաքներուն վերայ իրենց անունը կրդնէին որ յիշատակնին ու փառաւոր անուննին չիմոցրելի :





ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ

Ժ

- Բ. Ա. Տ. ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ահրուժիւնը
 Խնչալէս ըսկսաւ :
- 246 Պ. Պարթևներուն ցեղէն Արշակ ա-
 նունով իշխան մը ապստամբեցաւ Սելև-
 215 կացոցմէ, ու տիրեց Պարթևաց, Մա-
 189 րաց ու Պարսից վերայ: Անոր յաջորդեց
 Արտաշէս. ետէն Արշակ երկրորդ, որ
 149 շատ տեղերու տիրելուն համար Արշակ
 մեծ ըսեցաւ: Ասիկայ իր թագաւորու-
 թեան քառասներորդ տարին եկաւ հայ-
 ոց վերայ, փախուց Արտաւազգը ու մեծ
 հայոց և փոքր հայոց վերայ տիրեց ու իր
 Վաղարշակ եղբորը յանձնեց:
- 147 Ան ատենը Վաղարշակ գնաց իր աթո-
 ուր Մծբին քաղաքը դրաւ: Կովկասային
 ազգերը ու Պոնտացիները ըսելով Ար-
 շակին ըրած յաղթութիւնները, սպառե-
 ըրազմի պատրաստուեր էին, իրենց առաջ-
 նորդ ընտրելով Դարեհ կուսակալին տը-
 ղան Մորփիւղիկէսը. անոր համար Վա-
 ղարշակ ալ զօրք թողվեց ու վերանին
 սպառերազմի ելաւ: Մորփիւղիկէս որչատ
 կարիճ էր, սղինձէ ու երկըթէ զրահներ հա-

դած, շատ մարդ ըստաննելով շիտակ
Վաղարշակին վերան վաղեց, բայց Վա-
ղարշակին քովի քաջերը զարկին ըստան-
նեցին Մորփիւղիկէոր. ասով սրատերազ-
մը լմնցաւ, ու Վաղարշակ բոլոր ան
կողմի տէրութիւններուն տիրեց ու հար-
կատու ըրաւ :

Հ. Վաղարշակ Մորփիւղիկէսին յաղ-
թելէն ետքը ինչ կարգաւորութիւն ըրաւ
Հայաստանի մէջ :

Պ. Վաղարշակ Հայաստանին դեղե-
ցիկ գիրքերուն հաւնելով, մէջի բնակիչ-
ներուն կարրճութեանն ու հաւատար-
մութեանը վերայ ալ զարմանալով, շատ
սէր կապեց ան երկրին վերայ :

Էն առաջ ուղեց իմանալ Հայոց ազ-
գին ըսկիզբը և անոնց գլխէն անցածները :
Ասոր համար Մարիբաս Կաաինա անու-
նով ասորի մարդուն ապսպրրեց, որ Հայոց
պատմութիւնը գրէ : Երբոր Մարիբաս Հայաս-
տանի մէջ Հայոց պատմութիւնը ամբողջ
չիգտաւ, Վաղարշակ զինքը իր եղբօրը
Արշակին խրկեց, որ անոր հրամանովը
երթայ Մարիբաս Նինուէի գրքատուննե-
րուն մէջ Հայոց պատմութիւն վնտրուէ :
Հոն գտաւ Մարիբաս Կաաինան Հայու
պատմութիւնը ինչչան Վահէ ու բերաւ
Վաղարշակին : Ետքը ուրիշ տեղերէն
ալ ուրիշ պատմութիւններ գտնելով
ինչչան իր ատենը՝ անոնք ալ կարգաւ
գրեց :

Անկէ ետքը Վաղարշակ ըսկաւ նոր

Ք. Ա կարգեր հաստատել, նախարարութիւնն ներքաժնել, զինուորութեան կարգ դրնել, և ամէն բանի պաշտօնատէրներ որոշել :

Երկու հոգի ալ ընտրեց իրեն յիշեցնող. մէկը ան որ երբոր ինքը անիրաւ հրաման մը տայ, ազէկը իրեն գրով խմացընէ. մէկալն ալ երբոր ինքը թոյլ կենայ պատժելու, միտքը ձգէ իրեն արգարութիւնը¹ : Բազարատ անունով խորհրդականին ալ իշխանութիւն տրւաւ որ որդւոց որդի թագադիր ըլլան արշակունի թագաւորներուն : Իր տղոց մէջը կարգ դրաւ որ միայն անգրանիկը իր քովը կենայ թագաւորութեան յաջորդելու համար, իսկ մէկալնոնք հաշտենից գաւառը երթան բնակին : Աս կարգս պահեցին արշակունի թագաւորները :

127 Աղաբշակ ասանկով քսաններկու տարի թագաւորելէն ետքը մեռաւ ու իրեն յաջորդեց անգրանիկ տղան Արշակ առաջին :

1 Ազէի ճանչօեց եր Ալաշարայի. Թե իբրեւ ճարտաս շաք անգամ Ժոտո Բանը շիպաիի քեշ ընել իոպայ. և թէից որչափ ալ իտեւոյի սարգուր ըլլայ, թէպ իտրհոտրք քըւոշի կարօք է : Աշխարհիս թէլ իտիսք շաք իտիաներոս պապ ճառը ճարտաս իր կարծիքը ասանք քանիւ և ոտիշիտ կարծիքը Լեւելու-ընէն է, և ըստ ընել իմանալ Թե գոյե էր կարծիքն շիպաի ոտիշ կարծիք ալ իս :

ԺԱ

Հ. Արշակ առաջին ինչպէս քշեց թափաւորութիւնը :

Պ. Խելքով ու կարրճու թեամբ՝ վազարշակին նման, ու շատ նոր կարգաւորութիւններ ալ ըրաւ : Պոնտացոց գէմ սպատերազմ բացաւ, և իր յաղթութիւններուն նշան ծովուն քովերը արձան տնկեց : Վրսեն թէ նիզակ մը ունէր օձի արիւնով ջուր տըւած, ան նիզակը օր մը զարկաւ արձանին մէջը խոթեց. Պոնտացիք ալ ան արձանը ըսկօան սաշտել իբրև աստուծոյ գործք. բայց երբոր Արտաշէսին ու Պոնտացոց մէջ նորէն թշնամութիւն մտաւ, բարկացան Պոնտացիները ու արձանը ծովը նետեցին : Արշակ Բաղրատունիներէն երկու հոգի նահատակեց՝ կուռք չիպաշտելուն համար : Մէկալ Բաղրատունիներն ալ ստիպեց որ գոնէ օրէնքնին չիպահեն :

Արշակ տասիրեք տարի թագաւորելէն ետքը մեռաւ. ու տեղը նստաւ իր տղան Արտաշէս առաջին :

Հ. Արտաշէս առաջին ինչ երևելի գործք ըրաւ :

Պ. Արտաշէս առաջին խիստ սպատերազմասէր ու կարիճ ըլլալով, շատ յաղթութիւններ ընելէն ետքը, Պարսից թագաւորն ալ նեղը խոթեց ու իր երկրորդը ըրաւ : Որովհետև ինչւան ան ատենը Պար-

125

114

112

Ք. Ա սից թագաւորը աւաջին կրեպուէր և
 Հայոցը երկրորդ, Արտաշէս իր անունով
 վը Պարսկաստանի մէջ ստակ կտրել տը
 ւաւ, իր Տիգրան որդին Արաժ իշխանին
 յանձնեց որ զինուորական արհեստ սոր
 վեցրնէ : Իր Արտաշամ աղջիկը կարգեց
 Պարսից ցեղէն Միհրդատ անունով քաջ
 նախարարին հետ, Միհրդատն ալ Պոն
 տոսի կողմերուն իշխան դրաւ :

89

Ետքը Արտաշէս հրաման հանեց շաա
 զօրք ժողովելու, ու ըսկաւ արևմտեան
 ազգերուն վերայ երթալ : Զօրաց թիւը
 անհամար էր. երբոր քարոս տեղէ մը
 կանցնէր, հրաման կուտար որ մարդ գլուխ
 մէյմէկ քար նետեն դաշտին մէկ կողմը,
 որ բլուր մը կրճեանար : Երբոր բոլորը
 մէկէն նետ կրնետէին, նետերուն շատու
 թենէն արև ատեն դետինը շուք կը լար :
 Ասանկ անթիւ զօրքով վազեց ինչևան Յու
 նաստան, Մոուայի կողմերուն ալ տիրեց.
 Կրեսոս լիւդացւոց թագաւորը բռնեց ու
 տասակել տուաւ : Արտեմիսին՝ հերակ
 լեսին և Ապողոնին սղնձէ արձանները
 գտաւ՝ Արմաւիր խաւրեց :

89

Ասկէ ետքը Արտաշէս դարձաւ Հայաս
 տան, իր որդին երկրորդ Տիգրանը Հայ
 ոց թագաւոր նստեցուց՝ ու ինքը Պարս

1 Յոանաց պապի ընէրէն ոմանք աս բանս
 Կիւրոս ըրաւ ի ըսեն, Բայց մեր Խորենացիին
 Արտաշէսին վերայ ի ըպապմէ՝ Յոանաց ուրիշ
 ին պապի ընէրէն ասանելով :

կատտան գնայ : Եսև ուղեց նորէն դէպ'ի արևմուտք երթալ, ու ալ աւելի տեղւանքներու տիրել, և ան միջոցին Յու նատտանի կուռքերէն շատը Հայաստան բերել առաւ : Չիգիտցըւիր թէ ինչո՞ւ համար խռովութիւն ինկաւ զօրքին մէջ, որ զինքը ըսպաննեցին քսանըհինգ տարի թագաւորելէն ետքը :

Արտաշէս կրթըւած էր կառավարութեան գործքերուն մէջ. ասոր համար նախ իրողուն կրթութեանը հոգ տարաւ, ետքը իր ազգին հանգստութեանը : Ինքն որ կուղէր ասդիս անդին ստարաիլ, Հայաստանը չիթողուց առանց թագաւորի : Բայց իր փառասիրութեանը չիկրցաւ չափ դնել. անոր համար ամսոսաց ինքզինքը ուրսաւ, « Աւաղ փառացս անցաւորի » :

ԺԲ

Հ. Արտաշէս առաջին մեռնելէն ետքը Հայոցտէրութիւնը ինչ վիճակ ունեցաւ :

Պ. Արտաշէսին քովի զօրքերը բոլոր ցրուեցան, և հոռմբները ապստամբեցան, ըսկասն Հայաստանին վերայ վազել՝ վրէժ առնելու համար, կարծելով թէ Հայերը անտէր մնացին : Բայց Տիգրան երկրորդ երկու տարի առաջ թագաւոր նստած ըլլալով, երբոր ընց հօրը մահը և Յունաց ապստամբութիւնը, մէկէն զօրք ժողվեց, ըսկասաւ վերանին երթալ ու զամէնքը հալածեց : Եւ որպէս զի նորէն չիկարե-

նան խոռովութիւն հանել, Միհրդատ իր քեռայրը իրեն փոխանորդ ըրաւ ու Պոնտոսի թագաւոր անուանեց որ աղէկ մը նուաճէ Հոռմընէրը :

Ինքը Տիգրան դարձաւ Հայաստան, ու ըսկաւ էն առաջ մեհեաններ շինել. Արամազդայ արձանը Անիին մէջ դրաւ, Աթենասինը Թիլաւանին մէջ, Արտեմիսինը Երիզայի մէջ, Եփեսոսոսինը Բագաուիջին մէջ, Ափրոդիտէինն ալ Հերակլէսին բովը Աշտիշատ ըսւած տեղը, ուր որ շատ զոհեր կընէին : Ահա՛ սոնի քուրմերը իրենց իշխանութենէն ձգեց, Հերակլէսին արձանը առանց հրամանի իրենց երկիրը տանելնուն համար : Եւ հրամանց որ ամմէն նախարարները կուռքերուն պէտք եղած պատիւը ընեն : Եւ որովհետեւ Բագրատունիք յանձն չառին, Ասուդ նախարարին լեզուն կտրել առաւ, և զօրապետութեան իշխանութիւնը ձեռքերնէն առաւ. միայն թագադիր ըլլալուն պատիւը թողուց վերանին, որովհետեւ յանձն առին խողի միս ուտելու : Ետքը Տիգրան Միջագետք դնաց, և հոն Ասորւոց Բարշամ կուռքին արձանը՝ որ էր փղոսկրէ՝ արծաթով և բիւրեղով շինած՝ Թորդան խրկեց :

Անկէ անցաւ դէպի Ասորեստան, անոնց Սեղենէ թագուհին բռնեց ըսպաննեց : Հրէից Աղէքսանդրա թագուհիէն ալ շատ ըստակ առնելով և շատ Հրէից դէրիններով ետ դարձաւ, ըսելով թէ Ասյ-

կուն բռնաւորը Հայաստանին վերայ Ք. Լ.
կուգայ :

Տիգրան երկրորդը տիրեց ասգիս ան-
դին շատ ազգերու, որով իր անունը խիստ
մեծցաւ. գերի ըրած Թագաւորները իրեն
կրճաւայէին. անոնցմէ չորս Թագաւոր ալ
իրենց Թագաւորական զգեստովը ոտքի
վերայ գիմացը բարև բռնած կրկենային :

Հ. Մինրդատ երբոր Տիգրան երկրոր-
դին փոխանորդը եղաւ, ինչ երևեւի
գործք ըրաւ :

Պ. Մինրդատն ալ Տիգրանին պէս զօ-
րաւոր ըլլալով տիրեց քսանւերկու Թա-
գաւորներու վերայ, ինչւան մեծ Թա-
թարներուն, և ամէնուն հետ կրիսուէր
իրենց լեզուովը առանց Թարգմանի :

Մինրդատ Կասպագոյլկացոց ալ տի-
րեց, իր ութը տարւան Արիարաթ անու-
նով տղան անոնց Թագաւոր դրաւ, ու
Գորդիաս իշխանին յանձնեց : Կասպա-
գոյլկացիք գիմեցին Հռոմայեցոց, ա-
նոնք ալ եկան վաւրեպեցին Գորդիասը ու
Արիարաթը :

Ան ատենը Մինրդատին աղաչանքովը
Տիգրան զօրք խրկեց ու նորէն փախուց
Հռոմայեցիները, ու Մինրդատին տղան
Արիարաթը նստեցուց :

Մինրդատ սիրտ աւաճ և Հռոմայեցոց
վերայ նեղացած, շատ զօրք ժողովեց,
իրէքհարիւր ալ նաւ, ու ըսկսաւ բոլոր
փոքր Ասիային տիրել :

Հռոմայեցիք շատ զօրք խրկեցին Մի-

հրրդասին վերայ, բայց բոլորն ալ ջարդու-
 ւեցան: Եւ անոնց զօրասպետը Ահիւ-
 ղաս անուանով որ Պերգամոն փախեր էր,
 բռնեց Միհրդատ ու հալեցուցած ոսկի
 լեցրնել տուաւ բերնէն վար:

Ասանկ Միհրդատ ու Տիգրան շատ
 պատերազմներով հռոմայեցիներուն յաղ-
 թեւէն ետեւ, անգամ մը Միհրդատ Աիւ-
 ղիկոն քաղաքը պաշարեց, որն որ հռո-
 մայեցւոյ ձեռքն էր, և պատերազմը եր-
 կրննալով իրենց պաշարը հատաւ. երբոր
 ցրուեցան ապրուստ գտնելու, հռոմայե-
 ցոց Ղուկուղղոս զօրավարին սիրար խխտ
 այրած ըլլալով, կատաղութեամբ վերա-
 նին վազեց ու մեծ ջարդ տուաւ, անանկ
 որ Միհրդատ կտրըճութեամբ պատե-
 րազմելով հազիւ կրցաւ իր զօրքովը Պոն-
 տոս քաշել. և այսպէս Ղուկուղղոս
 ըսկսաւ տիրել Միհրդասին երկիրներուն
 վերայ:

Միհրդատ երբոր նորէն հռոմայեցոց
 դէմ ելաւ, զօրքին մէջ խռովութիւն
 կննալով շատ զօրասպետներ հռոմայեցոց
 կողմը անցան. և Միհրդատ Տիգրանին
 ապաւինեցաւ: Տիգրանն ալ օգնելու տեղ
 բարկացաւ անոր յաղթուելուն վերայ:

ԺԳ

Հ. Միհրդատ Ղուկուղղոսէն յաղթուե-
 լէն ետքը ինչ ըրաւ:

Պ. Ղուկուղղոս խմանալով որ Միհրդատ
 Տիգրանին քով գացեր է, մտրդ խրկեց

Տիգրանին ուր Մինճրդատը իրեն ձեռքբերտայ: Բայց Տիգրան չէ թէ միայն չհոուաւ, այլ և Մինճրդատը տասը հազար ձիաւոր զօրքով Պոնտոս խրկեց: Ղուկուղղոս երբոր իմացաւ, կատղած գնաց Տիգրանակերտը պաշարեց: Տիգրան ալ իրէքհարիւր վաթսուն հազար զօրքով վերան գնաց, ու արհամարհելով ըսաւ. « Հռոմայեցոց համար, « թէ որ դեսպան են եկեր, շատ է այսչափ մարդ, թէ որ թշնամի՝ քիչ է »: Աս ըսելով անհոգեղաւը իր զօրքին շատու թեանը և կարճու թեանը վերայ վստահացած: Ղուկուղղոս գիտնալով անոր միտքը, յանկարծ վերան վազեց, ցրուեց փախուց Տիգրանը. անկէց դարձաւ Տիգրանակերտին վերայ ու առաւ քաղաքը:

Տիգրան նորէն զօրք խրկեց Ղուկուղղոսին վերայ, ու ասով յաղթեց Ղուկուղղոսին, և ինչւան Կասպագոյվկիս փախուց: Տիգրան ուղեւով Հռոմայեցիներէն աղէկ մը վրէժ առնել, Մինճրդատը սպարապետ դրաւ ու շատ զօրքով վերանին խրկեց: Ինքն ալ վազեց Կասպագոյվկիոյ վերայ տիրեց, ու Ղուկուղղոսը փախուց: Հռոմայեցիք նեղանալով աս բանիս վերայ Ղուկուղղոսին տեղը Պոմպէոսը խրկեցին Մինճրդատին վերայ:

Հ. Մինճրդատ կրրցաւ յաղթել Պոմպէոսին:

Պ. Չէ. վասն զի Կաստոր նախարարը Հռոմայեցոցմէ կաշառ առած՝ Մինճրդատէն ասպատամբեցաւ, նոյնպէս իր տղան

Ք. Ա ալ Փառնակէս Հռոմայեցոց կողմը բռնելով թագաւորեց հօրը դէմ, ու ըսկաւ հօրը վերայ սլաօտերազմի ելլել: Անանկ որ Միհրդատ էն ետքը ամրոցի մը մէջ սլաշարւած մնաց. երբոր ճարը հասաւ, ամէն իր ընտանեացը թոյն խրմցուց, ինքն ալ խրմեց. ափսոս, ինչ կատաղութիւն, ինչ խեղճութիւն: Բայց քանի որ թոյնը իրեն չէր աղգած՝ տեսնալով որ թշնամիք կոխեցին բերդը, ինքզինքը թըրով ըսպաննեց:

95

Անանկ կողքիճ մարդը որ յիտուն տարիէն աւելի աշխարհի դողացուց ու ամէնուն յաղթեց, իր աղգին և իր տղուն ապերախտութենէն յաղթըւեցաւ: Ինքը այնչափ աշխատանքով փառք և հանգստութիւն պատրաստեց աղգին և որդւոյն, բայց իր որդին առ մեծ ապերախտութեամբ բոլոր հօրը աշխատանքը, յաղթութիւնները և աղգին փառքը փրճացուց մէկ տարւան մէջ, և ամէնէն աւելի ինքզինքը յաւիտենական նախատինքի մէջ ձգեց:

Հ. Տիգրան Բ երբոր լսեց Պոմպէոսին գալը, ինչ ըրաւ:

Պ. Ան ատենները Միհրդատին մեռնելէն առաջ Տիգրանին որդին Տիրանն ալ սպառամբեցաւ, և Պարսից Արշէզ թագաւորին ապաւինելով, եկաւ սլաշարեց Արտաշատ քաղաքը: Տիգրան վերան վաղեց ու վերնտեց Տիրանը. ան ատենը Տիրան նեղը մանելով Պոմպէոսին ինկաւ: Պոմպէոսն ալ Տիրանին առաջ նորդելովը հայաստան մըտաւ:

Տէս թէ ո՞վ ըսկաւ թշնամիներուն Բ. Ա սորվեցրնէլ, որ Հայաստանը ուրբի տակ առնեն: Տիգրան տեսնելով որ նախարարներուն անմիաբանութենէն չիկրրնայ պիտի գլուխ ելլէլ, Պոմպէոսին հետ հաշտութիւն ըրաւ, ու Ասորոց և Փիւնիկեցոց երկիրները, Կապադովկիային և Կիլիկիային մէկ մասը Հռոմայեցոց տուաւ: Եւ այսպէս Պոմպէոս Միհրդատին երկու տղաքը փոքր Միհրդատը և Արշակը գերի ըրած դարձաւ Հռոմ: Ան ատենը Տիգրան Միջագետքը ըլլալով, Հայոց վերայ թագաւորացոց իր տղան Արտաւազգը: Եւ երբոր Միհրդատայ մահը ըսեց, սուգ մտաւ: Երբոր Գաբիանոս Պոմպէոսին տեղը եկաւ, Տիգրան Հռոմայեցոցմէ վրէժ առնելու համար Գաբիանոսին վերայ սպառերազմի ելլաւ, ու նորէն շատ տեղ անոր ձեռքէն առաւ: Ասկից վախնալով Գաբիանոս՝ հաշտութիւն ըրաւ, ու դադարուկ ետ տուաւ Միհրդատին տղաքը, ու ինքը Եգիպտոս գնաց:

Հ. Տիգրան երկրորդ Գաբիանոսին յալթելէն ետքը դադրեցաւ Հռոմայեցոց դէմ սպառերազմելէն:

Պ. Չէ. վասն զի Գաբիանոսին տեղը եկաւ Կրասոս, որ նախ գնաց Երուսաղէմ ու տաճարին գանձը կողոպտեց. անկէ եկաւ Տիգրանին դէմ: Տիգրան զարկաւ բոլոր զօրքը ջարդեց, զինքն ալ ըսպաննեց ու ամէն ունեցած գանձերն ալ կողոպտեց: Բայց էն ետքը տիրեցին Ա

Բ. Ա սորւոց երկրին : Տիգրանին ծերութեան ատենը Հռոմայեցիք եկան նորէն : Տիգրան վախնալով որ չըլլայ թէ Հռոմայեցիք գան Հայոց երկիրներն ալ առնեն , Արշէղ Պարսից թագաւորին հետ ուղեց հաշտութիւն ընել , խոստանալով որ նախագահութիւնը նորէն Արշէղին ապա : Արշէղ յանձն առաւ հաշտութիւնը , ու շատ զօրք իրեն օգնութիւն խրկեց : Տիգրան ամէն Պարսից և Հայոց զօրքին գլուխ դրաւ Բարդափրան քաջ զորասէտը :

ԺԶ

Հ. Բարդափրան զորասէտը ինչ քաջութիւններ ըրաւ :

Պ. Նախ գնաց տիրեց բոլոր Ասորւոց ետքը Արիատորուղին տղուն Անտիգոնոսին հրաւիրելովը գնաց Հրէաստան , և կաշառքի սիրուն համար մէկ քանի խարդախութեան գործքերով սրասերազմ ըրաւ : Մտաւ Երուսաղէմ և Հիւրկանսոր ուրիշ Հրեաներուն հետ մէկտեղ Տիգրանին բերաւ : Երբոր աս բաներս լսեցին Հռոմայեցիք , եկան նորէն Ասորւոց տիրեցին : Հայերը Պարսից հետ մէկտեղ նորէն Սիղզա զորասէտին վերան ելան ու փախուցին Հրէաստան :

35 Աս միջոցին մեռաւ Տիգրան Բ վաթսունը չորս տարւան , երեսուն իրեք տարի թագաւորելէն ետեւ :

Հ. Տիգրան երկրորդին մեռնելէն ետքը Հայերը ինչ վիճակ ունեցան :

Պ. Տիգրանին տեղը անցաւ անոր տղան Արտաւազդ Ա, որ ինքզինքը բոլորովին կերուխումի տուած ըլլալով, ամենևին քաջութեան ետևէ չեղաւ: Ան ատենը Անտոնինոս Հռոմայեցոց զօրատեալը լսելով իրենց զօրացը յաղթելը և Տիգրանին մահը, բարկացած եկաւ Ասորւոց երկիրը ու շատ տեղւանք տիրեց: Հայերը տեսնելով Արտաւազդին անհոգութիւնը, ըսկսան տրանջալ: Անկէ գրգռուած Արտաւազդ մէկէն շատ զօրք հանել տուաւ ու գնաց Միջագետք վաճառեց ցրուեց Հռոմայեցիները:

Հ. Արտաւազդ Միջագետքը Հռոմայեցոց ձեռքէն առնելէն ետքը կըրցան բոլորովին անոնց դէմ դնել:

Պ. Չէ. ինչու որ Անտոնինոս երբոր լսեց, կատղեցաւ ու շատ զօրքով Արտաւազդին վերան եկաւ, Արտաւազդն ալ վախնալով հաշտութիւն խօսեցաւ: Ան ատեն Անտոնինոս ուզելով Պարսից վերայ երթալ, Արտաւազդէն օգնութիւն ուզեց. Արտաւազդ ալ խոստացաւ օգնելու, բայց գաղտուկ Պարսից օգնեց. անանկ որ Անտոնինոս Պարսիկներէն յաղթելու Նգիսպտոս փախաւ. երբոր Արտաւազդին խարդախութիւնը իմացաւ, շատ զօրքով ելաւ անոր վերայ. առջի բերան ուզեց խաբելով խաբխրբելով բռնել Արտաւազդը, այնչափըրաւ որ էն ետքը բռնեց զինքը, ոսկի շղթայի զարկաւ, ընտանիքովը մէկտեղ Նգիսպտոս կղէտպատրա

Ք. Ա թագուհին տարաւ . ետքը դարձաւ տիրեց բոլոր Հայաստանին . ստորին Հայաստանը իր Աղէքսանդր տղուն յանձնեց, վերինն ալ Մարաց տուաւ . իր անունով Եփեսոսի մէջ ըստակալ կոխել տուաւ՝ վերան տալած, Անտոնինոս յաղթող Հայաստանի : Ասով կիմացւի որ ուրիշները Հայոց տիրելը մեծ բան կրսեպէին . բայց ասոնս որ ազգը իր յարգը չէր գիտեր :

Հ. Առաջին Արտաւազդին բռնրւէլէն ետքը Հայաստան զրջափ ատեն անտէր մնաց :

Պ. Խիստ քիչ . որովհետեւ Անտոնինոս երկու իրեք տարիէն ետեւ Օգոստոսէն յաղթըւած ինքզինքը ըստաննեց . և Աղէս պատրա թագուհին ալ կատաղութենէն Արտաւազդին գլուխը կտրել տուաւ :

30 Ան ատենը Արշամ Տիգրանին եղբօրը որդին՝ որ Արտաւազդին բռնրւած ատենը, տեղը թագաւորեր էր ու Հռոմայեցոց ձեռքէն Պարսկաստան փախեր էր, դարձաւ Արշէզ Պարսից թագաւորին հետ մէկտեղ Մարերը վաւնտեցին, և Արշէզ տիրեց վերին Հայաստանին, Արշամն ալ անցաւ ստորին Հայաստան, և Հռոմայեցոց աղէկ ջարդ մը տալով Պարսից օգնութեամբը, տիրեց ինչւան Աեոսարիա :

ԺԵ

Հ. Արշամ ինչպէս քչեց թագաւորութիւնը :

Պ. Արշամ երբոր ըսեց թէ Օգոստոս
 Հռոմայու կայսր եղաւ, անոր դէսպան
 խրկեց՝ Արտաւազդին երկու տղաքը ուղե-
 լու, բայց Օգոստոս նեղացած ըլլալով
 Արշամայ վերայ՝ մրտիկ չբրաւ: Անատենը
 Արշամ վախնալով, նորէն դէսպան խրկեց,
 խոստանալով հարկ տալու: Ասիկայ առա-
 ջին անգամն է որ հայերը ըսկսան հար-
 կատու ըլլալ օտար ազգերու: Օգոստոս
 աս դաշինքը յանձն առաւ: Մէկ քանի
 տարիէն երբոր Օգոստոս կայսրը Ասորես-
 տան եկաւ, վերին հայաստանին հայե-
 րը ձանձրացած Պարսից տուած նեղու-
 թենէն, Օգոստոսէն՝ խնդրեցին որ Ար-
 տաւազդին տղան փոքր Տիգրանը իրենց
 թագաւոր դնէ. Օգոստոս կատարեց ա-
 նոնց խնդիրքն ալ: Արշամ ասանկ խաղա-
 ղութեամբ քսանըինը տարի թագաւո-
 րելէն ետքը մեռաւ:

Հ. Արշամին տեղը ո՞վ յաջորդեց:

Պ. Աբգար իր որդին. որ խիստ խե-
 լացի և քաղցրաբարոյ ըլլալուն համար՝
 ըսկսան իրեն Աւագ այր կոչել, որ ետքէն
 գէշ հնչուէլով եղաւ Աբգար:

Ան օրերը Օգոստոս կայսրը աշխարհա-
 գիր ընելով բոլոր ակրած երկիրներուն
 վերայ, իր սպասկերն ալ խորկեց որ ամէն
 մէհեաններու մէջ դնեն: Հերովդէս հրե-
 ից թագաւորը ուղեց որ իր սպասկերն ալ
 մէկտեղ կանգնեն, և Աբգար յանձն չա-
 առաւ: Հերովդէս նեղացաւ, շատ զօրքով
 խրկեց վերան իր եղբորորդին: Աբգար դի-

Ք. Ե մացնին ելաւ, զամենքն ալ ջարդեց
ցրուեց: Հերովդէս ալ ան օրերը հոգին
փչեց:

Հ. Հերովդէսին մեռնելէն ետքը Աբգա-
րին դէմ թշնամութիւն ընող չի գտնու-
ւեցաւ:

Պ. Հերովդէսին կուսակիցները ըսկսան
Օգոստոսի ամբաստանութիւն ընել Աբ-
գարու վերայ: Աբգար տեսնելով որ բանը
2 գէշի պիտի երթայ, ելաւ հռոմ գնաց:
Օգոստոսին սիրտը անանկ կապեցաւ
Աբգարին հետ իր խելացութեանը համար՝
որ չէր ուզէր զինքը քովէն զատել. բայց էն
վերջը շատ դժուարութեամբ խաւրեց իր
երկիրը:

Օգոստոսին մեռնելէն ետեւ Աբգար
երբոր բարեկամութեան դեսպան խրկեց
Տիբերիոս կայսեր, անիկայ Հերովդէսին
եղբօրորդւոյն մահուանը վրէժը խնդրե-
լու համար դեսպանները պատժեց: Աբ-
գար կատղեցաւ աս բանիս վերայ ու
ըսկսաւ պատերազմի պատրաստութիւն
14 տեսնել, անոր համար Եդեսիա քաղաքին
ամրացուց ու Մծքինէն հոն փոխեց թա-
գաւորական աթոռը, կուռքերը ու դի-
ւանները:

Ան օրերը Արշաւիր Պարոնից թագաւո-
րին մեռնելովը՝ տղոցը մէջ խռովութիւն
կնալով, Աբգար զօրքով վերանին գնաց
21 զիրենք խաղաղցրնելու՝ և հոն բորտու-
թիւն ունեցաւ, անոր համար չի կրցաւ
մտաքի դրածը առաջ տանիլ: Միայն

զօրքով օգնեց Արաբացւոց Արեւ թա-
 գաւորին հերովդէս չորրորդապետին
 դէմ, անոր աղջկանը անարդէւելուն սպա-
 ճառաւ . որոնք գացին յաղթեցին հե-
 րովդէսին: Երբոր ասպտամբուլթեան ձայ-
 նը հասաւ Տիբեր կայսերականջը, Աբգար
 դէսպաններ խրկեց Պաղեստին հռո-
 մայեցոց զօրասպետին՝ զինքը արգարա-
 ցնելու համար . ասոնք ետ դառնալու
 ատեն՝ տեսնելով Քրիստոսի հրաշքները
 եկան Աբգարին սրատակեցին:

Ժ. Զ

Հ. Աբգար երբոր լսեց Քրիստոսի
 հրաշքները՝ ինչ ըրաւ:

Պ. Միտքը գնելով թէ անիկայ պիտի
 ըլլայ Աստուծոյ որդին, Անանէ իր սուր-
 հանդակը թղթով Յիսուսին խրկեց՝ ազա-
 ճելով որ գայ զինքը բժշկէ, և անզգամ
 հրեաներուն ձեռքէն ազատէ: Հետեր-
 նին սրատկերահան մըն ալ դրաւ, որ թէ որ
 ջուղէ գալու, Յիսուսին սրատկերը քաշէն
 իրեն բերեն:

29

Յիսուս Թովմաս առաքելոյն ձեռքովը
 սրատասխան գրել տուաւ, խոստանալով
 որ համբառնալէն ետքը աշակերտներուն
 մէկը կը խրկէ՝ զինքը բժշկելու: Պատկե-
 րահանը ուղեւով գաղտուկ քաշելու Յի-
 սուսին դէմքը, շատ կաշխատէր, բայց չէր
 կրնար նմանցնել: Յիսուս կանչեց սրա-
 տկերահանը, առաւ դաստառակը երեսին

դըսուց, և իր պատկերը անոր վերայ տը
պաւորած ձեռքը տուաւ որ տանի:

Հ. Յիսուս որ առաքեալը խրկեց Ադե-
սիա Աբգարը բժշկելու:

Պ. Թովմաս առաքեալը Յիսուսին
հրամանովը խրկեց սուրբ Թագէտսը, որ
եօթանասուն աշկերաներուն մէկն էր,
գնաց Աբգարը ու բոլոր քաղաքացիներն
ալ մկրտեց, կռատուններն ալ, գո-
ցել տուաւ: Ետքը իր տեղը Հայրասպետ
օծեց Ադգէն, թագաւորին խոյրարարը, ու
ինքը Աբգարին թղթովը գնաց Սանաս-
րուկին ալ քարոզեց, որն որ Աբգարու-
բրոջը տղան էր, ու քրիստոնէ ըրաւ:

Հ. Աբգար Քրիստոսի հաւտալէն ետքը
ի՞նչ երևելի գործք ըրաւ:

Պ. Աբգար քրիստոնեայ ըլլալէն ետքը
իրեք տարի միայն ապրեցաւ. և ան միջոցին
Յիսուսին համար երկու թուղթ գրեց
Տիրեր կայսեր, մէյմէկ թուղթ ալ Պար-
սից և Ասորոց թագաւորներուն: Եւ
ինքը երեսունըութը տարի թագաւորելէն
ետեւ սուրբ մահուամբ մեռաւ: Եւ խեղա-
ցուծիւնը ցրցուց նաև իր հաւատքին մէջ.
և անանկ խեղացուծեան գործք մը ըրաւ,
որ նոր ամենեկին մէկ թագաւոր մը չէր
կրնար անցնիլ, և պարծանքը ձեռքէն
առնուլ. վասն զի ինքն է մինակ Քրիստոսի
ժամանակակից՝ Քրիստոսի հաւտացող ու
մկրտըւող թագաւոր: Եւ մեր ազգին որ
չափ որ պարծելու բան է Հայկայ ձեռքով
կռասպաշտութեան գլխուն՝ այսինքն՝ Աեր-

րովթին ըսպաննելը , այնչափ ալ աւելի Բ. Ե
 փառք է մեր ազգին Աբգարու ձեռքով էն
 առաջ քրիստոնէութիւնը ընդունելը :

Հ. Աբգարու մեռնելէն ետքը Հայոց
 վիճակը ինչպէս եղաւ :

Պ. Աբգար մեռնելուն պէս մեծ
 շփոթութիւն ինկաւ ազգին մէջը . մէյմը
 քրիստոնէութեան կողմանէ , որ Անանէ
 Աբգարու տղան մեհեանները բանալ
 տուաւ , ու ըսկսաւ քրիստոնէները հալա-
 ծել . Ազդէ Հայրապետին ալ հրաման տը-
 լաւ՝ որ ըսկսինորէն իրեն ալ խոյր շինել .
 ու երբոր յանձն չառաւ , Անանէ վերան
 զինուոր խրկեց որ եկեղեցին նստած
 քարոզ տալու առեն եկան զարկին՝ ոտվը-
 ները կարրտեցին ու մեռաւ : Ուրիշ խոռ
 վութիւն մըն ալ ելաւ թագաւորութեան
 կողմանէ , որ Սանատրուկն ալ Անանէին
 դէմ թագաւորեց Շաւարշան , հաւատքն
 ալ թողուց , ու ըսկսաւ զօրք ժողվել որ
 Անանէին դէմ ելլէ ու բոլոր Հայոց տիրէ :
 Բայց Անանէ իր պալատին մէջ սիւն մը
 կանգնել տալու առեն , սիւնը վերան
 ինկաւ ու զինքը ըսպաննեց : Սանատրուկ
 երբոր լսեց Անանէին մահը , ուրախացաւ
 ու ըսկսաւ գալ դէպի Միջագետք : Եդէ-
 սացիք վախնալով դեսպան խրկեցին ու
 երդում առին որ երբոր գայնէ իրենց
 հաւատքին չիդրպչի : Բայց Սանատրուկ
 երդումը ոտքի տակ առնելով բոլոր Աբգա-
 րու ցեղը ըսպաննեց՝ թողլով միայն աղջիկ
 ները և Աբգարու հեղինէ կինը : Աս հե-

ղինէ թագուհին անկէ ետև քաշեցաւ
 գնաց Երուսաղէմ. և սովուտարին աղքատ
 ներու խիտ շատ ցորեն բաժնեց . և երբ
 որ մեռաւ, Երուսաղէմի դրանք քով
 վերան փառաւոր գերեզման մը շինեցին :
 Իսկ Սանատրուկ քրիստոնէութիւնը ու
 ըանալով շատ մարդ նահատակեց . նաև
 թագէոս առաքեալը՝ որ ղինքը նորէն դար
 ձընելու համար Միջագետք եկեր էր, ու
 իր Սանդուխտ աղջիկը քրիստոնէութիւնը
 թողուլ չուզելուն համար ըսպաննեց . որ
 ամէն աղքաց քրիստոնէից մէջ, էն առջի
 կոյս մարտիրոսն է : Բարթուղիմէոս առա
 քեալին կաշին հանելով մեռցուց . իր
 քոյրն ալ Քրիստոսի հաւատալուն համար
 ըսպաննեց :

Հ. Սանատրուկ քաղաքական կառա
 վարութեան կողմանէ ինչ երևելի գործք
 ըրաւ :

Պ. Բոլոր ստորին Հայաստանի տիրէլէն
 ետքը շատ շինութիւններ ըրաւ : Մծբին
 քաղաքն ալ երբոր երկրաշարժութենէն
 խախտեցաւ, բոլոր փլուց ու նորէն շինել
 տուաւ առջինէն աղւոր, և իր արձանը մէջ
 տեղը կանգնել տուաւ՝ ձեռքը դրամ մը
 բռնած, ըսել ուզելով թէ գանձը հատուց
 քաղաքը շինելու համար : Երեսունը
 չորս տարի թագաւորելէն ետքը որսի
 ժամանակ դիսյուլաժով նետով զարնըե
 ցաւ մեռաւ : Ասանկով Սանատրուկ և Ա
 նանէ երկուքն ալ ըրած արիւններուն
 փոխարէնը գտան : Դրսի պատմիչներ Սա

նատուրուկը խիստ կը գովեն խելքի և քաջու Վ. Ե
Թեանը կողմանէ :

Ժ.:

Հ. Արդարու և Սանաարկոյ Թագաւոր
ու Թեան ատեն վերին Հայաստանին կա
ուսովարու Թիւնը որուն ձեռքն էր :

Պ. Արտաւազդին տղան փոքր Տիգրանը
մեռնելէն ետքը, Հռոմայեցիք Թագաւոր
նատուցին անոր Երուազ եղբայրը: Բայց
Հայերը ձգեցին Երուազը ու տեղը նրա
տուցին Տիգրան կրտսերը: Ետքը նորէն
Հռոմայեցիներէն ըստիպւած՝ ձգեցին
Տիգրան կրտսերն ալ ու դրին Ապրսամ
Արծրունին կարիճ մարդը. որ երբոր
մեռաւ, ըսկսան Պարսիկք և Հռոմայեցիք
իրարու ձեռքէ քաշքըշէլ՝ ուղածնին
Թագաւորեցնելով: Եւ երբոր Դարեհ
Պարսից Թագաւոր նստաւ, շատ զօրքով
եկաւ Հռոմայեցիները փախուց, Հաւ
միդդ անոնց նստուցած Թագաւորն ալ
մեկտեղ, ու իր Տիրիթ եղբայրը նստե
ցուց: Նորէն զօրք խաւրեց Ներոն կայսրը.
զարկին զարնրեցան, յաղթեցին յաղթը
ւեցան, էն ետքը Պարսիկք յաղթող
դանրեցան ու հաշտու Թիւն ըրին Հռո
մայեցոց հետ աս դաշինքով, որ նորէն Տի
րիթ նստի, բայց հարկատու ըլլայ Հռոմայ
եցոց. ուստի Տիրիթ մեծ փառքով Հռոմ
դնայ, Ներոնէն պատկեցաւ: Բայց երբոր

Բ. Ե Տիրիթ ալ մեռաւ, Երուանդ Սանատրուկին յաջորդը տիրեց վերին Հայոց ալ, անոր տեղը Միջագետքը Հռոմայեցւոց տալով:

Հ. Ո՞վ էր Երուանդ և ի՞նչպէս թագաւորեց:

68

Պ. Երուանդն էր արշակունի կնոջ մը տղայ՝ խիստ կարիճ և ահեղ կերպարանքով և անուշ բնութեամբ, որ շատ քաջութիւններ ալ ըրած ունէր Սանատրկոյ ատենը, անոր համար ալ սիրելի էր ամէն նախարարներուն: Երբոր մեռաւ Սանատրուկ, տեղը ինքը անցաւ, բայց առանց բազրատունիի ձեռքով թագ գնելու: Եւ վախնալով Սանատրուկին տղոցմէ որ չըլլայ թէ թագաւորութիւնը ձեռքէն առնեն, զամէնքն ալ ըստաննել տուաւ, բայց ի մեկ սղտի տղէ մը որ Սմբատ բազրատունին Պարսկաստան փախուց. որոնք պատուով ընդունեցաւ Դարեհ թագաւորը: Թէպէտ Երուանդ գրեց Դարեհի և Սմբատայ որ տղան մեռցրնեն, ըսելով թէ Մարի մը տղայ է, բայց տեսնելով որ խօսքը չանցաւ, մեծ վախի մէջ ինկաւ:

75

Հ. Երուանդ իր թագաւորութեանը ատենը ի՞նչ երևելի գործք ըրաւ:

Պ. Տիրիթ երբոր մեռաւ, որպէս զի ինքը աւելի ուժովնայ և Արտաշէսի կարենայ գէմ գնել, Հռոմայեցոյաւելի հարկ խոստանալով Միջագետքն ալ մէկտեղ, անոր տեղը վերին Հայքն ալ իրեն իշխանութեան տակը տուաւ, ու աթոռն ալ Արմա-

ւիր փոխեց : Ետքը շինեց Երուանդաշատ Ք. Ե
 քաղաքը Երասխ գետին վերայ, Ախու- 79
 րեան գետին գիմացը՝ ու աթոռը հոն
 փոխադրեց : Շինեց նաև Բագարան քաղա-
 քը ու Արմաշիրէն կուռքերը հոն տա-
 նել տուաւ . ուրիշ գեղեցիկ անտառներ
 ալ շինեց : Ըսպաննել տուաւ Տուր իշխա-
 նը, իր ամէն ըրածները Սմբատին խմա-
 ցընելուն համար :

Հ. Երուանդ կրրցաւ ինչւան ետքը
 հանգիստ թագաւորել :

Պ. Չէ . վասն զի տասնըութը տարի
 Արտաշէս մանուկը Պարսկաստան կենա- 87
 լէն ետքը, Սմբատին ազաջանքովը Դա-
 րեհ խրկեց Արտաշէսը շատ զօրքով Սմբա-
 տին հետ մէկտեղ՝ որ երթայ Երուանդայ
 աւելը նստի : Ան միջոցին Երուանդ Ու-
 աէացոց վերայ պատերազմի գացած ըլ-
 լալով, լսելուն սէս՝ առատ աուրքով շատ
 զօրք ժողովեց ու վազեց Արտաշէսին գէմ :

Արտաշէս Երուանդայ ետ դառնալը
 չի գիտնալով, գնաց գէտի Ուտի գաւառը .
 և ուր որ կը հասնէր, անտեղի հայերը
 երբոր կիմանային, մէկէն իր կողմը կանց-
 նէին :

Աս բանս լսելով Երուանդայ քովը
 դանըւած նախարարները, սրբերնին
 կոտրեցաւ : Բայց Երուանդ իր վարձուոր
 զօրքին բազմութեանը վստահացած՝ ելաւ
 Արտաշէսին գէմ, ու երկու կողմէն ալ
 ըսկսան սաստիկ ջարդ ուտել : Ան միջո-
 ցին Արգամ նախարարն ալ՝ որ խիստ

Բ. Ե կորիճ էր, իր խուճբովը Արտաշէսին կազմն անցաւ՝ անոր մեծ մեծ խոստմունքներէն յորդորւած :

Տուրացիք, շատ պարզէնէր առնելով խօսք տուեր էին Երուանդին որ Արտաշէսը մեռցրնեն. բայց Գիտակ նախարարը մէջ մտաւ խալըսեց Արտաշէսը, ու ինքը զարնըւեցաւ ինկաւ : Ասանկով ինչւան իրիկուն պատերազմէլէն ետքը, Երուանդայ զօրքը ցրուեցան, ինքն ալ վատ խաւ Երուանդայշատ քաղաքը :

Երկրորդ օրը առաւօտանց ըսկսան սրտերազմիլ, առին քաղաքը, և Երուանդին որ սահւըտեր էր իր որոգայթաւոր սալատին մէջ, գտան ու ըսպաննեցին, քան տարի թագաւորէլէն ետքը : Արտաշէս անոր գերեզմանին վըրայ փառաւոր շիրիմ շինեւ տուաւ, մօր կողմանէ Արշակունի ըլլալուն համար :

ԺԸ

88

Հ. Արտաշէս երկրորդ ինչպէս թագաւորութիւն քշեց :

Պ. Արտաշէս երկրորդ՝ Սանաարուկին որդին՝ երբոր Երուանդին տեղը թագաւորեց, Սմբատը իրեն ընդհանուր սպարապետ ըրաւ, Արդամն ալ իրեն երկրորդ, ուրիշ իրեն բարիք ընող նախարարներն ալ մէյմէկ մեծամեծ պաշտօններու վըրայ դրաւ :

Ետքը Սմբատին հրաման տուաւ որ Ե.

ըուաղ քրմասուէար, ըսպաննէ որ Երուան
դին Եղբայրն էր: Սմբատ անոր ամէն հա-
րըստու թիւնները Արտաշէսին բերաւ, ա-
նիկայ ալ շատ ուրիշ ընծաներով մեկաւ զ
Պարսից Գարեհ թագաւորին խրկեց:

Աս միջոցիս Ալանայ թագաւորը ու-
րիշ ազգերուն հետ միաբանած՝ Արտա-
շէսին վերայ պատերազմի ելաւ, յաղթը-
ւեցաւ, որդին ալ Արտաշէսի ձեռքը դերի
ընկաւ: Ետքը թագաւորին Սաթինիկայը
կանը աղաչանքովը Արտաշէս հաշտու-
թիւն ըրաւ, Սաթինիկն իրեն թագուհի
ըրաւ, Եղբայրն ալ ազատ թողուց:

89

Արտաշէս երկրորդ թագաւորութեան
հարկաւոր կարգերը դնելէն ետքը, ըսկը-
սաւ ասդիս անդին շատ նորոգութիւններ
ընել շինուածքներու, քաղաքներու. Ար-
տաշատ քաղաքն ալ զարգարեց, ու թա-
գաւորական աթոռ ըրաւ: Բոլոր հայ-
աստան այլևայլ սահման քաժնեց, սահ-
մանագլուխ տեղւանքը քարէ նշաններ ու
աշտարակներ կանգնել տուաւ. քաղքէ
քաղաք ճամբաները շրտկեց. պէտք եղած
տեղւանքը շատ կամուրջներ շինեց: Ա-
մէն տեսակ արհեստի գործարաններ և
ուսումնարաններ բացաւ, անանկ որ ան
միջոցին բոլոր արևելքին մէջ հայաստան
մէկհաստիկ ծաղկած՝ ամէն ազգերուն
նախանձելի եղաւ:

90

Հ. Արտաշէս երկրորդ ինչ զինուորա-
կան կարգեր դրաւ:

Պ. Արտաշէս վեց տղայ ունեցաւ.

Բ. Ե Արտաւազդ, Ալոյր, Մաժան, Տիրան,
 Զարեհ, Տիգրան: Արտաւազդը բնու-
 թեամբ խիստ հպարտ ըլլալով՝ Արգամին
 վերայ նախանձեցաւ, ու ամբաստանու-
 թիւն ըրաւ թէ թագաւորութիւնը կուզէ
 իր ձեռքէն առնել, ասանկով Արգամը
 թագաւորին աչքէն հանեց, ու ինքը տե-
 110 ղը անցաւ. ետքը անով տեղովն ալ ըս-
 պաննել տուաւ: Կոյնպէս Սմբատին վը-
 ըայ ալ նախանձելով ըսպաննել կուզէր-
 բանը դուրս ելաւ, և Արտաշէս իմանալով
 խիստ խռովեցաւ. բայց Սմբատ ինքիւրէն
 հրաժարեցաւ սպարապետութենէն, և
 Արտաւազդ անոր ալ տեղը անցաւ, անոր
 համար եղբայրները ըսկսան վերան նա-
 խանձիլ: Արտաշէս ղամէնքը խաղաղցը-
 նելու համար, Ալոյրը իրէն թագաւո-
 112 ըրութեանը հազարապետ դրաւ. Մաժա-
 նը քրմապետ: Բոլոր զօրքերն ալ չորս
 բաժնեց Արևմտեան, Արևելեան, Հիւ-
 սիսային, Հարաւային. արևելեանը Ար-
 տաւազդին յանձնեց, արևմտեանը Տի-
 րանին, հիւսիսայինը Զարեհին, իսկ հա-
 րաւայինը գարձեալ Սմբատին:

Երբոր տէրութիւնը ասանկով ամէն
 կողմէն ամրացաւ, Հռոմայեցիներուն
 տուրք տալն ալ գաղութեցուց: Տրայխանոս
 բարկացաւ վերան, շատ զօրք խրկեց, որ
 եկան առջի բերանը յաղթեցին՝ քանի որ
 հայոց զօրքերը բոլորը մէկտեղ չէին. բայց
 ետքը չարաչար յաղթուեցան ու ցրուե-
 ցան: Կատղեցաւ Տրայխանոս, ու ինքը

անձամբ շատ զօրքով ասդին անդին յաղ
 թու թիւններ ընելով եկաւ Արտաշէսին
 վերայ: Ան ատենը Արտաշէսին աչքը վախ
 ցաւ ու շատ ընծաներով առջին ելաւ, սիր
 տը առաւ, ու նորէն ըսկսաւ հարկը տալ:
 Աս միջոցիս Մաժան քրմապետը Արտա
 ւազդին ու Տիրանին վերայ չարիք խօսեր
 էր Տրայիանոսին, անոր համար անոնք ալ
 Մաժանը որսի մէջ ըսպաննեցին:

116

Ասկէ մէկ երկու տարի ետեւ Արտաշէս
 որ Մարաց կողմը դացեր էր, հիւանդա
 ցաւ ու դարձաւ Մարանդ դաւառը Բա
 կուրակերտ աւանին մէջ մեռաւ՝ քառա
 սունու մէկ տարի թագաւորելէն ետեւ:
 Մեծ սուգ պատճառեց ամէնուն, և խիստ
 փառաւոր հանգէս ըրին իրեն թաղմանը:
 շատ մարդիկ իրենք զիրենք ողջ ողջ անոր
 դերեզմանին մէջ ձրգեցին, ինչպէս հե թա
 նոսներուն ասվորու թիւնն էր, ետքն ալ
 վերան շատ երգեր շինած կերպէին:

ԺԹ

Հ Արտաշէս երկրորդին ո՞վ յաջորդեց:

129

Պ. Իր որդին Արտաւազդ երկրորդ, որ
 վաւրտեց իր եղբայրները Արարատէն, և
 սղայ ջունեհալուն համար՝ միայն իր Տե
 րան եղբայրը քովը պահեց:

Արտաւազդ երկրորդ խիստ անկարգ
 կեանք ունեցաւ որ իր կտրըճու թեանը
 չէր վայէր: Օր մը Մասիս լեռան քովերը

Ք. Ե վայրի խողեր և ուրիշ գազաններ որ
 սալու գացեր էր. կատաղաբար ձիով վա
 ղելու ատենը, մէկ մեծ վիհի մը մէջ ընկաւ
 կորսըւէցաւ՝ երկու տարի թագաւորե
 լէն ետև :

Առասպել մը կայ. թէ Արտաւազդ գան
 գատեր էր հօրը թաղմանը ատենը շա
 սոջ մարդիկ մէկտեղ թաղուելուն համար,
 ըսելով թէ մենք որո՞ւ թագաւորենք: Ար
 տաշէս ալ զինքը անխիճեր էր թէ երթայ
 Մասիսին վերայ մուծ աեղ մը կենայ: Ա
 նոր համար կրսեն եղեր, թէ Արտաւազդ
 այրի մը մէջ երկըթէ շղթաներով կապած
 է, ու երկու շուն միշտ կրկրծեն շղթաները
 որ փրցրենն, ու Արտաւազդ ելէ աշխարհք
 կործանէ . բայց դարբիններուն կռան
 զարնելէն նորէն շղթաները կամրնան :
 Անոր համար հին ատենը ագէտ դարբին
 ները կիրակի օրերն ալ իրեք չորս անգամ
 երկաթ կրծեծէին՝ որ չըլլայ թէ պարսապ
 օր ըլլալով, շղթաները թուլնան :

131 Հ. Արտաւազդ երկրորդին ատըը մի
 նստաւ :

Պ. Արտաւազդին եղբայրը Տիրան ա
 ռաջին . որ բոլորովին անհոգու թեամբ և
 զբօսանքի հետ ըլլալով անցուց՝ իր ժա
 մանակը: Երբոր Անտոնինոս Հռոմայեցոյ
 կայսր նստաւ, Տիրանը դեսպան խրկեց
 140 անոր սովորական հարկին հետ որ դաշին
 քը նորոգւի. կայսրն ալ իրեն թագաւո
 րական թագ ու ծիրանի խրկեց, նոր ըս
 տակ ալ արսել տուաւ՝ վերան իր պատ

կերբը փորած, ձեռքը Տիրանին ուսին վը- Ք. Ե
րայ դրած :

Ետքը Տիրան կառավարութիւնը Ե- 144
րախնաւու իշխանին ձեռքը թողուց, ին-
քը գնաց Եկեղեաց գաւառը Չրմէս ա-
ւանին մէջ ապարանք մը շինեց, ու հոն
նստած իր հանգիստը կրնայէր : Ասանկով
քսանւերկու տարի թագաւորեւէն ետքը,
որ մը զբօսանքի երթալու ատենը ձեան
հիւսը վերան փրլու ու խրդդեց զինքը .
անոր յաջորդեց Տիգրան երրորդ իր սղտի
եղբայրը :

Հ. Տիգրան երրորդ ինչպէս ըրաւ թա- 152
գաւորութիւնը :

Պ. Երրորդ Տիգրանին ատենը Պարսից 161
Պերոզ թագաւորը Հռոմայեցոց դէմ
սրատերազմի ելաւ՝ Տիգրանն ալ մէկտեղ
առած : Ղայցին յաղթեցին, Հռոմայեցոց
Սևերիանոս զօրապետն ալ ըսպաննեցին :

Անկէ ետև Տիգրան փոքր Հայքին մէջ 162
սրատերազմելու ատենը, մէկ աղջիկէ
մը բռնըւեցաւ որ ան կողմերուն կիշխէր :
Ետքը երբոր եկաւ Ղուկիանոս կայսրը
Պարսից և Հայոց դէմ, Տիգրանը բռնը-
ւած տեսնելով, գութը շարժեցաւ, ա-
ղատեց, ու իր աղքատականներէն մէկ աղջիկ
մը իրեն կին տուաւ, և Անտոնինոսին ը-
րածին նման՝ զինքը թագաւորեցուց մեծ 163
Հայոց վերայ ու խրկեց իր աթոռը : Բայց
Տիգրան ան կնոջմէն ունեցած աղաքը
իրենց մօրը անուանովը զատցեղ անուանեց,
վասնդի չուղեց որ Արշակունի ըսին :

Ք. Ե
194 Տիգրան Երկրորդ քառսուն տարի թա-
գաւորեց ու մեռաւ : Տեղը նստաւ իր որ-
դին Վաղարշ :

Հ. Վաղարշ ինչ երևեւի գործք ըրաւ :

Պ. Վաղարշ շինեց Վաղարշաւան քա-
ղաքը Մուրց գետին Երասխին հետ խառ-
նըւած տեղը, ուր որ ինքը ծներ էր մօրը
ճամբայ ընելու ատենը : Վարդգէս աւանը
պարխապով պատեց ու Վաղարշապատ
անուանեց, և իր աթոռը հոն փոխա-
դրեց : Բագրևանդ գաւառին մէջն ալ
197 Վաղարշակերտ քաղաքը շինեց՝ որ հիմա
Ալաշկերտ կըսուի : Երբոր հիւսիսային աղ-
գերը ըսկոսան Ալանաց դռնէն գէտ ՚ի
Հայաստան քալել, անոնց գէմ էլաւ, յաղ-
թեց վռնտեց, բայց ինքն ալ նետով զար-
նըւեցաւ մեռաւ, քսան տարի թագաւո-
րելէն ետե : Իսկ Հայերը աւելի կատղած՝
213 ետեւուն ինկան, բոլորովին ցրուեցին, ու
իրենք մեծ սուգի մէջ՝ ետ գարձան :

Ի

Հ. Վաղարշէն ետքը ո՞վ թագաւորեց :

Պ. Իր որդին Խոսրով առաջին, որ հօրը
214 մահուանը վրէժը առնելու համար, նո-
րէն պատերազմի էլաւ հիւսիսական աղ-
գերուն գէմ, բոլորովին նուաճեց, և հա-
րիւրին մէկ հոգի պատանդ առաւ, իր ար-
ձանն ալ կանգնեց ան կողմերը հօռմի
գրով :

Ետքը ըսկաւ շատ նորոգութիւններ
և շինութիւններ ընելու բոլոր Հայաս-

տանին մէջ աս շէնքերուն վերայ բոլոր Բ. Ե.
քրիստոնեաները կաշխատողնէր. շատերն 216
ալ նահատակեց :

Աս միջոցիս երբոր Անտոնինոս Կա-
րակալա Հռոմայեցոց կայսրը Միջագետ-
քին վերայէն դէպ'ի Հայաստան կուգար,
Խոսրով առջևը գնաց բարեկամու-
թեամբ. կայսրը զինքը քովը պահեց՝ որ
ինքը երթայ տիրէ Հայաստանին : Հայերը
երբոր աս խմացան, կատղեցան ու ըսկան
վերան պատերազմի ելլել. անանկ որ Կա-
րակալային աչքը վախցաւ, ու սլատուով
ետ դարձուց Խոսրովը. իսկ ինքը Պարսից
դէմ գնաց ու հոն ըսպաննրւեցաւ :

Հ. Խոսրով ինչ կերպով մեռաւ :

Պ. Որչափ որ գովելի և ուրախալի էր
Խոսրովին խելացութիւնն ու աշխարհա-
շինութիւնը, այնչափ ցաւալի եղաւ իր
քրիստոնէից դէմ ցրցուցած թշնամու-
թիւնը, և իրէն հանդիպած անողորմ մահը :
Վասն զի ան ատենները Արտաշիր Սասա-
նեան անուհով Պարսից նախարար մը ու-
րիշ նախարարներու հետ մէկ եղած՝ ըս-
պաննեց Պարսից Արտաւան թագաւորը,
որ Արշակունի էր, ու ինքը թագաւորեց :
Խոսրով երբոր ըսեց, սրատերազմի ելաւ
Արտաշիրին վերայ, և այնչափ նեղը խո-
թեց որ ինչևան հնդկաստան փախուց 226
զինքը : Եւ գառնալու ատենը Ատրպա- 228
տական գաւառին մէջ Գավրէժ քաղաքը
չինեց, իբր թէ Արտաշիրէն վրէժը առ-
նելուն նշան :

Ք . Ե

256

259

Արտաշիր տեսնելով թէ քանի որ խոսարս-
 վը կենդանի է ինքը չիկրրնար թագաւո-
 րել, մեծ բան խոստացաւ խաբէու թեամբ
 խոսարովը մեռցրնողին : Անակ նախարարը,
 որ Պարթևաց ցեղէն էր, յանձն առաւ .
 ուստի իր ընտանիքովը Արտաշիրին ձեռ-
 քէն փախչիլ ձևացրնելով՝ ելաւ եկաւ
 Հայաստան խոսարովին քովը, մեծ պատիւ
 դտաւ անկէց, և երկու տարի կենալով
 խիստ ընտանեկնալէն ետքը, որ մը որսի ա-
 տեն զարկաւ խոսարովը : Աս բանս որչափ
 որ անկարծելի էր խոսարովին, այնչափ ալ
 կատողեցուց զինքը . մէկէն քանի որ չէր մե-
 ած, հրաման տուաւ որ Անակը տնով
 տեղով ըսպաննըի : Անակը պաշարւած՝
 փախչել չիկրրնալով ինքզինքը Երասխ
 գետին մէջ ձգեց ու խղզըւեցաւ . իր ըն-
 տանիքն ալ թրէ անցան : Միայն Անակին
 երկու սղտի սղաքը իրենց ծիծմարները
 սրահեցին . մէկը որ Սուրէն կըսէր
 Պարսկաստան փախուցին, մէկալը որ է
 մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը՝ իրեն
 ծիծմարը Սոփիա անուհով, որ էր
 բրիստոնեայ, Կեսարիա փախուց : Իսկ
 խոսարով քառասունհինգ տարի թագա-
 ւորելէն ետեւ, ասանկ խեղճ մահուամբ
 մեռաւ :

Հ . Մեծն խոսարով երբոր մեռաւ, Հայ-
 ոց վիճակը ինչպէս էրաւ :

Պ . Առջի բերանը շատ մեծ խեղճու-
 թեան մէջ ընկան . վասն զի Արտաշիր
 խոսարովին մահը լսածին պէս, շատ զօրքով

վազեց Հայաստանին վերայ, և նախարար ներուճն անմխարանութեանը սլառճառաւ տիրեց բոլոր Հայոց, նախարարներն ալ փոքր Հայոց մէջ սագիս անդին ցրուեցան:

Արտաշիր հրաման տուաւ՝ որ Խոսրովին ցեղն ալ ջնջեն: Ան միջոցին Արտաւազդ նախարարը Խոսրովին մէկ տղան Տրդատը կեսարիա փախուց, ու անկէջ Հռոմ տարաւ. հոն Տրդատ Աիկիանոս իշխանին քովը կրկէնար: Օտա նախարարն ալ Տրդատայ քոյրը Խոսրովի գոլխաւ տարաւ Անի բերդը սահէց:

Արտաշիր Հայաստանին տիրելէն ետեւ, հրաման տուաւ որ ամէն նախարարները իրենց առջի սլատիւր ունենան, և նոյն կարգով վարուին: Միայն Մանգակունիներուն ցեղն ալ ջնջել տուաւ՝ իմանալով որ Տրդատը փախցընող նախարարը Մանգակունի է: Վաղարշակ Թագաւորին կանգնել տուած արձանները կոտորուեց, երկրորդ Արտաշէսին կանգնած սահմանադրութի քարերը ամէնաւն վերան ալ իր անունը դրել տուաւ. ասանկով քսանըվեց տարի Հայոց և Պարսից վերայ տիրեց ինչւան իր մահը:

Արտաշիրին յաջորդեց իր Շապուհ որդին, ինչւան որ Տրդատ դարձաւ Հայաստան ու Թագաւորեց Հռոմայեցոց ձեռքովը. վասն զի խիստ սիրելի եղեր էր անոնց իր փառաւոր կարրճութիւններուն համար:

ԲԱ

Հ . Տրդատայ թագաւորելէն առաջ ըրած քաջութիւնները որոնք են :

Պ . Շատ տեսակ կարրձութիւններուն մէջ Գլխաւորներն ասոնք են .

ա . Օր մը ձիւնթացի մէջ կառք վաղցր նելու ատեն , իր դիմացինը վարպետութեամբ Տրդատը կառքէն վար ձգեց . Տրդատ ալ վեր ցածկեց , ու մէկէն չորս ձիով կառքին ետեւէն բռնածին սէս կեցուց . ամէնքը աս բանիս ապշած մնացին :

բ . Անգամ մը երկու ցուլի գէմ կռուելու ելաւ . երբոր երկուքը մէկէն վերան վազեցին , մէկ ձեռքով երկնցաւ գէսի ցուլերը , ու երկուքին մէյմէկ եղջիւրը մէկ տեղ բերելով՝ քաշեց փրցուց , զարկաւ վզերնուն կտարեց , ու տեսնողները սարսափեցուց :

գ . Պրոբոս կայսեր զօրքը երբոր ապրտամբեցան սովի սրտածառաւ , ու թագաւորին և իշխաններուն վերայ վազեցին ու ըստպանեցին , Տրդատ մինակ Վիկիանոսին վերանին դիմացը կեցած՝ զամէնքը ցրուեց փախուց :

դ . Արտինոս կայսրը երբոր Արատըի գէմ սպատերազմի ելաւ յաղթըեցաւ ու ըստպանեցաւ , զօրքը ցրուեցան ըսկասն փախչիլ . Տրդատայ ձին ալ վերաւորեցաւ . բայց Տրդատ ձիուն կաղմածքը իր կռնակը առաւ , ու առանց փախչելու այնչափ ծանրութիւնը մէկտեղ Նփրատ գետին

մէջէն ըողալով անցաւ եկաւ Աիկիանոսին Ք. Ե
բանակը :

Է. Երբոր Գիովղէտիանոս կայսրը Գոթացոց դէմ պատերազմ բացաւ, Աիկիանոս իր զօրքովը գիշերանց պարըսպի մը տակ հասաւ, հոն խոտ պէտք եղաւ ձիերուն. պարըսպին ներսի դին դիզուած խոտ կերննար, Տրդատ պարըսպէն անդին անցաւ ու դէզգէզ խոտերը դուրս նետեց, խոտերուն վըրայ քնացած պահապաններ և էշեր կան եղեր՝ անոնք ալ մէկտեղ նետեց :

Ը. Գոթացոց Հռէէ թագաւորը քաջ կտրիճ ըլլալով, առաջարկեց Գիովղէտիանոսին որ մինակ իրարու հետ պատերազմին. Գիովղէտիանոս երբոր տարակուսած կրմտած էր, Աիկիանոսին խորհրդովը իր ղէնքերը Տրդատին հագցուց, և որոշւած օրը Տրդատ Հռէէին դէմն ելաւ : Երբոր ըսկսան մէկըմէկու զարնըւիլ, Տրդատ բռնեց Հռէէն կապեց, ու բերաւ Գիովղէտիանոսին դիմացը կեցուց, ասանկով պատերազմը լըմնցաւ : Ուրիշ շատ մեծ քաջութիւններ ալ ըրեր է Տրդատ թագաւորէլէն առաջ որ չէն գրուած :

Հ. Տրդատ ինչ կերպով հայոց թագաւորութիւնը ձեռք առաւ :

Պ. Գիովղէտիանոս ուզելով Տրդատը մեծ պատուոյ հասցնել, երբոր խնացաւ թէ մեծին խոսրովի տղան է, թագ դրաւ գլուխը, ու զօրք տուաւ՝ որ երթայ հայաստան թագաւորէ :

Ք. Ե

Տրդատ Աեսարիսս գնաց ու իմաց ըրաւ
 Հայաստանի նախարարներուն՝ որ ինքը
 եկեր է թագաւորելու համար: Նախարար-
 ները մէկէն սիրով քովը ժողովրդեցան, ու
 Սմբատ Բագրատունիին ձեռքովը նորէն
 գլուխը թագ դրին: Ետքը եկաւ Տրդատ
 Եղնկա գաւառը Անահիտ չածուհիին
 մեհեանը՝ շատ շնորհակալութիւն ըրաւ:
 Հոն Գրիգոր Լուսաւորչին ալ հրաման
 տուաւ, որ ինքն ալ պարգև տանի Անա-
 հիտին: Գրիգոր քրիստոնեայ էր, և Տրդա-
 տայ մեծ անունը լսելով, իր հօրը ըրած
 չարութեանը փոխարէն բարեք ընելու
 280 համար Աեսարիայէն ելեր հռոմ՝ Տրդա-
 տայ քովը գացեր էր. ուստի ամենևին
 յանձն չառաւ ասկապաշտական գործքը
 ընելու: Այնչափ որ Տրդատ բարկացաւ վը-
 րան, ու տասուերիու սաստիկ անտանելի
 286 տանջանքներ տալէն ետքը, երբոր իմացաւ
 թէ Լուսաւորիչը Անահիտ տղան է, Արտա-
 շատու խոր վերապը ձգել տուաւ:

Ետքը Տրդատ շատ զօրքով առաջ ան-
 ցաւ, տիրեց բոլոր Հայաստանին և Ասոր-
 ւոց շատ քաղքերներուն: Շապուհ Իրեք
 անգամ Տրդատին դէմն ելաւ, ու միշտ
 288 յաղթուեցաւ: Տրդատ զօրքին առջևէն
 կերթար, ու շատ մարդ ինքը իր ձեռքո-
 վը կը ջարդէր. անգամ մը պաշարուեցաւ
 կորիճներէն, իր ձին ալ վերաւորեցաւ
 ընկաւ. Տրդատ ոտք ելաւ, շատ ձիաւոր-
 ներ ըսպաննեց, և անոնցմէ մէկուն ձին
 հեծած՝ յաղթութիւնը առաջ տարաւ:

Երբորդ տարին Շապուհ սաստիկ կաՔ. Ե
 աստուածութեամբ քովի ազգերէն ալ զօրք
 ժողված, շատ փիղերով Տրդատայ վերայ
 ելաւ. Տրդատ ալ բոլոր Հայոց և Աղուա-
 նից զօրքը ժողված դէմն ելաւ: Ինքը ձիէն
 վար իջաւ, մտաւ փիղերուն մէջը, իր զօրքն
 ալ ետեւէն, սաստիկ ջարդ մը տուաւ, ու
 շատ տեղերու տիրելով դարձաւ Հայաս-
 տան: Ասմէկ քանի սպատերազմները անանկ
 վախ ձգեցին ամէն քովի ազգերուն սիր-
 ար, որ ամէն կողմանէ ետ քաշւելով,
 վերան ասանկ առակ մը հանեցին, թէ
 Տրդատ իր կարիճ քաշուած քովը գետե-
 րուն թումբերը աւրեց, ու ծովուն ալիք-
 ները ցած ցուց: Ասանկով Տրդատ ամէն բան
 կարգի դնելէն ետքը, Ալանայ թագաւո-
 րին Աշխէն անունով աղջիկը իրեն թա-
 գուհի ըրաւ:

291

ԻԲ

Հ. Տրդատ ինչ կերպով քրիստոնեայ
 եղաւ:

Պ. Տրդատ ամէն կողմանէ հանդստա-
 նալէն ետև՝ հրաման հանեց որ Հայաս-
 տանի մէջ ուր որ քրիստոնեայ գանեն,
 բռնեն սպառժեն: Երբոր Հռիփսիմեան
 կուսանքները Ղիովղեաթանոսին ձեռքէն
 փախած՝ Հայաստան եկան, Տրդատ Հռիփ-
 սիմէն իրեն հարս ընելու գեց. բայց հա-
 մոզել չիկրնալուն համար՝ սուրբ կոյսը իր
 ընկերներովը մէկտեղ ըսպաննել տուաւ:

301

Ք. Ե

Մէկ քանի օրէն արամուժիւնը փարա-
տելու համար որսի ելած ատենը, ձիէն
ինկաւ, վերան կատաղուժիւն մը եկաւ
ու խողի կերպարանք փոխուած փախաւ,
գնաց՝ անտառներու մէջ կրքնակէր: Ան
ատենը հրէշտակը յայտնեց Տրդատայ
քրոջը Խոսրովի գուխախն՝ որ Ղուսաւորիչը
հանեցին վերապէն, անիկայ ալ գնաց
բժշկեց Տրդատը և ուրիշ գիււհարած նա-
խարարները. վաժսուն օր քարոզ տալով
ճշմարիտ հաւատքը սորվեցուց անոնց:
Ետքը հռիփսիմեանց եկեղեցիները շի-
նեցին. և անոնց համար ուժը հատ մեծա-
մեծ քարեր ինքը Տրդատ բերաւ լեռնէն:

301

Անկէ ետև Տրդատ Ղուսաւորչին հե-
տեկտեղ այլևայլ քաղաքներ ստրաւեցան
ու շատ կուստուններ կործանեցին:

302

Ետքը այ հրամանովը Տրդատ խրկեց
Գրիգոր Ղուսաւորիչը Կեսարիա՝ եպիսկո-
պոս ձեռնադրել տուաւ. ան ալ գառնա-
լու ատենը Տարոնին մէջ Վահագնի տա-
ճարը կործանեց՝ քուրմերուն հետ մեծ սա-
տերազմ ընելով: Տրդատ սուրբ Ղուսա-
ւորչին առջևը գնաց ինչևան Բագրևանդ
գաւառը Բագուան գիւղաքաղաքը. հոն
դարձեալ Ղուսաւորիչը ամիսի մը չափ քա-
րոզելէն ետքը, Եփրատ գետին քովը գնացին
ու եօթը օրան մէջ չորս միլիոնի չափ մարդ-
մկրտեց Ղուսաւորիչ: Անկէ ետև Տրդատ
շատ կարգաւորութիւններ բրաւ Ղուսա-
ւորչին հետ մեկտեղ: Շատ եկեղեցիներ
շինեցին, վանքեր և ուսումնարաններ

կանդնեցին . իր աթոռն ալ Ազաղարշապատ փոխեց : Ք . Ե
304

Տ . Տրդատին քրիստոնե այլ լալէն ետև վերան ինչ կը պատմուի :

Պ . Տրդատ լսելով թէ Հռոմայեցոց Կոստանդիանոս կայսրն ալ քրիստոնեայ եղեր է . Լուսաւորչին հետ մէկտեղ ելաւ Հռոմ դնաց՝ ուրախակցու թեան համար : 319
Հոն սուրբ Սեղբեստրոս պապը պատուոյ համար հրաման տուաւ որ պատրիարգա կան աթոռ սեպւի Լուսաւորչին աթոռը , և մէջերնին հաստատուն դաշինք դնելով դարձան Հայաստան :

Ան միջոցին Պարսից Շապուհ թագաւորը և հիւսիսային աղգերը տեսնելով թէ Տրդատ Հայաստանէն հեռացաւ , ուղեցին մէկէն վազել ու տիրել Հայաստանին . Տրդատ վերայ հասաւ . և թէպէտ առջի բերանը անպատրաստ էր , բայց զարկաւ ցրուեց Սկիւ թացւոց Գեղուհոն զօրավարին զօրքը :

Երկրորդ անգամ երբոր զարնըւեցան , Գեղուհոնին զօրացը մէջ մեծ ջարդ ընէլէն ետքը , Գեղուհոն այնպէս հանդիպցուց՝ որ կաշիէ չուանով մը Տրդատին մէջքէն թևերովը մէկտեղ սըխմեց , ու ըսկրսաւ քաշել : Ան ատեն Տրդատ ուժով թօթվեց՝ ձեռքը խալըսցուց , զարկաւ երկու կտոր ըրաւ Գեղուհոնը՝ ձիուն գլուխն ալ մէկտեղ , ու բոլոր զօրքը ցրուեց : Ետքը ըսկսաւ սրատերազմիլ Պարսից Շապուհ թագաւորին դէմ , և ան քաղաք .

Ք. Ե ներքը որ հայոց մասը կրտսււէին՝ առ նեւէն ետքը, հետը հաշտութիւն ըրաւ ու խաղաղութեամբ կը թագաւորէր :

331

Մէկ քանի տարիէն տեսնելով սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ալ որ ամէն բան կարգի գորուեցաւ, ինքն ալ ծերացած ըլլալով, իր տեղը սուրբ Արիստակէսը կաթողիկոս նստեցուց, ու ինքը քաշուեցաւ Սեպուհ լեռը Մանեայ այրին մէջ կեցաւ ինչւան իր երջանիկ մահը : Անկէ ետքը կամաց կամաց նախարարներէն շատը ըսկսան թուղնալ հաւատքէն, և սուրբ Արիստակէս կաթողիկոսը որ Լուսաւորչին տղան էր՝ ըսպան նեցին, իրենց շատ խրատ տալուն համար ըսկսան ալ սնմիաբանութեան խորհուրդներ և չարիք մտածել և անկարգութեան ետևէ ըլլալ : Տրդատ շատ զիրենք յորդորելէն վերջը տեսնելով որ խեր չիկայ, ինքն ալ քաշուեցաւ գնաց Լուսաւորչայ այրը կրքնակէր : Նախարարները ետ կանչեցին զինքը. թէպէտև սրտանց կասեին, բայց վախը և սպառնալուանքը անջնջելի տագաւորած էր սրտերնուն մէջ : Երբոր իմացան որ Տրդատ ալ հոգ չունի թագաւորի իրաւունքները բանեցընելու, սիրա առին ու գաղտուկ թունաւորեցին զինքը : Այնչափ ըրած բարիքներուն փոխարէն՝ ասանկ մեծ ապերախտութիւն հատուցին, որուն յիշատակը սարսափ կրբերէ :

341

Թագաւորեց Տրդատ յիսունըվեց տարի, ու թսունըհինգ տարւան մեռաւ սրբութեամբ : Անպարտելի էր իր քաջու-

Թիւնը, կատարի թշնամիներուն յաղթեց,
բայց իր ազգին ապերախտութեանը չի-
կրրցաւ յաղթել: Կր աստուածսիրութիւնը
և խաղաղասիրութեամբը քառսուն տարի
բոլոր ազգը խաղաղութեան ու քրիստո-
նէութեան մէջ պահեց, բայց ամսոս որ
ազգատեցութեան և ապերախտութեան
ախտը չիկրրցաւ վերցնել ազգին սրահն.
որ երկու հազար տարիի չափ կռապաշ-
տութեան ատեն չբրածանզգամութիւնը՝
քրիստոնէայ եղած չեղած ըրաւ. անոր
համար քրիստոնէութեամբը օրհնուելու և
աւելի պայծառ թագաւորութիւն ունե-
նալու տեղը, կարծես թէ անիծւեցաւ,
ու ըսկսաւ խեղճութենէ խեղճութիւն
իյնալ:

ԻԳ

Տ. Տրդատին մահուանէն ետքը ինչ
վիճակ ունեցաւ մեր ազգը:

Պ. Շատ մարդիկ ատեն դանելով գլուխ
քաշեցին, շատն ալ քրիստոնէութիւնը
ատելնուն համար՝ Ղուսաւորչին ցեղը ջըն-
ջել կուղէին. սուրբ Գրիգորիս Ղուսա-
ւորչին թողը՝ որ Աղուանից կաթողիկոսն
էր, ըսպաննեցին Վատնեան դաշտին մէջ
Կասպից ծովուն քով զինքը ձիու պոչի կա-
պած վազընելով: Սուրբ Վրթանէսն ալ
կուղէին բռնել մեռցրնել, բայց ինքը հրաշ-
քով մէջերնէն անցաւ գնաց Թիւ աւանը
սուրբ Արիստակէսին իր եղբօրը գերեզմա-

Ք. Ե նին քով, ու ըսկսաւ լալ ազգին վերայ :
 Ազուանք ապստամբեցան, և Արշակու-
 նեաց ցեղէն Սանատրուկը Շապուհին օգ-
 նելովը ինքնագլուխ թագաւորեց, ու Տըր-
 գատին աեղը կուզէր տիրել Հայոց վերայ .
 Բակուր Աղձնեաց բզէշխը ապստամ-
 բեցաւ : Քանի մը ցեղեր ալ ըսկսան իրարու
 դէմ սլատերազմիլ, ու Բզնունիք, Մա-
 նաւաղեանիք և Որդունիք ըսւած նախարա-
 րու թիւները իրար ջնջեցին : Ասանկ անմիա-
 բանութեամբ իրեք տարի ազգը կործա-
 նելու ետևէ էին . ինչւան որ մէկ բանի հա-
 լատարիմ նախարարներ սուրբ Աքթանէս
 կաթուղիկոսին քով ժողվրեցան, ու ա-
 նոր խորհրդովը Կոստանդիանոսին որ-
 դոյն Կոստանդ կայսեր ձեռքովը թա-
 գաւորեցուցին Տրդատին որդին Խոսրով
 երկրորդը : Ամմէն բան կարգաւորեցին,
 ապստամբ խռովարարները ջնջեցին ու
 թագաւորութիւնը հանդարտեցուցին :

344
 Հ. Խոսրով երկրորդ ինչպէս քշեց
 թագաւորութիւնը :

Պ. Խոսրով ընութեամբ խիստ ահար
 ու անհոգ ըլլալով, Պարսից դէմ ելլելու
 տեղ՝ Շապուհին տուրք խոստացաւ, ու
 հետը հաշտութիւն ըրաւ . և ինքը ան-
 տառներ անկեց, Գուին քաղաքն ալ շի-
 նեց ու աթուր հոն փոխեց : Շապուհն ու-
 րէն գրգուռելով Սանատրուկէն, ոտք հա-
 նեց Հայոց դէմ հիւսիսային ազգերը :
 348
 Խոսրով երկրորդ դէմերնին ելաւ՝ Միհրան
 վրաց թագաւորին հետ . բայց յաղթուե-

ցաւ փախաւ, Միհրանն ալ մեռաւ. թշնա-
 միները եկան Վաղարշապատ քաղաքը
 սպառեցին: Անտէնը Բագարատ Բագ-
 րատունին և Վահան Ամատունի հզօր
 սպարապետները իրենց զօրքով օգնու-
 թիւն հասան ու ցրուեցին բոլոր թշնա-
 միները. և Վահան անոնց հսկայ զօրա-
 գլուխը նիզակով մը ըսպաննեց: Քիչ ա-
 տենէն Խոսրով մեռաւ՝ ինը տարի թա-
 գաւորելէն ետև:

Հ. Խոսրով երկրորդին տեղը ո՞վ յա-
 ջորդեց:

Պ. Տիրան երկրորդ՝ Խոսրովին տղան.
 որն որ սուրբ Վրթանէս տարաւ Կոստան
 դնուպօլիս Կոստանդ կայսեր ձեռքովը
 թագաւորեցրնել տուաւ: Ան միջոցին
 Շասուհի կարծելով թէ Հայաստան ան-
 տէր մնացեր է, իր Ներսէհ եղբայրը շատ
 զօրքով խրկեց որ ախրէ: Արշախի Կամ-
 սարահանը՝ որուն որ յանձներ էին տե-
 րու թիւնը, ժողովեց ամէն Հայոց զօրքը ու
 գիմացր ելաւ. բայց նախարարներուն ան-
 միաբանութեան սլառճառաւր առջի բե-
 րան շատ մեծ իշխաններ մեռան: Ինչևան
 որ մնացածները միաբանելով զօրացան,
 յաղթեցին ու բոլորովին ցրուեցին թշնա-
 միները. նմանապէս յաղթեցին հիւսի-
 սային սպգերուն ալ: Ետքը դարձաւ Տի-
 րան երկրորդ թագաւորեց, Շասուհին
 հեռ հաշտութիւն խօսեցաւ ու ըսկսաւ
 տուրք տալ Պարսից, ու ինքը անհոգու-
 թեամբ կապրէր:

348

Հ. Տիրան երկրորդ յիշատակի արժանի ինչ գործք ըրաւ, և ինչպէս մեռաւ:

Պ. Տիրան ինչպէս որ վատութեան գործքերով անցուց իր կեանքը, այնպէս ալ անարդ և ցաւալի մահ ունեցաւ: Յուլիանոս ուրացող Յունաց կայսրը երբոր Պարսից դէմ կերթար, Տիրանէն օգնութիւն ուղեց: Տիրան Յուլիանոսէն վախնալով, Պարսից հետ դրած դաշնագրութեանը դէմ Շապուհին զօրքին վերայ գնաց, ու Եփրատին քովէն ցրուեց փախուց, աւրած կամուրջնին հաստատեց և Յուլիանոսին զօրքին ճամբայ տուաւ: Եւ երբոր ուղեց Յուլիանոս որ Տիրան իրեն հետ մէկտեղ երթայ, Տիրան իր տեղը զօրք խրկեց. և իր Տրդատ տղան ընտանիքովը և իր Տիրիթ թուր Յուլիանոսին սպասանդ տուաւ: Յուլիանոս իր պատկերը տախտակի վերայ քաշած տուաւ Տիրանին, որ եկեղեցւոյն մէջ դնէ: Ողորմելի թագաւորը ասոր ալ չիկրրնալով դէմ կենալ, տարաւ եկեղեցւոյն մէջ իր ձեռքով կախելու: Սուրբ Յուսիկ հայրապետը վերայ հասաւ, շատ կերպերով ուղեց համոզել Տիրանը որ չիդնէ: Երբոր Տիրան մտիկ չըրաւ, հայրապետն ալ ձեռքէն պատկերը քաշեց զարկաւ գետինը, ու կոխկրուտելով կոտորեաց: Տիրան Յուլիանոսին վախէն որ չըլլայ թէ խմանայ, բարկացաւ ու այնչափ ծեծել տուաւ հայրապետն որ ինչան մեռուց: Ետքը Դանիէլ ծերունին ալ, որ Յուսիկն տեղը հայրապետ

նրասաւ, զինքը յանդիմանելուն համար Բ. Ե
 խղզել տուաւ: Չուրա զօրապետը որ
 Յուլիանոսին հետ գացեր էր, տեսնե-
 լով Յուլիանոսին և Տիրանին անօրէն
 գործքերը՝ քաշէր էր իր բերդը. Յու-
 լիանոս Տիրանին հրաման խրկեց որ Չու-
 րան տնով տեղով ջընջէ. Տիրան սուտ
 երգումով Չուրան կանչեց իր քովը, ու-
 ըսպաննեց, բոլոր տունն ալ ջընջեց: Ո՞վ
 կրնայ առանց սիրտը խըշխըշալու, և ա-
 ռանց վայ տալու սասնկ անմիտ թագաւո-
 րին պատմութիւնը կարդալ: Բայց քիչ
 ատենէն Տիրան սասնկ ըրած անօրէնու-
 թիւններուն փոխարէն ինքն ալ պատժը-
 լեցաւ: Վասն զի Շապուհ խաբէլով բա-
 րեկամութեամբ քովը կանչեց Տիրանը
 ու գաշինքը աւրելուն համար աչընէրը
 հանել տուաւ և Վուաշ աւանը խրկեց,
 տասնըմէկ տարի անմտութեամբ թա-
 գաւորելէն ետև: Տեղը նստեցուց անոր
 որդին Արշակ երկրորդը: Անգամ մը Տի-
 րան իր աղուն երկրորդ Արշակին յան-
 դիմանութեան թուղթ մը գրեց, անոր
 անկարգ գործքերուն համար. Արշակ ալ
 բարկացաւ ու զինքը խըղզել տուաւ: Ան-
 պիտան հօրը անօրէն որդին, իր թագա-
 ւորութեան իշխանութիւնը ցուցնելու
 համար իր հայրը ըսպաննեց: Ասանկ
 թագաւորէն ինչ բարիք կրուտացի:

Հ. Երկրորդ Արշակին վերայ ինչ գործք
կրպատմութի :

Պ. Արշակ երկրորդ անկարգ և անհոգ
կեանք ունեցաւ : Թէպէտ ասոր ատենը
Ներսէս կաթողիկոսը շատ տեսակ շինու-
թիւններով զարդարեց Հայաստանը, բայց
Արշակ երկրորդ փոխանակ օգնելու, տե-
սակ տեսակ վնասներու ալ պատճառ
եղաւ իր անկարգութեամբը : Նախ երբ-
որ Վաղէնաթիանոս կայսրը իրեն դեսպան
խրկեց որ Պարսից հարկ տալէն դադրի ու
իրեն միայն տայ, Արշակ բարկանալով
դեսպանները վաճնտեց՝ ու ինքը երկուքին
ալ հարկ տալը դադրեցուց, և ըսկաւ իր
զուարճութիւններուն հետ ըլլալ : Վա-
ղէնաթիանոս բարկացաւ, և Արշակին Տրդատ
եղբայրը որ իր քովը պատանգ էր, ըսպան-
նել տուաւ. Թէոգոս զօրապետն ալ շատ
զօրքով Արշակին վերայ խրկեց : Ան ատե-
նը Արշակ նեղը մտնելով աղաչեց սուրբ
Ներսէսին, որ երթայ միջնորդ ըլլայ : Վա-
ղէնաթիանոս լսելով սուրբ Ներսէսին աղա-
չանքին՝ ներեց ու պատանգները աղատեց.
Ուրմախաշա անուկով իր ազգէն մէկն
ալ Արշակին թագուհի խրկեց. և Տրդա-
տը մեռցնելուն համար, անոր տղուն
Գնեղին հիւպատոսութեան պատիւ տը-
ւաւ, և շատ ալ պարգևներ. անոր համար
Տիրիթ Տիրանին թուր ըսկաւ վերան

նախանձիլ : Տիրան իր Գնեւ թուէն լաւ
 լով եղածները, տրամեցաւ . և իր ունեցած
 ծառանդութիւններն ալ Գնեւին տուաւ :
 Գնեւ բնակեցաւ հոն Կուաշին մէջ ու
 փառանձեմ անուանով կին մը առաւ՝ թա
 գաւորի պէս շատ փառաւոր հարսնիք
 ընելով, և նախարարներուն տղաքն ալ
 իր պաշտօր առնելով թագաւորի սովո
 ըութեան պէս : Տիրիթ Արշակ երկրոր
 դին ամբաստանեց, թէ Գնեւ իր տեղը թա
 գաւորի կուզէ . Արշակ հաւատալով Գնե
 վը վերնտեց Արարատայ գաւառէն : Ո
 ըրուն համար նեղանալով թուղթ խրկեց
 Տիրան Արշակին, ան ալ զինքը եղղգել
 տուաւ : Ետքը որ մը Արշակ երկրորդ իր
 բրած որսին վերայ պարծելու ատենը, Տի
 րիթ ըսաւ թէ Գնեւին ունեցած որսի ան
 տառք անանկ փառաւոր է, որ թագաւոր
 ները չունին : Արշակ աս բանիս նախան
 ձեցաւ, ու խաբելով գրեց Գնեւին, թէ
 կուզէ ինքը անոր հետ որս ընել հոն .
 ինքն ալ մէկէն ճամբայ ընկաւ՝ որ եթէ
 պատրաստ չիգընէնէ, պատճառ ունենայ
 զինքը մեռցնելու : Բայց երբոր հասաւ,
 տեսնելով տեղւոյն գեղեցկութիւնը և
 որսերուն պատրաստութիւնը, ալ աւելի
 նախանձեցաւ, ու գալառկ հրաման տը
 ւաւ մէկու մը՝ որ իբր թէ գիպուածով
 նետը զարկաւ Գնեւին կրօնրկին ու ըսական
 նեց : Անտենը Արշակ երկրորդ ցաւ
 ձեւացնելով փառաւոր թաղում ընել
 տուաւ . բայց ստուծիւնը խմացւելով՝

սուրբ Ներսէս ալ անիծեց զինքը : Իսկ Արշակ զզջալու տեղ, Գնեւին կինն ալ Փառանձեմը իրեն երկրորդ կին առաւ : Ան ալ սուրբ խորհրդին մէջ թոյն խառնել տալով՝ Աւլիմպիադա թագուհին մեռուց : Արշակ աս անիրաւութիւններէն զատ, նախարարներէն ալ մէկ քանին անիրաւ տեղը ըսպաննել տուաւ . անանկ որ սուրբ Ներսէս տեսնելով եղածները՝ քաշւեցաւ ու առանձին վանք մը կըրնակէր :

Հ . Երկրորդ Արշակ իր անկարգութիւններուն մէջ կըրցաւ ինչւան ետքը թագաւորել :

Պ . Արշակ երկրորդ իր անկարգ կեանքը արժանի չարաչար ալ մահ ունեցաւ : Շապուհ Արշակին բարկացած ըլլալով բոլորովին Յունաց տակը մտնելուն համար, երբոր միջոց մը գտաւ՝ ըսկսաւ Արշակին վերայ գալ : Արշակ սպարդէներով և խոստմունքներով Շապուհին սիրտը առաւ . և Յունաց դէմ երթալու համար Շապուհին օգնական զօրք ալ տուաւ : Շապուհ ուզելով սաշար առնել Տիգրանակերտէն անցնելու ատենը, Տիգրանակերտցիք դռները գոցեցին : Շապուհ ուզեց սպառերազմով առնել քաղաքը . և տեսնելով որ դժուար է, անցաւ գնաց Յունաց վերայ . ու ՚ի դարձին եկաւ նորէն զարնըւեցաւ քաղաքին հետ . շատ ընդդիմութիւն տեսնելէն ետքը, քաղաքին երկու կողմը փրլուց, ու սաստիկ ջարդ տուաւ մէջիններուն, մընացածներն ալ գերի տա-

րաւ : Ան միջոցին Արշակ երկրորդ Ար-
 շակաւան քաղաքը շինեց , և որպէս զի ան
 քաղաքը շուտ մը լեցւի , հրաման հանեց
 որ հոն գացող բնակողին վերայ գատաս-
 տան չըլլուի : Շուտ մը լեցւեցաւ քաղաքը
 ամէն տեսակ անոգամ մարդիկներով :
 Նախարարները աս բանիս համար բողոքե-
 ցին Արշակին . բայց երբոր անիկայ մտիկ
 չըրաւ , լսեցին ալ որ Շապուհ գարձեր
 է Յունաց գէմ պատերազմելէն , դեսպան
 խրկեցին Շապուհին որ գայ իրենց օգնէ
 Արշակաւանը կործանելու : Թագաւորին
 ըրածը անկարգ , նախարարներունը ան-
 միտ : Շապուհ ուրախանալով օգնութիւն
 խրկեց նախարարներուն . Արշակ երկրորդ
 փախաւ Անի բերդը . վերան գացին պա-
 տերազմեցան՝ բերդը առին . բայց Արշակ
 փախաւ Վրաց ապաւինեցաւ : Ան ատենը
 գացին նախարարները ու բոլոր Արշակա-
 ւանին բնակիչները ջարդեցին՝ բացի
 կաթնկեր տղոցմէ , որ սուրբ Ներսէսին
 աղաչանքովը ազատեցին . ու քաղաքն ալ
 տակն ու վրայ ըրին : Արշակ կատղած ,
 Վրացմէ օգնութիւն առած՝ եկաւ նախա-
 րարներուն գէմ : Չարկին զարնուեցան ,
 երկու կողմէն ալ շատ մարդ ըսպաննը-
 ւեցաւ երկու տարիի չափ : Ան միջոցին
 Վաղէս կայսրն ալ լսելով որ Արշակ Շա-
 պուհին օգնութիւն ըրեր է իրեն գէմ ,
 ինքն ալ Արշակին վերայ զօրք խրկեց : Ար-
 շակ երկրորդ ամմէն կողմէն նեղը մտած՝
 սուրբ Ներսէսին աղաչեց , որ զինքը ազա-

Գ. Ե տէ: Սուրբ Ներսէս մէջ մտաւ, շատ դժուար
 րու թեամբ նախարարները թագաւորին
 հետ հաշտեցուց, ետքը գնաց Յունաց
 Թէոգոս զօրասպետին ալ սիրտը առաւ,
 և Արշակայ որդին Պասլը պատանդ տա-
 լով, Թէոգոսին խորհրդովը ելաւ Կոս-
 տանդնուպօլիս գնաց՝ վաղէսին սիրտը առ-
 նելու համար: Բայց վաղէս արիանոս ըլ-
 լալով՝ առանց հեար տեսնուելու սուրբ
 Ներսէսը բռնէ տուաւ: Արշակ երբոր լսեց,
 դաշինքը օտքի տակ առաւ, նախարար-
 ներէն ալ մէկքանին ըսպաննեց, և Կամա-
 բականներուն ցեղը ջընջէլ տուաւ, որոնց-
 մէ Սպանդարատը մինակ ազատեցաւ իր
 տղոցմով: Շապուհ նորէն զօրք խրկեց Ար-
 շակին վերայ. ասոնց հետ նախարարներն
 ալ միաբանեցան, ու Արշակը այնչափնեղը
 խոթեցին որ անձնատուր եղաւ: Շապուհ
 լուր խրկեց որ ուրիշ մեծամեծ նախարար-
 ներ ալ Փառանձեմին հետ մէկտեղ իրեն
 երթան: Նախարարները բարկացան՝ Շա-
 պուհին խրկած զօրքին դէմն ելան ու փա-
 խուցին, և իրենք ցրուեցան գացին աս-
 դիս անգին: Շապուհ երբոր լսեց, բար-
 կացաւ, ու Արշակը շղթայակապ Անյուշ
 բերդը խրկէլ տուաւ: Եւ Մերուժան
 Արծրունի ուրացողը զօրքով խրկեց հայ-
 աստանին վերայ: Ասոնք անտէր գանե-
 լով հայաստանը՝ նախ Արտագերս բերդին
 վերայ գնացին, ուր որ Փառանձեմ թա-
 գուհին ամրացած էր, ու լուր էր խրկած
 Կոստանդնուպօլիս պատանդ մնացած

Պատգ տղուն և սրբոյն՝ Ներսէսի որ դան օգնեն : Մերուժան բերդին բան ջիկրացաւ ընել խիստ սմուր ըլլալուն համար . իսկ բերդին բնակիչները տեսնելով որ Պատէն օգնութիւն չիգար , պատերազմելէն ձանձրանալով անձնատուր եղան : Ան ասէն բռնեց զանոնք Փառանձեմին հետ մէկտեղ Ասորեստան տարաւ , ամէնքն ալ ցից հանել տուաւ : Շատերն ալ հաւատքնին չուրանալնուն համար մեռուցին : Անկէ դարձաւ Մերուժան Ահան իշխանին հետ մէկտեղ նորէն հայաստան , ու շատտեղաւրըշտրկեց անապատ դարձուց . և որչափ որ Հրեայ դտաւ հայաստանին մէջ , գերի տարաւ : Պարսկաստան Արշակ երկրորդ լսելով ասեղած թշուառութիւնները , յուսահատած ինքզինքը ըսպաննեց : Թագաւոր էր և քրիստոնեայ . ոչ թագաւորավայել կրթութիւն առեր էր , և ոչ իբրև քրիստոնեայ մեծցեր էր . անոր համար բարբարոսի պէս թագաւորութիւն քշեց . ազգին հայր ըլլալու և ինամելու տեղը , ազգը ցրուեց և թշուառացուց . չարիք ընելով ապրեցաւ , և երբ որ իրեն ըրած չարեացը պտուղը իրեն և ազգին վերայ հասած տեսաւ , ձանձցաւ որ գէշ ըրեր է , բայց խիստ ուշ . անոր համար յուսահատած՝ բոլորովին չարեաց մէջ ինքզինքը ընկղմեց ու կորսրւեցաւ տասնըութ տարի թագաւորելէն և տքր :

Հ. Երկրորդ Արշակ ինքզինքը ըստան, ներէն ետև Հայաստանի վիճակն ինչ եղաւ :

380

Պ. Շապուհ նորէն Մերուժանը խրկեց, որ երթայ բոլոր Հայերը Պարսից աղանդը դարձնէ, խոստանալով զինքը անոնց վերայ թագաւորացնելու : Աս պատճառաւ Մերուժան եկաւ մոգերով՝ շատ մարդ նահատակեց, շատ քահանաներ եպիսկոպոսներ գերի ըրաւ ու Պարսկաստան խրկեց. և ամէն Յունաց գրով գանձւած գրքերը այրել տուաւ, և արդիւնց որ յունարէն սորվող ու խօսող չըլլայ : Մեծն Ներսէս երբոր լսեց աս ամէն եղածները, սաստիկ ցաւելով չէր գիտէր ինչ ընէ լիքը : Աղաչեց Թէոդոս կայսեր որ Պապը թագաւոր դնէ, գոնէ ըսաւ քրիստոնէութիւ պաշտպանելու համար Պարսից ձեռքէն Հայաստանը փրկէ : Հրաման տուաւ կայսրը, և Պապին կինը և որդիքը պատանդ թողլով, Տերենտիանոս մեծ զօրապետն ալ մէկտեղ ելան Հայաստան եկան :

381

Հ. Պապ կրրցաւ Պարսից ձեռքէն աղաւտել Հայաստանը :

Պ. Մերուժան լսելով Պապին Հայաստան գալը, ինքը Պարսկաստան փախաւ. հրաման տուաւ որ Հայոց նախարարներուն կիները, որոնք գերի առեր ու պահէր էր, բերդերէն դուրս կախեն : Երբոր

աս տեսան չայոց զօրքը, նախ ան բերդե-
 րուն վրայ վազեցին ըսպաննեցին մէջի
 պարսիկ զօրքերը, և կիները թաղեցին,
 ուրիշ գերիներն ալ ազատեցին: Մերու-
 ժան Շասուհին հրամանովը այլևայլ ազ-
 գերէն շատ զօրք ժողված՝ վազեց նորէն
 չայաստանին վրայ: Տերենտիանոս ալ
 իմանալով անոր սպառաասու թիւնը, կայ-
 սեր գրեց, և շատ զօրք ու պատերազմա-
 կան գործիքներ բերել տուաւ: Երբոր
 երկու հողմէն սպառաասուէցան զարնը-
 լելու, մեծն Ներսէս Նպատ լեռան վրայ
 ելաւ ու ըսկսաւ աղօթել. պատերազմը
 խառնըւելու ատեն, որովհետեւ արևը
 չայոց զօրաց դէմն էր ու կրնեղէր անոնց
 աչքները, ամպ մը եկաւ արևուն դիմացը,
 սաստիկ հով մըն ալ ելաւ ու բոլոր Պար-
 սիցնեաւորը իրենց վրայ կըդարձնէր: Աս
 բանէս չայերը սիրտ առած և Պարսիկ-
 ները կատղած, ըսկսան սաստիկ ջարդ տալ
 մէկմէկու. խիստ շատ զօրք ընկաւ Պար-
 սից դիէն: Սմբատ Կամսարականը դէպ'ի
 Մերուժան վազելով երբոր կը ջարդէր, Մե-
 րուժանին ձին վիրաւորուած ըլլալով չիկըր-
 ցաւ շուտ փախչիլ, Կադայովտին եղէգ-
 նուտին քով Սմբատ վըրան հասաւ, Մե-
 րուժանը բռնեց և քովինները ըսպաննեց-
 և վախնալով որ բանակը տանի նէ սուրբ
 Ներսէսը անոր կենացը կըխնայէ, չորս դին
 նայեցաւ տեսաւ որ վրաններու մէջ վա-
 ռած կրակ կայ, գնաց շամփուր մը գտաւ
 մտով կրակին վրայ, շամփուրը առաւ կըոր-

ցուց և կարմրցուց ու Մերուժանին գլուխը դրաւ ըսելով: Ես որ Բաղրատունի եմ, ասով զքեզ թագաւոր կըսասակեմ, որ անիրաւ փափաքդ արդարութեամբ կատարւի: Անտենը պատերազմը ցրուեցաւ. և Պապը թագաւորեց: Եւ մեծ պատուով շատ պարգևներ տալով Տերենտիանոսին՝ բնակեցուց զինքը Հայաստանին մէջ և ուրիշ զօրքերը ետ դարձուց. սուրբ Ներսէսը և բոլոր նախարարները թողվեց, և ամէնքը մեկէն խօսք տըւին որ Այ օրինացը հեռուելով, մէկ սիրտ մէկ հոգի կառավարեն տերութիւնը:

Հ. Պապ ինչպիսի թագաւորութիւն քչեց և ինչ վախճան ունեցաւ:

Պ. Պապ նստաւ չինստաւ՝ ըսկսաւ անկարգութեանց ետևէ ըլլալ, և որովհետև սուրբ Ներսէս միշտ կըխրատէր զինքը, ձանձրանալով անոր խրատներէն՝ իրեն թոյն խմցրնէլ տուաւ: Սուրբ Ներսէսը ասանկ անիրաւ ու անողորմ մահուամբ մը մեռնելու ատենը մարդարէացաւ՝ որ թագաւորութիւնը և սուրբ Գրիգորին ցեղէն քահանայութիւնը վերցըրի պիտի. դուշակեց նաև Հայաստանի վերայ գալու թշուառութիւնները, որոնք որ ինչևան հիմա աչքովնիս կըտեսնենք, և յուսահատած կողքանք՝ որ բոլոր ազգին այնչափ դարերու մէջ թափած արցունքը չկըրնար վերցընել տալ Հայաստանին վերայէն Աստուծոյ արդար վրէժիմդրութե պատիժը: Պապ ալ աւելի անկարգու-

Թեանց ետևէ եղաւ . ու ինքզինքը շուտով
 խայտառակելու համար՝ ուղեց կայսերէն
 ալ ապստամբիլ՝ վախնալով Թէոդոսի բա-
 րեպաշտու թե՛նէն, որ չըլլայ թէ լսելով
 սուրբՆերսէսին մահը՝ իրմէն վրէժխնդրու-
 թիւն մը ընէ: Անոր համար Տերենտիանոսն
 ալ Հայաստանէն վճռնտեց, ու ըսկաւ զօրք
 ժողովել . Տերենտիանոս թողթով հրաման
 առաւ կայսերէն՝ Պապին հետ պատերազ-
 մելու . մէկէն նոր զօրք ժողոված՝ յանկարծ
 վաղեց թագաւորին վրայ, զարկաւ ցըր-
 ւեց զօրքը , բռնեց Պապ թագաւորը , ու
 կայսեր տարաւ: Այսրը անոր ըրած ապե-
 րախտու թիւնները աղէկ մը երեսը զարնե-
 լէն ետև , հրաման տուաւ ու սակրով
 գլուխը կտրեցին իրեք տարի թագաւորե-
 լէն ետքը : Անարժան թագաւորին ար-
 ժանաւոր մահ : Ավսո՞ս , որ ասանկ թա-
 գաւորները մեր ազգին նախատինք եզան-
 որոնց պատմու թիւնը թէ որ պէտք չըլլար
 մեզի զգուշութեան և խրատ առնելու
 համար , լաւ էր բոլորովին աշխարհքէս
 ջնջել , քան թէ պատմելով ամէնուն սր-
 տին մէջ անցած գացած ցաւերը նորոգել
 տալ :

ԻԶ

Հ. Պապ թագաւորին մեռնելէն ետև
 Հայոց վիճակը ինչ եղաւ :

Պ. Մեծն Թէոդոս Պապին տեղը թա-
 գաւորեցուց Վարազդատ Արշակունին ,

որ շատ կարըճու թիւններ ըրած էր ոչիմ պիական խաղերու մէջ, թէ ասարոնի մէջ առիւծներ ըսպաններ էր, և շատ պատերազմական քաջութիւններ ալ ըրեր էր: Անգամ մը Լոնդոն քաղաքացոյ դէմ պատերազմին մէջ մինակ ինքը հինգ հոգւոյ դէմ ելաւ ու հինգն ալ մէկզմէկու ետևէ ըսպաննեց: Անգամ մըն ալ բերդի մը վըրայ գնաց, ու տասնըեօթը հոգի մէկմէկու ետևէ նետով զարկաւ մեռուց: Երբոր թագաւորութիւնը առաւ ու Յունաց զօրքով կուգար Հայաստան, Դարանաղեաց դաւառին մօտերը Ասորի աւազակներու հանդիպեցաւ, վըրանին վազեց. անոնք նեղը մըտան, Եփրատ գետին վըրայ նեղ տեղ մը կամուրջի պէս մեծ փայտ մը դրած էր, վըրայէն անցան, փայտը գետը ձգեցին: Արազգատ կատաղաբար վազեց ցաթկեց քսանւերկու կանգունի չափ լայն գետին վըրայէն, ու հասաւ ետևնէն՝ զիրենք բռնեց: Արազգատ եկաւ Հայաստան, շատ քաջութիւններով բոլոր թշնամիներուն յաղթեց. բայց տեսնելով որ Յոյն զօրապետները կուզեն իր վըրայ իշխանութիւն ցրցունել, անոնց ձեռքէն ազատելու համար՝ ուզեց Շապուհ Պարսից թագաւորին հետ գաշինք դնել ու անոր հարկատու ըլլալ: Երբոր իմացաւ կայսրը՝ զինքը կանչեց Աստանդնուպօլիս, ասպրտպրելով զօրավարներուն որ եթէ չուզէ երթալ, բռնեն կապեն ու անանկ տանին: Արազգատ յու-

սալով որ կրնայ ինքզինքը արդարացը նեւ՝ դնաց կայսեր: Բայց կայսրը առանց տեսնուելու՝ երկրթէ շղթայով աքսորել տուաւ զինքը թուլիս կղզին:

Հ. Վարազդատէն ետև ո՞վ իշխեց Հայոց վերայ:

Պ. Կայսրը տեսնելով որ Հայու թագաւորները միշտ կապստամբին իրմէ, ուղեց երկու թագաւոր դնել, որպէս զի ուժերնին սկարանայ. և թէ որ մէկը ապրտամբէլու ըլլայ նէ, մէկալը հաւատարիմ մնայ. անոր համար Պապին երկու որդիքը Արշակու Վաղարշակ՝ որ կայսեր քովը պատանդ էին, թագաւոր գրաւ Հայոց վերայ: Արշակ նստաւ Գուինին մէջ, և Վաղարշակը Եկեղեաց գաւառը Երիզա քաղքին մէջ, որ տարին չիլմնցուցած մեռաւ: Աս միջոցիս Շապուհ Պարսից թագաւորը հաշտութիւն խօսեցաւ Յունաց հետ, և որոշեցին որ Հայաստանին արեւելեան կտորը Պարսից հարկատու ըլլայ, արեւմտեան կտորը Յունաց: Արշակ երրորդը չուզելով Պարսից տակը ըլլալ, աթոռը Երիզա քաղաքը փոխեց. շատ իշխաններ ալ իրեն հետեւեցան: Անտենը Շապուհ իր կտորին վերայ թագաւորցուց Խոսրով երրորդը, իշխաններուն ալ մարդ խրկեց որ ետ դառնան. անոնց մէջէն մէկքանի նախարարներ ետ դառնալու առտեն հանդիպեցան Արշակին գանձին, որ Անիամրոցէն Ծովաց գաւառը կրտանէին, յափըշտակեցին Խոսրով թագաւորին

386

388

տարին : Արշակ երրորդ ուղեց որ ետ տայ . բայց երբոր խոսրով ամենևին մտիկ չըլաւ , անատենը Արշակ պատերազմի ելաւ խոսրովին գէմ . երկու կողմէն ալ սաստիկ ջարդ ըլլալէն ետեւ , Արշակ բոլորովին յաղթըւեցաւ ու դարձաւ Նրզնկայ , հիւանդացաւ ու մեռաւ հինգ կամ եօթը տարի թագաւորելէն ետեւ : Անմիաբան մարդը աղքակից եղբօրը գէմ անիրաւու թիւն ընելը իրաւունք կը կարծէ . փոխանակ աւազակները պատժելու , անոնց կռնակ կենալը իրեն փառք կըստպէ , և թշնամիները ջարդելու տեղ իր աղքը կտորելով կը պարծի : Տես ի՞նչ վնասակար բան է աղքի մը վերայ իշխան ըլլալը , երբոր ան մարդը չէ կրցած իշխել իր կերքերուն վերայ :

Իւ

Հ . Արշակ երրորդին մեռնելէն ետեւ Հայաստանին ան կողմին վիճակը որ Յուսայ տակն էր՝ ի՞նչ եղաւ :

Պ . Վայսրը թագաւորի տեղ յոյն կոմս մը խրկեց . անոր համար նախարարներն ալ նեղացած՝ ելան խոսրովին քովը գնացին : Անատենը խոսրով երրորդ կայսրէն խնդրեց որ Յունաց մասին վերայ ալ ինքն իշխէ ու հարկը տայ : Վայսրը վախնալով որ եթէ Հայերը միաբանին՝ կրնան ուղածնին առաջ տանիլ , հաւնեցաւ անոնց խնդիրքին : Եւ այնպէս ըսկսաւ

Խոսքով երրորդ տիրել բոլոր Հայոց, հարկ Բ. Ե.
տալով կէս մը Յունաց՝ կէս մըն ալ Պարսից:

Հ. Խոսքով երրորդ կրրցաւ ինչւան
վերջը Թագաւորել:

Պ. Աւանց մտածելու գործք ընողը
մտքէ չանցած փորձանքներու մէջ կիյնայ:
Երբոր Ասպուրահէս կաթուղիկոսը մե-
ռաւ, տեղը նստուցին Սահակ պարթևը
մեծին Ներսէսի տղան: Ան ատենը մէկ
քանի նախարարներ՝ որոնք Խոսքով Թա-
գաւորին հետ Թշնամութիւն ունէին,
գնացին ամբաստանեցին Շապուհին, Թէ
Հայերը ասպտամբութէ ետեւէ են, որով
հետև առանց Պարսից Թագաւորէն հրա-
ման առնելու կաթուղիկոս գրին. Շա-
պուհն ալ հաւտալով, հրաման գրեց Խոս-
քով երրորդին՝ որ ելլէ գուռը գայ. Խոս-
քով առանց առաջը և վերջը մտածելու՝
յանգիմանեց Շապուհին գեսպանները ու
վաճակեց. և մէկէն Արկադէոս կայսեր ալ
գեսպան խրկեց որ իրեն օգնէ. բայց
ան յանձն չառաւ: Ան ատենը Շապուհ
իր Արտաշիւր որդին շատ զօրքով Հայաս-
տան խրկեց: Խոսքով յուսահատած
ուրիշ ճար չիգանելով, ելաւ գնաց Ար-
տաշիւն: Ան ալ ծանր շղթայով կասեց
զինքը, ու տեղը անոր Աւամշապուհ եղ-
բայրը նստեցուց. սուրբ Սահակն ալ
կաթուղիկոսութենէն ձգեց. և Գազաւոն
Աամնարահանը որ խիստ զօրաւոր իշխան
մըն էր, խաբէլով բռնեց շղթայի զարկա-
ու գարձաւ: Ան ատենը Շաւարշ Գազա-

ւոնին եղբայրը և Պարգև նախարարը եօթը հարիւր կարիճ հետերնին առած գաղտուկ ճամբով յանկարծ Արտաշիրին բանակին վերայ վաղեցին՝ խոսրովը ազատելու համար . ափսոս որ կտրըճութիւններնուն համեմատ յաջողութիւն չունեցան . վասն զի հաստատ շղթաներով կապկրպած էր խոսրով: Բայց իրենք մեծ շփոթութիւն ձգեցին բանակին մէջ, շատ մարդ ջարդեցին, և Երկայն ատեն գիմանալէն ետև Շաւարշը զարնըւեցաւ, Պարգևն ալ ճարը հատած փախչելու ատեն բռնեցին ու Արտաշիրին հրամանովը կաշին հանեցին, և խոսրովը Անյուշ ըսւած բերդը տարին ու Պարգևին կաշին ալ գիմացը կեցուցին: Ի՞նչ մեծ կսկիծ . ի՞նչ մեծ թշուառութիւն: Պատճառը անխոհեմութիւն էր:

Հ. Առամհապուհ կրրցաւ խաղաղութեամբ թագաւորութիւն քշել:

Պ. Առամհապուհ բնութեամբ խաղաղասէր ըլլալով, ջանաց Պարսից հպատակութիւն ցուցրնել և աղդը հանդարտեցրնել: Առամկրրման Պարսից թագաւորը՝ Առամհապուհին հաճոյական բան մը ընելու համար խոսրով երրորդը Անյուշ բերդէն հանել տուաւ, ու պատուով կրպահէր: Ան ատենը սուրբ Սահակն ալ տեսնելով որ աշխարհս խաղաղութիւն գտաւ, ըսկսաւ եկեղեցիները նորոգել և ջանալ որ տգիտութիւնը ազդին մէջէն վերցըրի, որ է պատճառ ամէն տեսակ ան-

կարգութիւններուն . ուստի սուրբ Մես-
 րոպին հետ մէկ եղած ըսկսան ամէն ջան-
 քը ընելու . և տեսնելով որ մեծ արդէլք
 մըն է ազգին գիր չունենալը, նախ սուրբ
 Մեսրոպ Աստուծոյ մասնաւոր յայտնու-
 թեամբը գիր գտաւ՝ Քրիստոսի 406 թուա-
 կանին : Ուստի շատ տղաքներ ժողվեցին ,
 կրթեցին , խրկեցին Ազէքսանդրիա , Ա-
 թէնք , Կոստանդնուպօլիս և ուրիշ երևելի
 ուսումնական քաղաքներ , ու ըսկսան ա-
 մէն հարկաւոր գիրքերը հայերէն թարգ-
 մանել . որով ըսկսաւ ազգին մէջ գիտու-
 թեան սկզբունքը մտնալ :

Ք. 17
396

406

Աւամշասպուհ հանդարտութեամբ ու
 կարգով քանրմէկ տարի թագաւորեւէն
 ետքը մեռաւ : Եւ իր տղան Արտաշէսը
 տասը տարւան խիստ պզտիկ ըլլալուն ,
 սուրբ Սահակին ձեռքով նախարարները
 աղաչեցին Յազկերտ Պարսից թագաւո-
 րին , ու խօսքով երրորդը նորէն բերին
 աթոռը նստեցուցին :

415

ԻԸ

Հ . խօսքով երրորդը երկրորդ անգամ
 օրջափ ատեն թագաւորեց :

Պ . խօսքով հազիւ թէ տարի մը թագա-
 ւորեց , մեռաւ . և անատենը Հայոց երկիրը
 մեծ ալէկոծութեան մէջ ինկաւ . ամէն
 կարգերը սակն ու վըրայ եղան : Մեր
 ազգին գէշ բնութիւնը անձային թոյլ-
 տուութիւնը օրէ օր աւելնալով՝ սկիզբէն

Ք. Ե ինչւան ետքը թող չէր տար որ մարդկու թիւն և խնամտութիւն ծաղկի մէջերնին անձպաշտութեան հետ մէկտեղ :

Հ. Խոսքով երրորդին մեռնելէն ետև ինչ պատճառաւ ազգը տակն ու վերայ եղաւ :

Պ. Յաղկերտ Պարսից թագաւորը ուղեւորվ հայերը արևապաշտ ընել, իր
 415 Շապուհ որդին անոնց թագաւոր գրաւ, պատուիրելով որ Պարսից տօներով նախարարները զբաղեցնէ : Հայերը չուղեւորվ ընդունեցան զինքը, ու ըսկասան արհամարհելով անոր հետը վարւիլ : Շապուհ շատ նեղացաւ աս բանիս վերայ. երբոր ըսեց թէ իր հայրը Յաղկերտն ալ հիւընդցեր է, Պարսկաստան դարձաւ հրաման տալով զօրագլխին, որ մեծամեծ նախարարները բռնէ ետևէն խրկէ : Եւ ինքը Տիսբոն հասած օրը Յաղկերտ մեռաւ, ծառաներն ալ Շապուհը ըսպաննեցին, ու Առամ երկրորդ թագաւորեց Պարսից վերայ : Երբոր նախարարները ըսեցին Շապուհին հրամանը ամենքը մէկ եղած Պարսից զօրացը դէմ ելան, զօրագլուխը ու զօրքերուն շատը սպաննեցին, մնացածն ալ փախուցին. իրենք ալ Առամէն վախնալով քաշուեցան բերդերու մէջ : Աս ինչ անխոհեմ դործք է : Ալ լաւ է ամենևին իշխան չունենալը, քան թէ ասանկ անմիտ իշխաններէն կառավարւիլ, որ ազգին խեղճութեանը օգուտ մը չընելէն ետքը, իրենց խեղճութեանը մէջ

ալ ապրելու թող չեն խտար : Հայաստանին ան կտորն որ Պարսից մասն էր՝ ան գլուխ մնացած ոտքի տակ գնաց : Առամն ալ մեկալ կողմէն վրէժ առնելու համար շատ չարիք ըրաւ : Սուրբ Սահակն ալ տեսնելով որ խաղաղութիւն չիկայ Պարսից մասին մէջ, ելաւ Յունաց մասը գնաց. հոն թէպէտ առջի բերանը չէին թողուր Յոյն իշխանները, բայց սուրբ Սահակ թէոգոս կայսրէն հրաման բերել տուաւ, ու ըսկաւ հոն ալ հայերէնը ծաղկեցնել :

Հ. Խոսորով երրորդին մեռնելէն ետքը հայերը ինչպէս կըրցան Արշակունի թագաւոր ունենալ :

Պ. Առամ Պարսից թագաւորը տեսնելով որ Հայաստան երեսի վերայ մնացած, հարկը երթալով կըսկսիկեր, հաշտութիւն ըրաւ ծածկըւած նախարարներուն հետ, ու Արտաշէս երրորդը Առամչապուհին տղան տասնըութ տարւան թագաւորեցուց հայոց, անունն ալ Արտաշիր դրաւ : Թէպէտ առջի բերանը ուրախացան նախարարները, բայց Արտաշէս երրորդ բնութեամբ մոլի ըլլալով, և սուրբ Սահակէն շատ խրատուած ճամբայ չիւլով, ըսկաւ ատելի ըլլալ նախարարներուն. անանկ որ տշխտութիւնը, ազգատեցութիւնը և թագաւորին անկարգութիւնը մէկտեղ նախարարներուն սիրտը շարժեցին՝ որ ըսկսան փափաքիլ թագաւոր չունենալու, հասկա բողբոլին Պարսից իշխանութեան տակը մտնելու : Թէ-

Ք. Ե

պէտ սուրբ Սահակ շատ ջանաց որ միաբեր-
նին փոխէ, բայց ճար չեղաւ . չիկրրցան
հասկընալ թէ ազգը ատելը և ազգին չա-
րիքը ուզելը՝ իրենք իրենց չարիք փափաքիլ՝
և ինքզինքնին կամօք թշուառութեան մէջ
ձգել է : Գնացին Առամին ամբաստանե-
ցին Արտաշէսը . խնդրելով որ ջնջէ իրենց
ազգին թագաւորութիւնը , ու վերա-
նին Պարսից իշխան մը դնէ : Ասանկ ան-
մըտութիւն աշխարհքիս մէջ մէկ տեղ մը
և մէկ ատեն մը եղած չէ : Առամ կանչեց
թագաւորն ու սուրբ Սահակը ու հար-
ցուց անոնց . թէպէտ Արտաշէս ինքզինքը
աղէկ արդարացուց՝ որ տէրութեան և կա-
ռավարութեան դէմ բան մը չէ ըրած , և
սուրբ Սահակն ալ աղէկ պաշտպանեց
զանիկայ . բայց Առամ ուզելով վերցընել
հայոց տէրութիւնը , սուրբ Սահակը բանտ
դնել տրւաւ . և Արտաշէս երրորդն ալ
Պարսկաստանին ներսի կողմերը քշել տը-
լաւ՝ վեց տարի թագաւորելէն ետքը . որ
հոն քանի մը տարիէն մեռաւ : Իսկ
Առամ Ահմէտ շապուհ անունով պար-
սիկ մը մարզպան դրրաւ հայոց վերայ , և
նախարարներուն ալ պարգևներ տալով
տեղերնին խրկեց : Ասանկ մտքէ չանցած
սարսափելի ազգաատեցութեամբ մը հայ-
երը իրենց ազգին Արշակունեաց ցե-
ղին թագաւորութիւնը ջնջեցին Քրիստոսի
428 թուականին , 580 տարի դիմանալէն
ետքը : Մէջերնին ուսմունք կը ծաղկի կոր
ըսելով ազգը ուրախանալու ատեն , տգի-

428

առութեան խաւարը այսպիսի շուք մը ձը-
գեց ազգին վերայ, ուսկից ազատիլը ան-
կարելի եղաւ ինչւան աս օրս :

Ի Թ.

Հ . Վէհմիհրչապուհին մարզպանու-
թեան ատենը ի՞նչ հանգիստեցաւ :

Պ . Վէհմիհրչապուհ բնութեամբ աղէկ
մարդ ըլլալով, տասնըջորս տարի խաղա-
ղութեամբ կառավարեց : Ան միջոցին
սուրբ Սահակին տեղը անպիտան մար-
դիկ Պարսից հրամանով ըրսկսան կաթուղի-
կոս նստեցնել . առով շատ անկարգու-
թիւններ կրլային ազգին մէջ . ինչւան
որ ձանձրացած նախարարներէն շատերը՝
Վ. Լամ Պարսից թագաւորէն խնդրեցին
սուրբ Սահակը . և որովհետեւ շատերն ալ
չէին ուզէր, միշտ փափաքելով իրենց
ազգին կործանումը, Վ. Լամ հրաման տը-
ւաւ՝ որ միայն ձեռնադրութիւնները
սուրբ Սահակ ընէ, բայց կառավարու-
թեանը չիսառնելի : Եօթը տարի ալ
ասանկ երթալէն ետեւ, եկան նորէն նա-
խարարները աղաչեցին սուրբ Սահակին, որ
նորէն յանձն առնէ կաթուղիկոսութիւր .
բայց սուրբ Սահակ հրաժարեցաւ՝ յայտ-
նելով իր տեսած տեսիլքը, որ արշակունեաց
թագաւորութիւնը և քահանայութիւնը
լուսաւորչին ցեղէն պիտի վերցըւէին . և
թէ իրենց ըրած ապերախտութեան և
անզգամութեան պատիժները պիտի քա-

432

Ք. Ե շէն : Ու ինքը առանձնացաւ Բլուր գեղը
 և տարիէ մը վախճանեցաւ :

Տ. Վէհմիհրջապուհին ո՞վ յաջորդեց
 մարդպանութեամբ :

442 Պ. Վասակ Սիւնիին , որ Հայ ըլլալով
 պէտք էր որ ազգին ուրախութիւն պատ-
 ճառէր , բայց անոր հակառակն եղաւ :
 Երբոր Յազկերտ երկրորդ՝ Պարսից թա-
 գաւոր նստաւ , միտքը դրեր էր որ Հայերը ,
 Աղուանքը և Վիրքերը Պարսից ազանգը
 դարձնէ . և Միհրնէրսէհ իր հազարա-
 պետն ալ ալ աւելի վերայ կուտար :
 Ան միջոցին Վարազվազանն ալ Վասակ
 Սիւնիին փետան թշնամութիւն ունենա-
 լով Վասակին , գնաց հաւատքը ուրացաւ
 ու ըսկսաւ ամբաստանել Վասակը , և յոր-
 դորէլ թագաւորը , որ Հայերը Պարսից
 ազանգը դարձնելու հրաման հանէ , յու-
 սալով որ ինքը անով փառքի կըհանի :
 Անատենը Յազկերտ ալ աւելի գրգռուած
 մտքերուն խորհրդովը , հրաման հանեց ,
 որ Հայերը , Աղուանք և Վիրք իրեն զօրք
 խրկեն : Ասով ազգին գլխաւորները կու-
 ղէր հեռացնել , որ ազգը դարձնելը գիւ-
 ըին ըլլայ : Եւ որպէս զի ինքը սիրելի ըլ-
 լայ Հայոց , Վասակ Սիւնիին մարդպանու-
 թեան իշխանութիւն տուաւ : Աս եղաւ
 Վարդանանց հռչակաւոր պատերազմին
 ըսկիզբը : Անատենը Վասակ մարդպան
 եղաւ , և Վարդան մամիկոնեանը շատ զօր-
 քով խրկեց թագաւորին , որ գնաց երկայն
 ատեն պատերազմ ըրաւ Հոնաց գէմ :

Հոն ըսկսաւ Յազկերտ յորդորել նա խարարները որ ուրանան հաւատքնին: Բայց յոյսը սարսաղ ելլելով շատ նեղացաւ ու ըսկսաւ զանոնք չարչարիել:

Ատոմ՝ և Մանածին՝ը նախարարները տեսնելով որ Յազկերտին միտքը չար է, առին իրենց զօրքը ու ետ դարձան: Յազկերտ ետննուն զօրք խրկեց ու ամենն ալ նահատակել տուաւ: Իր քովը եղած նախարարներէն ալ մեկ քանին չարչարեց, բանադնել տուաւ շատ սպառնալիքներով որ հաւատքնէն դառնան: Պատերազմը լըմընցնելէն ետքը զօրքերը արձրկեց, ու Դենչապուհ անունով մեկը Հայաստան խրկեց իբրև քննիչ, որ շատ նեղուծիւն տուաւ Հայերուն: Բայց երբոր անով ալ ճարչեղաւ, Յազկերտ իր նախարարներուն և մոգերուն խորհրդովը թուղթ գրեց Հայերուն, որ կամ Պարսից աղանգը ընդունին և կամ սպտասխան տան: Անատենը Յովսէփի կաթուղի կոսր ժողովքով սաստիկ պատասխան մը գրեց ան թուղթին: Պարսիկները զարմացան խեղացի սպտասխանին վերայ: Բայց Յազկերտ կատղած, բոլոր Հայոց մեծերը դուռը կանչեց ու բանադրաւ, ըստիպելով որ՝ կամ հաւատքնին ուրանան և կամ աքսորուին, որ Հայաստանը անտէր մնալով մոգերուն ձեռքը մատնուի: Երբոր նախարարները ասանկ նեղ մտան, մեկ քանին արդէն հաւատքի վերայ թոյլ ըլլալով խորհուրդ ըրին, ու իբր թէ թագաւորը խաբելու համար յանձն առին

մոգու-թիւնը , և մեծ պատիւ ընդունելով
Յազկերտէն՝ դարձան Հայաստան՝ շատ
մոգեր և զօրքեր հետերնին բերելով : Հայե-
րը երբոր խմացան եղածը , և տեսան մոգե-
րուն բազմութիւնն որ կուզէն եկեղե-
ցիները գոցել , տակն ու վրայ եղած ըս-
կրսան գէմ դնել մոգերուն , շատ մարդ
ալ վերաւորեցին : Ան ատենը Արարդան
գնաց Յովսէփի կաթողիկոսին օտքը ինկաւ ,
խմացուց իրենց միտքը , և ըսկսաւ ուրիշ նա-
խարարներուն հետ գէմ դնել Պարսից
զօրքին : Բայց Ասասկ մարդպանը սրբ-
տանց ուրացած ըլլալով , ըսկսաւ խաբէու-
թեամբ յորդորել որ առջի բերանը թոյլ
տան մոգերուն , ու ետքը ինքը ճամբայ
կրդնէ զանոնք : Եւ ասանկ շատ տեղ ըս-
կրսան կրակատուններ շինել : Արարդան
ուրիշ նախարարներուն հետ վազեց Ա-
սակին հետ միացած զօրքին վրայ , շատերը
ջարդեցին և Ասասկն ալ բռնեցին . բայց
ետքը զինքը թողուցին՝ աւետարանին վը-
րայ երգում ընելուն համար : Նորէն ժող-
վուեցան Շահապիվան քաղաքը հարիւր
հազարի չափ մարդ՝ մէկ սիրտ մէկ հոգի ,
բոլորովին վաւերաւու համար Պարսիկ-
ները , և ըսկսան աւրել կրակատուն-
ները , և ըսկսան մոգերը : Ան միջոցին
լսեցին որ Աղուանից երկիրն ալ մոգեր
խրկուեր են , և Աղուանք իրենցմէ օգնու-
թիւն կուզէն , իրենք ալ Յունացմէ օգ-
նութիւն ուղեցին , բայց չիգտան : Ան ատեն
ուրիշ ճար չունենալով , իրեք բաժնեցին

բոլոր զօրքը • մէկը ներշնչապուհ՝ Արծրու-
 նիին տըւին՝ Պարսից դէմ կենալու համար,
 մէկալը Ասասկին՝ որ Հայաստանը պահէ,
 երրորդն ալ Աարդանին՝ Աղուանից կողմը
 երթալու համար : Երբոր բաժնուրեցան
 մէկզմէկէ, Աարդանին դէմ հանդիպեցաւ
 Պարսից մեծ խումբը • զարկին ջարդեցին,
 ցրուեցին Պարսից զօրքը, անցան Աղուանք,
 ու հոն բոլոր մոգերը ջարդեցին ու երկիրը
 ազատեցին, անցան անկէ դէս ի Հոնաց կող-
 մը, հոն Յաղկերտին շինած բերդը քակե-
 ցին, և Հոնաց հետ միաբանու թեան դաշինք
 դրին : Աս միջոցիս Ասասկն որէն հաւատ-
 քը ուրանալով՝ բոլոր Հայաստան տակն
 ու վերայ կընէր : Երբոր լսեց Աարդան,
 մեծ ցաւով մէկէն դարձաւ Հայաստան,
 ու մեծ կոտորած ըրաւ Ասասկին հետ
 միաբանողներուն դէմ : Ետքը տեսնե-
 լով որ անմիաբանու թեամբ տկարացած
 գլուխ պիտի չելեն, Յաղկերտին դէս-
 պան խըրկեց թէ, թէ որ իրենց քրիստո-
 նէութեանը չիդպչի, նորէն կըհնազան-
 դին : Յաղկերտ ալ տեսնելով զամ չարիքը,
 յանձն առնել ձևացուց • բայց երբոր անոր
 միտքը խնացան՝ Հայերը թոյլ չիկեցան •
 անատենը ալ յուսահատած Յաղկերտ,
 Միհրնէրսէն հազարապետը շատ զօրքով
 Հայաստանին վերայ խրկեց որ կամ դար-
 ձընէ, կամ կորսընցընէ զամէնքը : Միհրնէր-
 սէն առջի բերանը Ասասկին ձեռքով խաբ-
 խըբէլով ջանաց գործք տեսնելու • բայց
 երբոր չէյաջողեցաւ, տեսնելով ալ որ Աս-

Բ. Ե սակ հաստատուած է չարութեանը մէջ , զորքը անոր յանձնեց ու ինքը դարձաւ Յաղկերտին, և բոլոր յանցանքը Ասասկին վրայ ձգեց : Անտոնը Աարդանին հրամանով վաթսուներկեց հազարի չափ զօրք ժողովեցան Արտաշատ քաղքին մէջ , անկէ անցան՝ Աւարայր դեղին և Տղմուտ դետին քով բանակնին դրին , ու մեծ ջերմեռանդութեամբ հաւատքի համար մեռնելու պատրաստուեցան :

451 Աւաւտանց որ հողեգալստեան եօթներորդ օրն էր , ըսկսան պատերազմիլ մեծ կորճութեամբ . բայց հինգ հազար հողիի չափ մարդիկ Ասասկին հետ սիրտերնին մէկ ըլլալով , ըսկսան շփոթութուն ձգել զօրքին մէջ ու փախչիլ : Մնացածները ինչւան իրիկուն զարնըւելէն ետքը , Աարդանը վերաւորեցաւ ընկաւ . զօրքն ալ արդէն հողնած , բոլորովին շփոթեցան , գլուխնին քաշեցին՝ ասդիս անդին ցրուեցան : Երկուհարիւր իննսուներկեց հողի ինկան պատերազմին մէջ . եօթը հարիւր քաւսուն հողիէն աւելի ալնոյն օրերը ասդիս անդին եղած պատերազմներուն մէջ մեռան , բոլորը մէկէն կրնէ հազար երեսուներկեց հողի : Իսկ Պարսիկներէն անօրը ինկան իրէք հազար հինգ հարիւր քաւսուներչորս հողի : Այսչափ չարիքը բաւական չիսեպելով Ասասկ , ըսկսաւ խաբէութեամբ շատերը բռնել ըսպաննել . և Յովսէփ կաթողիկոսը՝ մէկ քանի քահանաներ ալ մէկտեղ բռնեց շղթայի զարկաւ :

Աս բաներս տեսնելով ուրիշ նախարարներն ալ, խուճբ խուճբ եղած դացին Պարսից երկիրներուն վերայ, ըսկսան քաղաքներ աւրել, մարդիկը ջարդել՝ գերի առնել : Մուշկան Նիւսալաւուրտ Պարսից զօրապետը գրեց Յազկերտին, թէ աս ամէն շարեաց պատճառը Աստանն է : Յազկերտ խուոված՝ որ մոգքի գրածը չիյաջողեցաւ, չէր գիտէր ինչ ընելիքը . մէկէն հրաման խրկեց, որ Ատրորմիզդը նորէն մարդպան գրբւի, և թոյլ տրբւի հայոց իրենց կրօնքը պաշտելու . և թէ հայերուն գլխաւորնէրը խաբէլով դուռը խրկէ, իբր թէ նոր կարգ գնելու վերայ խօսելու համար, բայց միտքը ան էր, որ մեծերը վերցընելով մէկալնոնք հանդարտին :

452

Լ.

Հ. Ատրորմիզդ մարդպան ըլլալէն և աւհայաստանին խուովու թիւնը ինչ վիճակի մէջ մնաց :

Պ. Ատրորմիզդ եկաւ շղթայի զարկած քահանաները Յազկերտին խրկեց : Նմանապէս նախարարներն ալ երգում առնելով ելան դացին, թէպէտ և յայտնի իմացան որ խաբէու թիւնն է : Ատրորմիզդ հայաստանին համար հրաման տրւաւ որ ամէն մարդ բանի գործքի հետ ըլլայ և իրենց կրօնքը պաշտեն . թէպէտ ասդ իս անդին կրակատուններ և անկարգութիւններ մնացին : Իսկ նախարարները երբոր հասան

Ք. Ե Յազկերտին, զամէնքն ալ բանտ դնել տրւաւ. ետքը դատաստանի նստաւ, ու շատ քննութիւն ընելէն ետեւ, Ասասկը յանցաւոր դատելէցաւ ու մահապարտներուն բանտը դրուեցաւ. հոն Ասասկ յուսահատած որդնտեցաւ ու մեռաւ:

Թշուառ մահը լսողը վերան կըցաւի. բայց վարքը կարգացողը՝ ազգին վերայ հասուցած չարիքը կուլայ, ու անոր անէծք կուտայ:

Յազկերտ թէպէտ նախարարներուն քահանաներուն վերայ յանցանք չկըրցաւ գտնալ, բայց զանոնք ալ բանտ դնել տրւաւ, հրաման տալով որ երբոր հաւատքնին ուրանան՝ ազատին: Եւ երբոր հոնաց դէմ՝ ըրած սլատերազմը յաջող չի գընաց, բարկացաւ ու քահանաները գաղտուկ ըսպաննել տուաւ:

454 Նախարարներն ալ չորս տարի բանտին մէջ տանջելէն ետքը, Շղոմշապուհ իշխանին աղաչանքով

456 վը ազատեց, բայց հրաման չիտրւաւ ետ դառնալու: Երկրորդ տարին ինքը մեռաւ. ու Պերոզ սզտի տղան երբոր նստաւ, ու թը տարի զանոնք իրեն գործքերուն

464 աշխատոցընելէն ետքը, երբոր Ատրվնասայ նոր մարզպան կերթար կոր Ատրորմիզգին տեղը, զիրէնք ալ ազատ թողուց որ երթան:

Ահա ասանկ դժոխքը բոլոր ուժը թափեց ու չի կըրցաւ խախտել հայոց հաւատքը: Գովէլու արժանի է հայոց կրօնասիրութիւնը, բայց խիտ ցաւելու է իրենց ընկերսիրութեան սպակտութիւնը: Թէոր

կրօնասիրութեամբ Պարսից աղանդին յաղթեցին, ու իրենց կրօնքը դարձեալ հաստատ սլահեցին, ընկերսիրութեամբ Պարսից տէրութեանն ալ կըրնային յաղթել ու իրենց տէրութիւնը և կրօնքը աւելի ամբըցընել: Եւ թէ որչափ վնաս ըրաւ աս սլահսութիւնը նաև կրօնասիրութեան, կաղաչեմ որ կարգացողը աս սլահսութեան ամէն մէկ կտորին վերայ աղէկ մտածէ, գործքերուն սլատճառները միտքը բերելով: Եւ թէսկտ եղածին վերայ ցաւելով անցածը ետ չիդառնար, բայց գուցէ անկէ շարժելով կարգացողին սիրտը, ինքն ալ իրեն գործքերովը նոր ցաւ չիսլատճառէ աղգին սրբին:

Հ. Ատրվշնասպին մարզպանութեանը ասանը Հայերը ինչպէս անցուցին:

Պ. Գարձան նախարարները և ըսկսան խաղաղութեամբ իրենց գործքին հետ ըլլալ: Մեծին Վարդանայ Հմայեակ եղբայրը չորս աղայ թողուցեր էր, Վահան, Վասակ, Արտաշէս, Վարդ: Ատնցմէ Վահանը խիստ քաջ ըլլալով և խելացի վարմունք ունենալով ամէնուն սիրելի էր, նաև Պերոզի Պարսից թագաւորին: Անոր համար ուրացեալ նախարարները, որ դեռ կը գտնուէին Հայաստանին մէջ, անոր նախանձեցան ու վերան ըսկսան ամբաստանութիւն ընել: Անատենը Վահան որպէս զի Պերոզին աչքէն չիյնայ, գնաց ինքն ալ ուրացաւ հաւատքը. բայց ետքէն խիղճը զարկաւ, ու խիստ անհանգիստ կեանք մը

Բ. Ե ըսկսաւ անցընել: Աս միջոցիս Պերող Հեփ
 թաղներուն վերայ սրատերազմ՝ բանա-
 լով: Ատրվչնասպին լուր խրկեց՝ որ Հայոց
 զօրքը առնէ ու գէպի՝ Աղուանք երթայ:
 Երբոր սրատերազմը լրմնցաւ ու Հայոց բա-
 նակը ետ դարձաւ, եկան Շիրակայ դաշտին
 մէջ բանակեր էին. զօրաց մէջ շատ ուրա-
 ցեալ նախարարներ ալ գտնուելով՝ կար-
 համարհէին քրիստոնեաները: Բանակին
 մէջ ձայն ելաւ թէ՛ Ալախթանկ Արաց թա-
 գաւորը ապստամբեր է Պարսիցմէ և սրա-
 տերազմի կըպատրաստուի, շատ Հոնաց
 զօրք ալ բերել պիտի տայ: Ատով սիրտ առած
 քրիստոնեայ նախարարները՝ որ ուրա-
 ցեալներէն զատ բանակեր էին, խորհուրդ
 ըրին որ իրենք ալ գլուխ քաշեն. կեան-
 քերնին եկեղեցւոյ վերայ դնելով Հայաս-
 տանը մաքրեն կռասպաշտութիւն. Ահանն
 ալ գլուխ կեցաւ՝ իր ուրանալուն փոխա-
 րէն ընելու համար: Մէջերնէն Արազա-
 սուհ անունով մէկը գնաց մասնեց
 Պարսից բանակին: Ատրվչնասպ վախնա-
 լով որ վտանգ մը չըլլայ, ելաւ գէպի Պարս-
 կաստան փախաւ. Ահանեանք ետէն
 վազեցին, ետ մնացածներէն մէկբանի հոգի
 ջարդեցին ու Գուին քաղաքը դարձան,
 Սահակ բագրատունին մարդպան դրին
 481 Ատրվչնասպին տեղը, Ահանն ալ սպա-
 րապետ ընտրեցին ու սկսան սրատերազմի
 պատրաստուիլ: Ատրվչնասպը նորէն ու-
 րացեալները ժողովեց՝ եօթը հազար զօրքով
 եկաւ ինչևան Նախջուանայ մօտերը: Ալա-

հանին գունդը տեսնելով որ միաբանող խիստ քիչ կայ, և Արաց կողմէն ալ ձայն մը չիկայ, Այն ապաւինեցով միայն չորս հարիւր հոգի չորս գունդ ձեացուցած խրկեց թշնամիներուն դէմ Ակոռի գեղը : Պատերազմը ըսկսելուն պէս Գարջոյլ նախարարը իր հարիւրովը մէկտեղ անցաւ թշնամեաց կողմը : Անատեն մէկաշնոնք ալ աւելի կատղած՝ սաստիկ զարնըւեցան ու շատ մարդ ջարդեցին, Ատրվնասպն ալ մէկտեղ . ցրուեցին բոլոր բանակը և ուրախութեամբ դարձան Գուին քաղաքը :

ԼԱ

Հ . Սահակ բագրատունին մարզապետութեան ատենը հայերը կրցան խաղաղութիւն գտնել :

Պ . Մէջերնին անմիաբան, Պարսիցմէ սպաստամբած, մէկ կերպով մը չիկրցան հանգստանալ : Այսին զի Ահաւան սպարապետը տեսնելով եղած յաջողութիւնը, իմացուց մէկ քանի երևելի նախարարներուն, որ գան իր քովը ժողովն . ոմանք ելան գնացին, ուրիշները արհամարհեցին, և իրենց չէրթալը բաւական չարիք չիտպելով մէկալ գացողներուն ալ ետևէն վազեցին ու սպառնալով կուզէին արդիւնէլ որ չէրթան . բայց անոնց քաջութենէն յաղթուելով, աղէկ ջարդ մը կերած ամօթով ետ դարձան :

Պարսից թագաւորը լսելով աս եղածներ

ըր, շատ զօրք խրկեց Հայոց վերայ Ասորներ
 սէհին ձեռքովը հրաման տալով որ Աս-
 հանը ողջ բռնեն իրեն բերեն. և Ասհա-
 նին Աարդ եղբայրն ալ բանտ դնել տը-
 ւաւ : Ասհան սպարապետը չիկրնալով
 բոլոր Հայերը իրեն հետ միաբանել,
 առաւ իր քիչ զօրքը, Յովհան մանդակունի
 հայրապետն ալ մեկտեղ, որուն աղօթքին
 ապաւիներ էր, դնաց բանակեցաւ Ներ-
 սէհասպատ դեղը Պարսից բանակին մօտ :
 Առաւօտ եղածին սէս սպառերազմի ըսկը-
 սան, զարկին զարնըւեցան, առջի բերանը
 ըսկսան տկարանալ. Ասհան տեսնելով որ
 իր ընկերները վիասչելու կրնային կոր,
 խաչ հանեց երեսը, մտաւ թշնամեաց
 մէջը, և իր օրինակովը ամէնքն ալ սիրտ
 առնելով, մեծամեծ իշխաններ ըսպան-
 նեցին ու բանակը ցրուեցին : Ան միջոցին
 Ասհանին եղբայրն ալ Աարդ հրաշքով
 ազատած հասաւ քովերնին. անանկ որ
 ազատելուն կերպը ինքն ալ չէր իմացեր :

Հ. Ասհանեանք Արաց Ախթանի
 թագաւորէն կրրցան օգնութիւն դանել
 ինչպէս որ կրցուային :

Պ. Օգնութիւն դանելու տեղ աւելի
 վնասեցան. վասն զի Ախթանի Պարսիցմէ
 սպրտամբած ըլլալով և յուսահատած՝
 դէ՛հ դնելու ուժ չունենալուն համար,
 և Հայոց ուժը և միամտութիւնը դիտնա-
 լով, ձայն հաներ էր թէ հոնացմէ շատ
 զօրք օգնութիւն պիտի դան. կարծելով
 թէ Հայերը մէյմը գրգռուին նէ՛ բաւական

կրլան իրեն օգնելու : Երաւ կըյաջողէր
 Ալախթանկին մտածմունքը՝ թէ որ Հայոց
 անմիաբանութիւնը արգելք չընէր . որով
 հետևե Հայոց մեծ մասը կըփափաքէին
 գուցէ Պարսիկներէն աւելի որ իրենց ազգը
 վնասւի անպիտանանայ : Աերևնայ թէ
 կուզէին ազգին ջընջուելը որ իրենք միայն
 մնալով ազգին մէջ, իրենք միայն զօրաւոր
 սեպւին, և օտար ազգերէն փառաւորւին :
 Չէին գիտէր որ, թէ որ մէկը չուզէր
 փառաւորել իր ազգէն՝ ձեռքէն եկած
 բարեքը ազգին ընելով, օտար ազգերը
 զինքը փառաւորելու տեղ՝ աւելի կընա-
 խատեն ու գերիի պէս զինքը կըգործա-
 ծեն, ինչպէս որ ետքը փորձեցին իմա-
 ցան . բայց ինչևան այսօր առանց խրատ-
 ւելու : Աւասի Պերոզ երբոր ընց Ալա-
 հանեանց յաղթութիւնը, Միհրանը շատ
 զօրքով խրկեց Հայոց և Արաց գէմ : Ալախ-
 թանկ իմանալով, ինչպէս վերը ըսինք,
 լուր խրկեց Հայոց որ գան իրեն օգնեն,
 սուտ խոստմունք ալ ընելով թէ հոնք
 ալ շատ զօրքով պիտի գան մէկտեղ : Ալա-
 հան գրած գաշինքէն ետ չիկէնալու
 համար, առաւ զօրքը ու գնաց գէս 'ի
 Վանգարաց գաւառը : Ալախթանկ զի-
 րենք խաբխրեւելով թէ հոնաց զօրքը
 կուշանայ կոր, հոնտեղանքը ըստասել
 սուտաւ, ինչևան որ Միհրան հասաւ
 անթիւ զօրքով ու փիղերով : Հայերը տես-
 նելով իրենց քիչ ըլլալը, թշնամեաց բաղ-
 մութիւնը, և Ալախթանկին ըրած խա-

բէութիւնը , սրտերնին կտորեցաւ , ու
 շատերը գաղտուկ Միհրանին հետ խօսք
 դրին որ իրեն կողմը անցնին : Պատերազմը
 երբոր խառնըւեցաւ , ըսկասն հայերը
 խելքէ դուրս սաստիկ ջարդ աալ Պարսից
 զօրքին , բայց երբոր Ալախթանիկ իր զօր-
 քովը փախաւ և շատերն ալ Պարսից կողմը
 անցան , մնացածները տկարացած եա
 քաշւեցան դէսլի Տայոց կողմը Մկնա-
 սինջ գեղը հարիւր հոգւով . կէս մը յաղ-
 թած կէս մըն ալ յաղթըւած : Հոն
 նահատակւեցաւ Սահակ ասպետը և Ալա-
 սակ Ահանին եղբայրը :

Միհրան Ահանինն ետեէն ընկաւ կու-
 ղեր ձեռք ձգել , կմ հաշտութիւն հնազան-
 դեցրնեւ : Բայց Ահանինն սիրտը մեծ , և
 կտորըծութիւնը անյաղթելի , թէպէտ բո-
 լոր հայերու երեսէ ինկած , սաստիկ պա-
 տասխաններ դրեց Միհրանին , թէ ինչւան
 որ քրիստոնէութեան ազատութիւն չի-
 խոստանաս , հնազանդելիք չունինք : Նոյն
 միջոցին Միհրան եա կանչըւեցաւ :

Աս պատմութեան ո՞ր կտորին վերայ զար-
 մանալը մարդ չիգիտեր . ոմանց հաւատքին
 հաստատութեանը վերայ , ոմանց յանդրդ-
 նութեանը վերայ , շատերուն անմիա-
 բանութեանը վերայ , ուրիշներուն փո-
 փոխամտութեանը , շատերուն ալ ազգը
 և իր ընկերները արհամարհելուն վերայ .
 և որ մեծն է՝ դրեթէ ամէնուն խորին
 սոգիտութեանը վերայ , որ ինչ բանէն
 ինչ հետեանք կելէ չգիտնալով կիրքեր .

նին ինչ բանի որ առաջնորդէ՝ անոր ետեւն
կերթան. և այնպէս մէկ փոսէն մէկալ փո-
սը խնալով, ոչ երբէք կըրցեր են դուրս.
նին վեր վերցընել:

ԼԲ

Հ. Միհրանին ետ գառնալէն ետև
Վահան և Հայերը կըրցան հանգիստ
մնալ:

Պ. Թէպէտև Հայերը խեղճութեան
մէջ կապրէին՝ ամէնքը մէյմէկ դի. քաշուած,
բայց Պերոզ Վահանը ձեռք ձգել ուզե-
լով, գարձեալ շատ զօրքով խրկեց Չար-
միհր հազարաւուխոր, սպըսպրելով որ
Վախթանկ Վրաց թագաւորը և Վահանը
բռնէ: Վահան անատենը Գուին քա-
ղաքը գտնուելով, տեսաւ որ իր սլառ-
ճառաւ քաղքին մնաս պիտի հասնի,
խորհուրդ ըրաւ իրեններուն հետ, ու
երկերկու հողի ելան քաղքէն, և Պարսից
բանակին մէկ կողմը զարնելով աւրելով
գնացին Շաղագոմ գաւառը, մտան
Վարայրվարոյ ըսած բերդին մէջ:

Հազարաւուխտ տեսնելով Վահա-
նեանց յանդրգնութիւնը, չէր դիտեր ինչ
ընելիքը. զօրքն ալ սարսափած՝ Վահա-
նին ընկերները երկնքէն իջած երկըթէ
մարդիկ կըկարծէին: Հազարաւուխտ
ետեւէն ինկաւ, հասաւ Վարայրվարոյ
բերդը, բայց Վահանը հոն չիգրտաւ: Եւ
ինքը ետ գարձաւ, Պերոզին հրամանովը

մարդպան գնելով հայոց Շապուհ Միհրանեան սարսիկը :

Հ. Շապուհ Միհրանեան մարդպանը Վահանին ինչ կրրցաւ ընել, և հայերը ինչպէս նայեցաւ :

Պ. Շապուհ տեղեկանալով Վահանայ ուր ըլլալը, գնաց ետեւէն Արշարունեաց գաւառը ջրի մը քով կեցաւ իր զօրքով: Երբոր իմացաւ Վահան Շապուհին գալը, ժողովեց գեղացիները, ձեռւորնին վահաններ տուաւ, գիշեր ատեն տարաւ թշնամեաց գիմացը կարգաւ կեցընել տուաւ, ու ինքը զօրքով դարձաւ ուրիշ ծածուկ ճամբով յանկարծ վերանին վազեց. գիշերւան մէջ խռովուած իւն մը ձգեց մէջերնին, որ ըսկասն մէկզմէկ ջարդէլ. աասնկով վեցհարիւր հոգի ինկան անոնց մէ, մնացածներն ալ իրեք հազար հոգի փախան ցրուեցան: Կատղեցաւ Շապուհ Միհրանեան, ու աւելի շատ զօրքով վազեց Վահանայ վերայ, միտքը գնելով որ կամ մեռնի կորսուի կամ կորսընցընէ: Վահանին քովինները տեսնելով վտանգին մեծութիւնը, ձգեցին փախան, հարիւր հոգիէն մնացին մինակ երեսուն հոգի: Պարսիկները տեսնելով անոնց քիչ որու թիւնը, կարծեցին որ խենդեցեր ու մեռնելու կուգան կոր. աասնկ մտքով երբոր անհոգ կեցեր էին, անոնք յանկարծ փոթորիկի պէս մտան մէջերնին, տակն ու վերայ ըրին այնչափ բազմութիւնը, որոնց մէջ ըտպանեցին նաև Գգիհոն Սիւնին

որ ուրացողներուն գլուխն էր . իրենցմէ չորս հոգի միայն ընկան , իսկ մեկալնոնք անվախ քովերնէն անցան գացին իրենց տեղը : Շապուհ Միհրանեան ան միջոցին լսեց Պերոզին մահը ու դարձաւ՝ Թագաւորեւոյ յուսով . բայց Թագաւորեց Վաղարշ Պերոզի եղբայրը : Հոն Վահանին քաջութիւններուն վերայ ալ խօսելով , և Պարսից գէմ կենալուն պատճառները իմանալով , մէջերնին իրաւունք տուին Վահանին , ու խօսք գրին որ զինքը հանդարտեցնեն , որ Հայաստանը խաղաղի և հարկերուն արդէք չըլլայ :

Հ . Վաղարշ Պարսից Թագաւորը Վահանին հետ ինչ կերպով հաշտուեցաւ :

Պ . Վաղարշ մարդպան խրկեց Հայոց Նիխոր Վշնասպառ անունով խաղաղասէր մարդը , հրաման տալով որ Վահանին հետ խաղաղութիւն ընէ : Եկաւ Նիխոր Հեր գաւառը , Վահանին մարդ խրկեց հաշտութեան համար : Վահան պատասխան խրկեց . Թէ որ աս իրէք բանա յանձ կառնէ , կը հաշտուիմ և կը հնազանդիմ . Ի՞նչ , որ մեզ քրիստոնէութեան մէջ թողուն . Բ , որ հաւատարիմ մարդիկը միայն պատուեն . Գ , որ երկու կողմէն չիլըսած՝ գատաստան չընեն : Երբոր Նիխոր հաւանեցաւ ըրած խնդիրքներուն , Վահան ելաւ գնաց Նիխորին բանակը , և ներս մանելու ատեն հրաման տուաւ որ պատերազմի եղանակով փող զարնեն : Նիխոր վախնալով որ չըլլայ Թէ խաբէութիւն մը ընէ ,

Բ. Ե լուր խրկեց թէ Պարսից մեծ սպարապետը միայն կրնայ ատանկ փող զարնել : Վահան սրտասխան տուաւ, թէ նախ զիս հնազանդեցուր, ես ալ ետքը Պարսից սովորութեանը կը հնազանդիմ : Ասով ուզեց խնայրնել թէ իբրև յաղթող արգարութեան վրէժխնդիր՝ հաշտութիւն խօսելու կուգայ, չէ թէ իբրև յաղթուած : Հոն մեծ սիրով տեսնուեցան, դաշինքը հաստատեցին : Ետքը Վահան դնաց Պարսից դուռը երդում տուաւ թագաւորէն, ու ընդհանուր սպարապետի անուանով դարձաւ Հայաստան Վաղարշապատ քաղաքը . և մեծ ուրախութիւն եղաւ բոլոր ազգին :

ԼԳ

484

Հ. Վահանը Վաղարշէն առած սպարապետութեանը մէջ հաստատ մընաց :

Պ. Չէ. հապա ալ աւելի մեծցաւ . վասն զի Վաղարշ Վահանը սպարապետ անուանելէն ետքը Անդեկան անուանով Պարսիկը մարզպան խրկեց Հայաստան, որ քիչ օրէն հարկի մը համար դուռը երթալով, զՎահանը այնչափ գովեց, որ Վաղարշ անոր սպարապետութեան տեղ մարզպանութիւն հրովարտակ խրկեց : Եւ Վահանին աղաչանքով Վարդ եղբայրն ալ սպարապետ դնել տուաւ : Աս բանիս վերայ ուրախացած Յովհան Մանդակունի հայրապետն ալ, Դուին քաղքին եկե-

ղեցնայ մէջ մեծ հանգէս ընելէն ետքը, Ք. Ե
փառաւոր ուրախութեան ճառ մը խօսե-
ցաւ Աստուծոյ ողորմութեանը վերայ :

Ետքը Ահա՛ն ջնջեց բոլորովին Հայաս-
տանին մէջէն կրակատուններուն յիշա-
տակը, անոնց տեղը եկեղեցիներ շինել տա-
լով. և ըսկաւ ուրիշ շատ կարգաւորու-
թիւններ ընել Հայաստանին մէջ 1:

485

Երբոր Ազգարշին տեղը Վաւառ նստաւ
Թագաւոր, Թէպէտ առջի բերանը նորէն
հաստատեց Ահա՛նին մարդսանութիւնը,
բայց ետքը մոգերէն յորդորւած՝ Պարսիկ
մարդսան խրկեց շատ քուրմերով որ նորէն
Հայոց մոգութիւն սորվեցնեն. ու շատ
տեղ նորէն ըսկսան կրակատուններ շինել
Հայաստանին մէջ և նեղել Հայերը: Թէ որ
մէկը իր ազգակցին և կրօնակցին՝ իր հա-
ւասարին ձեռքէն քաշած նեղութեանը
չի գիմանար, հասրա օտարին՝ անկրօնին
անխնայ տուած տանջանքներուն ինչպէս
կրնայ սլիտի համբերել: Հայերը աս խել-
քը չիբանեցուցին, ու սիրով իրենք զի-
րենք օտարի ձեռք մատնեցին: Բայց
ահա կրկին կրկին փորձերով իմացան՝ Թէ
ինչ գէշ բան ըրին, բայց մեղք որ չիտը-
րատեցան: Ահա՛ն տեսնելով աս եղած

490

1 Աս ապեններն է որ մէկ քանի Եսափիսիան
հերեպիիսաներ էին Հայաստան, ու Քաղիէ-
քոնի սոսրԲ Ժողովոյ սխան վար դարնել՝ ըսելով
Թէ հան Նեսապրի վարդապետութիւնը ընդո-
նեցան:

անկարողութիւնները . և ուրիշ ճար չի գտնալով, նախարարներուն հետ մէկ եղած, վաղեցին Պարսից զօրքին և մարդպանին վերայ . զամէնքը ջարդեցին, ամէն կրակատունները աւրեցին :

Կաւատ երբոր ընց՝ կուզէր վրէժ ինդրել, բայց Պարսկաստանի մէջ խռովութիւն ըլլալով զինքը աթոռէն ձգեցին : Իսկ Կաւատ նորէն թագաւորութիւնը ձեռք ձգեց . և չորս կողմէն թշնամի ունենալով, Յունաց վերայ ալ ուղեւորվ երթալ, Հայոց հետ հաշտութիւն խօսեցաւ ու անոնցմէ ալ զօրք առած՝ գնաց Յունաց վերայ : Ահհան քսանըվեց տարի խելացի կաւավարութեամբ մարդպանութիւն ընելէն ետև վախճանեցաւ :

Հ . Ահհանէն ետքը ո՞վ նստաւ մարդպան, և Հայոց վիճակը ի՞նչպէս եղաւ :

Պ . Արդ Ահհանին պզտի եղբայրը անոր տեղը մարդպան նստաւ . բայց ինչպէս որ սովորութիւն է Հայոց, անոր վերան ալ նախանձեցան ու Կաւատին ամբաստանեցին, խնդրելով որ պարսիկ մարդպան դնէ իրենց վերայ . ուստի Արդ չորս տարի միայն մարդպանութիւն ընելէն ետքը, Կաւատ զինքը կանչեց ու ձգեց մարդպանութենէն . և տեղը նստեցուց Բուրղան անպիտան պարսիկ մը, որ իրեք տարի մարդպանութիւն ըրաւ տանջելով զՀայերը : Ան օրերը Հոնաց զօրքը վաղեցին Հայաստանին վերայ ու ըսկասն շատ չարիք ընել : Երբոր Սասուն գաւա

ուր հասան, Մժէժ Գնունի իր զօրքովը գէմերնին ելաւ ու ցրուեց փախուց զամէնքը. ետքը նախարարներէն ալ մէկ քանին իրեն հետ միաբանած՝ բոլորովին հանգարտեցուցին հայաստանը: Կաւատ լսելով Մժէժին քաջութիւնները և հաւատարմութիւնը, զինքը մարզպան դրաւ Բուրղանին տեղը, որ շատ կարգաւորութիւններ ըրաւ, ու երեսուն տարի մարզպանութիւն քչեց:

Հ. Հայաստանին մարզպանութեան ատենները Յունաց մասին մէջի հայերը ինչպէս կրկառաւարուէին:

Պ. Հայոց մարզպանութեան ատեն Յունաց մասին մէջն ալ խռովութիւն պակաս չէր: Երբեմն նախարարները մէկզմէկու գէմ ելլելով, երբեմն ալ Յունաց իշխաններուն կիւրապաղասներուն բռնութենէն նեղանալով: Բայց առանձին քաջ կարիճ հայեր միշտ կրգանուէին թէ Յունաց զօրացը մէջ և թէ հայաստանին մէջ: Բայց ինչ օգուտ կտորըճութենէ, երբ ազգին օգուտը ճանչնալ չիկայ, միաբանութեան սէր չիկայ, և ազգային օգուտը օտարէն վեր սեպելը ամէն մարդու պարտք ըլլալը գիտցող չիկայ:

ԼԴ

Հ. Մժէժ Գնունիին տեղ ո՞վ եղաւ մարզպան և ինչ երևելի գործք ըրաւ:

Ք. Ե 548 Պ. Խոսրով Պարսից Թագաւորը Դեն-
 շապուհ Պարսիկը խրկեց մարզպան, որ
 ըսկսաւ Հայերը նեղացնել մէջերնին
 կրակապաշտութիւն խոթել ուղեւով:

551 Ան միջոցին Մովսէս երկրորդ կաթու-
 դիկոսը Հայոց տուժարը նորոգեց և նոր
 Թուական հաստատեց: Եւ նեղանալով
 Դենշապուհին ըրածներուն վերայ, աղա-
 ջանքի Թուղթ գրեց Խոսրովին՝ յիշելով
 Վաղարշ Թագաւորին խոստամունքը որ
 խոստացեր էր հաւատքի համար հայերը
 ջինեղելու: Խոսրով հաւնեցաւ աղաջան-
 քին և ուրիշ մարզպան խրկեց Վշնաս
 Վահրամ անունով, որուն ետեւէն նստաւ
 Վարազդատ Պարսիկը. ետքը Սուրէն
 Ճիհր, որ ըսկսաւ նորէն նեղել Հայերը,
 և երկրորդ Վարդան մամիկոնեանին Մա-
 նուէլ եղբայրը ըսպաննեց:

Հ. Սուրէն Ճիհր մարզպանը Մանուէլ
 մամիկոնեանը ըսպաննելէն ետեւ օրջափ
 առե՛ն մնաց մարզպանութեան մէջ:

564 Պ. Խիստ քիչ. վասն զի երկրորդ Վար-
 դան մամիկոնեանը խիստ նեղանալով,
 նախարարներուն հետ խօսք գրաւ ապրս-
 տամբելու համար: Յուստիանոս կայսեր
 ալ Թուղթ գրեց, որ օգնէ իրենց, ու իրենք
 ալ անկէ ետքը կայսեր հարկատու ըլլան:
 Եւ Յուստիանոս կայսեր խոստամունքնե-
 րուն վստահանալով, վազեց Դուին քա-

571 ղաքը, բռնեց Սուրէն մարզպանը ըսպան-
 նեց, իր գործակալն ալ մէկտեղ, և ամէն
 մոգերը և Պարսից զօրքն ալ ջնջեց: Խոս-

րով երբոր լսեց աս բաներս, կատղեցաւ, Ք. Ե
խրկեց Հայաստանին վերայ շատ զօրք ու
փիղեր: Աջարդան ալ իրեք բաժնեց իր
զօրքը, ու երկուքը դարանի դրած, մէկ
խումբովը ըսկաւ սպաւերազմիլ:

Առւին սաստկացած ատենը հասան մէ-
կալ խումբերն ալ, մեծ ջարդ տուին
Պարսից զօրացը և ցրուեցին: Խոսրով ալ
աւելի կատղած, նոր մեծ խումբ հանել
տուաւ: Աջարդան տեսնելով որ հայերը
իրենց բնական վատութիւնը ձեռք առած,
միաբանիլ չեն ուզեր, մէկ քանի նախա-
բարներուն հետ մէկտեղ ելաւ գնաց կոս-
տանդնուպօլիս, Յուստիանոս կայսրէն
օգնութիւն ուզեց ու շատ Յունաց զօր-
քով, Յովհաննախարարն ալ կայսեր հրա-
մանովը մէկտեղ առած, եկան Պարսից
դէմ ու ցրուեցին բոլոր բանակը: Բայց
Աջարդան վախնալով Հայոց մատնութե-
նէն, դարձաւ նորէն Աոստանդնուպօլիս:

Խոսրով ինքը անձամբ ելաւ հարիւր
հազար հետևակով և քառսուն հազար
ձիաւորով Յունաց և Հայոց դէմ. շատ
անգամ զարկին զարնրւեցան, էն ետքը
հաշորւեցան դարձեալ Հայաստանը թող-
լով Պարսից ձեռքը, եօթը տարի գլուխ
քաշած կենալէն ետքը:

Հ. Երբոր Խոսրով Պարսից թագաւորը
նորէն Հայաստան մարզպան խրկելու
իշխանութիւնը առաւ, հայերուն վիճակը
ինչպէս եղաւ:

Պ. Խոսրով նոր մարզպան խրկեց Ճիհր

Վշտն որ տասնըհինգ տարի խաղաղութեամբ կառավարեց : Աս ասեաններս խոսրով երկրորդ Պարսից թագաւորը հալածելով իր Վահրամ զօրավարէն, օգնութիւն ուղեց Մօրիկ կայսերէն : Յունաց զօրադուխներն էին Մուշեղ Մամիկոնեան, Ներսէս Բասենցի, և Սմբատ Բաղմայաղթ . ասոնք գնացին Վահրամն ըսպաննեցին ու խոսրովը աթուղ նրատուցին : խոսրով զՍմբատը Պարսից զօրավար անուանեց, Մուշեղն ալ Ազատ իշխան : Ետքը Սմբատին շատ քաջութիւններուն համար, խոսրով զինքը մարդսան դրաւ, Վրկանին աշխարհն ալ իրեն յանձնեց : Վրկանի մէջ շատ հայեր կային հայերէնը մոռցած, Սմբատ անոնց վարպետներ դրաւ որ հայերէն սորվեցընեն : Դուին քաղքին մէջն ալ մեծ եկեղեցի մը շինեց . և շատ քաջութիւններ ալ ընելով, ութը տարի մարդսանութիւն ընելէն ետքը մեռաւ : Սմբատ Բաղմայաղթէն ետև ալ սլարսիկ մարդսան չինըստաւ, ինչւան որ Տաճիկները զօրացան, մէկէն երկնցուցին ձեռւընին հայաստանին վերայ, ու ոստիկաններու ձեռքով կրկառավարէին :

ԼԵ

Հ. Սմբատ Բաղմայաղթէն ետքը ո՞վ եղաւ հայոց մարդսան :

Պ. Դաւիթ Սահառունին Սմբատէն

էտքը մարզպան ընտրըւեցաւ նախարարնէ Բ. Ե
 ըուն ուզէ լովը : Ատոր մարզպանու թեան
 ատենը Խոսրով լօնա մանաւրով Մու-
 շէղ Մամիկոնեան սղատ իշխանին հեա՝
 իր քեռորդին Միհրանը խրկեց Տարոն
 դաւառին վերայ : Մուշէղ ինքիրեն չհիշա- 605
 մարձակելով գէմն ելլէ լու, գայլ Ալահանը
 խրկեց որ իր ազգականն էր : Գայլ Ալահան
 շատ վարպետութիւններով և խաբիւրբե-
 լով ըսպաննեց զՄիհրանը բոլոր զօրքին
 հեա մէկտեղ : Խոսրով կատողած՝ տեղը
 խրկեց զԱլախթանկը . գայլ Ալահան անոր
 զօրքն ալ աղէկ մը ջարդէլէն ետև, վը-
 բան հիւանդութիւն մը եկաւ, ու անով
 մեռաւ :

Գայլ Ալահանին տեղը անցաւ որդին 607
 Սմբատը, որ Ալախթանկը ըսպաննեց և
 ուրիշ զօրավարներ ալ : Ետքը երբոր Յազ-
 կերտ վերջինը թագաւորեց, Սմբատ հե-
 տը հաշտութիւն ըրաւ : Իսկ Գաւիթ Սա- 625
 հառունին քսանըջորս տարի մարզպանու-
 թիւն ընէլէն ետև, կասկածելով ոմանց
 չարախօսութենէն՝ ելաւ գնաց Կոստան-
 դնուպօլիս : Ատոր տեղը Խոսրով գրաւ
 զԱրաղտիրոց բագրատունին որ Սմբատ
 Բաղմայաղթին որդին էր, ու եօթը տարի
 մարզպանութիւն ընէլէն էտքը վախնա-
 լով Ատրպատականի մարզպանին ձեռ-
 քէն, ելաւ ընտանիքովը մէկտեղ Յունաց
 երկիրը գնաց :

Հ. Արաղտիրոց բագրատունիէն ետև
 ո՞վ նստաւ մարզպան :

Ք. Ե

Պ. Վարազտիրոցին Յունաստան քա-
շուէլու առե՛ննէրը Պարսից մէջ մեծ խռո-
վութիւն ըլլալով, Հագարացիք ալ զօրա-
նալով տիրեցին բոլոր Պարսկաստանին :

Ան առենը Հայերը խելւրնին գլուխ-
նին ժողվէլու ու կարգաւորեալ տէրու-
թի մէջերնին հաստատուու տեղը խընդ-
րեցին Յունաց կայսրէն որ Դաւիթ Սա-
հառունին կիւրասպաղատ խրկեց իրենց :
Իրէք տարիէն Հայերը Դաւիթը վաւը-
տեցին ու ըսկսան իրենք մէկըմէկու հեա
կռուիլ, աշխարհս տակն ու վըրայ ընէլ :
Հագարացիք ալ յարմար առեն գտան,
ըսկսան Հայաստանին վըրայ վազէլ :

632

Թէոգորոս ռըշտունին տեսնէլով աս
խառնակութիւնները, ըսկսաւ մարզպանի
սէս ինքնիրեն քիչ մը հոգ տանիլ ու կա-
ռավարէլ : Աս միջոցիս Հագարացիք ըս-
կըսան դէսլի Տարօնին վըրայ քալէլ : Այ-
հան Վամնարական ութ հազար հոգւով
սկաորասարւած, դեսպան խրկեց Հայոց
ամէն նախարարներուն, որ դան ժող-
վին դէմ դնէլու : Ամէնքն ալ արհամար-
հեցին, ու տեղերնէն չիշարժեցան : Այ-
հան Վամնարականին ժողված զօրքին մէ-
ջէն ալ Սահուռ անձևացին իրեններովը
սկատերազմին առենը յանկարծ Տաճկին
կողմը անցաւ, ու ըսկսաւ Հայերը ջարդէլ :
Հագարացիք Ահհանին զօրքը ջարդէլն
եաքը ցրուեցան Հայաստանին մէջ ասդիս
անդին շատ կտաորած ըրին, շատ վնաս
հասուցին : Ետքը Դուին քաղաքն ալ

636

640

մտան, շատ մարդ ջարդեցին, երեսուներև Գ. Ե
 հինգ հազար հոգի ալ գերի տարին: Եզր
 կաթուղիկոսը տեսնելով Հայաստանին
 թշուառութիւնները՝ սրտին ցաւէն հի-
 ւանդացաւ ու մեռաւ: Ետքը Ներսէս
 Շինողը կաթուղիկոս նստուցին՝ որ շատ
 կործանած տեղւանքը նորոգեց. և Յու-
 նաց Կոստանդ կայսեր ազաչեց ու Վա-
 րազախրոցը Հայոց վերայ կիւրապաղատ
 դնել տուաւ, որ տարիէ մը մեռաւ, ու
 տեղը նստաւ անոր տղան Սմբատ:

644

Լ. 2

Հ. Սմբատին կիւրապաղատութեան
 ատենը Հայերը ինչպէս անցուցին:

Պ. Մէկ երկու տարի խաղաղութեան
 մէջ կենալէն ետքը, նորէն Հագարացիները
 վաղեցին Հայաստանին վերայ. Աղիով-
 տացիները և Բղնունիները ջարդեւէն ետև,
 քաւեցին դէսլի Արարատ: Ան ատենը նա-
 խտրարները տեսնելով որ իրենց միաբա-
 նիլը անկարելի է, աւելի ընտրեցին Հա-
 գարացիներուն ծառայ ըլլալ, քան թէ
 իրենցմէ մէկը ընտրել ու ամենքը մէկ սիրտ
 մէկ հոգի անոր հնազանդիլ. ուստի գա-
 ցին խոստացան որ Յունաց տակէն ելլեն
 ու Հագարացիներուն հարկ տան ու հնա-
 զանդին: Երբոր լսեց Կոստանդ կայսրը
 թէ Հայերը Տաճկին հարկատու եղան,
 բարկացաւ, ու շատ զօրքով եկաւ Հայաս-
 տան: Կաթուղիկոսը նախարարներով գի-

647

Ք. Ե մնացր դնաց ու պատճառը հասկըցընելով
 կայսեր սիրտը իջեցուց: Կայսրը խաղա-
 դութեամբ ետ դարձաւ, պահապան զօրք
 652 թողլով Գուին քաղքին մէջ: Հագարացիք
 լսելով աս բանս, նորէն վազեցին Հայ-
 աստանին վերայ, ու Ասասկ պատրիկին
 միջնորդելովը հաղար պատանդ առած
 ետ դարձան: Յաջորդ տարին մեռաւ
 Սմբատ կիւրապաղատ:

Հ. Սմբատէն ետև ո՛վ նստաւ կիւրա-
 պաղատ, և Հայոց վիճակը ինչպէս եղաւ:

654 Պ. Սմբատին յաջորդեց Համազասպ
 Մամիկոնեան. և երկու տարիէն ետև հար-
 կերուն ծանրութեանը պատճառաւ նո-
 րէն Յունաց տակը մտաւ. և պատ-
 ճառ եղաւ որ Հագարացիք աս բանս
 խմանալնուն պէս բոլոր պատանդները
 ըսպաննեցին. և կուղէր ամիրասպետը Հայ-
 աստանին վերայ ալ գալու, բայց ինքը
 ըսպաննըւեցաւ, և անոր յաջորդին օրը
 նորէն Հայերը հպատակեցան Հագարա-

659 ցոց: Համազասպը հինգ տարի կիւրապա-
 ղատութիւն ընելէն ետքը մեռաւ, ու
 տեղը անցաւ իր եղբայրը Գրիգոր, որ
 քսանըջորս տարի նստելէն ետև պատե-
 րազմի մէջ զարնըւեցաւ մեռաւ, և երկու
 տարի բոլորովին ոտքի տակ մնաց Հայ-
 աստան. ինչւան որ Աշոտ բագրատու-
 նին ելաւ, ըսկսաւ թշնամեաց դէմ դնել,
 և Հագարացոց հետ հաշտութիւն խօսե-
 ցաւ: Ըսկսան Յոյնք նորէն հակառակիլ
 685 Հայոց՝ Հագարացոց հետ դաշնագրեւնուն

համար . և ասանկ հետզհետէ մէյմը Յոյնք Ք . Ե
 մէյմը հագարացիք հայաստանը կոխ-
 կրուաւէլ կըջանային : Ան ատենուան հայ-
 աստանը մարմնոյ մը կընմանի որ գլուխ
 չունի , ողջ է՝ բայց կառավարւիլ չիկրը-
 նար :

Եւ Քրիստոսի 693 թուականին հա- 693
 դարացիք ըսկասն ոստիկան անուանով
 հագարացի մը խրկէլ հայաստանին վե-
 ըակացու . ասոնք ալ շատ անգամ ամի-
 ըապեաին կամքին դէմ կըչարչարէին ու
 կըկէղէքէին աղգը :

Հ . Ո՞վ էր հագարացւոց խրկած առջի
 ոստիկանը , և հայերուն ի՞նչպէս նայեցաւ :

Պ . Առջի ոստիկանը եղաւ Աբդլա ա-
 նուանով մէկը , որ շատ նախարարներ ու
 Սահակ կաթողիկոսը խաբխորբելով շըղ-
 թայի զարկաւ Գամասկոս խրկեց : Նախա-
 րարներուն մէջէն Սմբատ բիւրատեանը
 փախաւ ու Յունացմէ օգնութիւն խնդ-
 րեց . անոնց հետ միացած սաստիկ
 ջարդ տուին Աբդլային զօրքին ու զին-
 քը փախուցին : Սմբատն ալ կիւրասղա-
 զափ անուանով երկու տարիի չափ
 խաղաղութեամբ կեցաւ , ինչւան որ Մոհ- 702
 մաա հագարացոց զօրապետը վըրան ե-
 կաւ ու ըսկաւ հայաստանի մէջ շատ
 վնասներ ընել : Ան ատենը Ներսէհ Կամ-
 սարականը Սահակին հետ միացած՝ յան-
 կարծ Մոհմաաին վըրան վաղեց ու սաս-
 տիկ ջարդ տալով փախուց : Մոհմաա նո-
 րէն խիստ շատ զօրք ժողված՝ ամիրասլե-

Բ. Ե Թին հրամանովը դարձաւ Հայաստան եկաւ : Բայց Սահակ կաթողիկոսը Գամասկոսէն դեսպան խրկեց, հրաման խրնդրելով Մոհմատին քովը երթալու. բայց ճամբուն վերայ հիւանդանալով իրեն ազաչանքի թուղթ գրեց, ու մեռաւ. և հրաշքով մը իր ձեռքովը թուղթը Մոհմատին ձեռքը տալով՝ խաղաղութիւն ընել ալաւ : Անանկ որ Մոհմատ դարձաւ Գամասկոս և աղաչեց ամիրապետին, ու բոլոր դերիններն ալ ազատ թողուցին :

Հ. Աբգըլային տեղը հագարացիք ո՞վ խրկեցին Հայոց վերայ ոստիկան :

704 Գ. Ամիրապետը Մոհմատին աղաչանքով դերինները ազատելէն ետքը, եկաւ Հայաստան կաշմ ոստիկանը, որ նախարարները և մեծերը ժողվեց խարէութեամբ, ու Նախջուռանի եկեղեցւոյն մէջ այրեց զամէնքը մէկէն : Բայց Սմբատ կիւրասպաղատը ուրիշ նախարարներուն հետ մէկտեղ փախաւ Յունաց մասը, և տեսնելով որ Յունացմէ օգնութիւն գտնելուն տեղը աւելի կրնախատւին կոր, աւրեցին զքաղաքը, կողոսպտեցին եկեղեցիները, ու դարձան եկան Հայաստան : Յոյները նեղանալով աս բանիս վերայ, սովորութիւն ըրին ամէն տարի նշովք կարգալու Հայոց վերայ : Աւանց մտածելու եղած վրէժխնդրութիւններէն հետեւած չարիքները ո՞վ կրնայ սխտամէլ :

Ա.

Հ. Կաշմ' ոստիկանին ո՞վ յաջորդեց : 717

Պ. Կաշմին ոստիկանութեան տասնը-
 չորրորդ տարին անոր տեղը եկաւ Ա իլթ .
 անկէ ետեւ մէկքանի ոստիկաններ նստե-
 լէն ետքը, եկաւ Մրուան, ու ինքն ալ եր-
 42
 կու տարի ոստիկանութիւն ընելէն ետքը՝
 Հայաստանը Աշոտ բագրատունիին յանձ-
 նեց Պատրիկ անուանելով զանիկայ, ու
 ինքը գնաց յաղթեց թշնամիներուն և
 ամիրապետ նստաւ : Աշոտ ըսկսաւ աղգը
 իննամեջու. բայց մէկքանի տարիէն երբոր
 Մրուանը մեռաւ, Հագարացիք Եղիար
 ոստիկան խրկեցին, հարկերը շատցուցին
 և ըսկսան շատնեղութիւն տալ Հայերուն :
 Ասանք նեղացած կուղէին ասլատամբիլ,
 բայց Աշոտ սպարիկը գէմ կըրկենար : Գրի-
 58
 գոր և Դաւիթ մամիկոնեան իշխանները,
 որ արդէն անոր պատուոյն համար վերան
 խիտ նախանձեր էին՝ Աշոտին աչքները
 փորեցին :

Հ. Աշոտ սպարիկը կուրցընելէն ետեւ
 կըրցան առաջ աանիլ ասլատամբութեան
 խորհուրդը :

Պ. Թեթևամտութեամբ և առանց
 վերջը մտածելու, և առանց հասարակաց
 բարիքը ուղեջու եղած խորհուրդը՝ միայն
 չարիք հասցընելու չափ առաջ կերթայ,
 ու հոն կըմնայ : Իրենք կընեղէինկոր և
 Աշոտ սպարիկը քիչ մը փառքի մէջ կըտես

- Ք. Ե նէին կոր, նախանձու կիրքէն ապստամբու-
 թեան խորհուրդ կրնէին, որ գուցէ բաւ-
 գերնին բանի ու իրենք պատուոյ հասնին:
 Բայց երբոր զանկկայ իրենցմէ թշուառ-
 վիճակի հասուցին, սրտերնին պաղըշար-
 կեցաւ, ապստամբութեան փափաքն ալ
 760 դադրեցաւ: Եղևտ երկու տարի հայերը
 նեղելէն ետքը ետ կանչուեցաւ, Պատրիկ
 անուանեց Սահակ բաղրատունի բարե-
 պաշտ և խոհեմ մարդը. բայց ասպատակ
 ները ու հարկերը սրակաս չէին հայաստա-
 նին վերայէն: Սահակ պատրիկին վեցե-
 րորդ տարին Սիւլէյման կողմնակալը ոստի-
 կան դրուեցաւ: Անկէ ետև ուրիշ ոստի-
 կաններ նստան շարունակ շարչարելով
 հայերը, ամէնէն աւելի հասան ոստի-
 կանը ըսկսաւ շարչարել ազգը՝ ասդխա
 780 անդին ասպատակ խրկելով: Անգամ մը
 երբոր Տարօնի վերայ գացեր էին անոր
 զօրքերէն, Մուշեղ մամիկոնեանը կատաճ
 վերանին վաղեց ու երկու հարիւրի չափ
 անոնցմէ ջարդեց. ետքը նորէն զարնուե-
 լով շատ մարդ ըսպաննելէն ետև, դնաց
 Գուին ու հասան ոստիկանն ալ փա-
 խուց: Ան ատենը ուրիշ մէկ քանի հայեր
 ալ սիրտ առած՝ մէկ եղան ամէնը հինգ
 հազար հողիի չափ, և ըսկսան հաղարացոյ
 դէմ դնել: Հաղարացիք երեսուն հազար
 նորէն ժողվուեցան, ու իրեք հազարէն
 աւելի հայերէն ջարդեցին, մնացած
 ներն ալ ցրուեցին: Աշոտ Մսակերը ժող-
 վեց նորէն շատ մարդիկ ու մեծ ջարդ

տուաւ Հաղարայց : Աս խառնակու- Ք. Ե
 թիւնը քշեց վեց տարի . ինչւան որ 786
 Եղիտ երկրորդ ոստիկան եկաւ , ու զա-
 մէնքը նուաճեց , շատ սպտանդներ առաւ ,
 ծանր հարկ գրաւ վերանին ու կրնե՞լեր
 զերենք :

Հ . Եղիտ երկրորդին ո՞վ յաջորդեց և
 Հայոց Թշուառու թեան չափը ո՞ւր հասաւ :

Պ . Եղիտ երկրորդին ատենը Հայոց 798
 Թշուառու թիւնը աւելի սաստկանալու
 տեղ չէր մնացեր : Եղիտ երկրորդին յա-
 ջորդեց Խուզիմա ոստիկանը , որ խաղաղա-
 սէր ըլլալով հանդարտ սրահեց աղբը : Ա- 818
 նոր յաջորդեց Հոլ , որ թէպէտ խաղաղա-
 սէր էր , բայց Սևադայանուէնով Հաղարայցի
 մը Հայու մը հետ կարգըւած ըլլալով ու-
 ղեց փրեւ Հայոց վերայ , շատ նախարար
 ներ ալ հետը միաբանեցան : Հոլ սա բա-
 նըս դաղաուկ խմանալով , հինգ հազար զօրք
 ժողվեց ու յանկարծ վերանին վաղեց ,
 ջարդեց ցրուեց զամէնքը , գնաց գան-
 դատեցաւ կաթուղիկոսին , ու անոր միջնոր
 դելովը նորէն հաշարեցաւ :

ԼԸ

Հ . Հոլ ոստիկանը երբոր ետ կանչուե-
 յաւ , տեղը ո՞վ նստաւ , և Հայերը ի՞նչ նոր
 Թշուառու թեան հանդիպեցան :

Պ . Հոլը ոստիկանու թեանէն ետ դառ- 835
 նալու ատեն , մէկ երկու նախարարներուն
 աղաչանքովը իր տեղը սպասրիկ որոշեց
 Բաղարատ բաղրատունին : Ան օրերը

Ք. Ե Բաբան անուանով Պարսիկ մը կուզէր ախրեւ Հագարացւոց, Բագարասն ալ անոր գէմ Հայոց զօրքով օգնութիւն գնաց, ու յաղթեցին: Բայց ետքը Բագարաս Յովհաննէս կաթողիկոսին գէմանկրաւեցաւ՝ մէկ բանի չարախօսներուն հաւատալով, ետքը տէրութեան բաներու մէջ ալ յանցաւոր գանձելով՝ աչքէ ընկաւ: Անատենը Ապուսէթ ոստիկանը եկաւ ու խաբխրբելով զինքը բռնեց ամիրապետին խրրկեց. ինքն ալ ազատելու համար ուրացաւ հաւատքը: Երբոր լսեցին Սասունք Բագարասին բռնըւիլը, խօսքը մէկ ըրին, Ապուսէթ ոստիկանը ըսպաննեցին, բոլոր զօրքն ալ ցրուեցին: Ամիրապետը կատաղած աս բանիս վըրայ, խրկեց Բուղա ոստիկանը որ բոլոր Հայոց նախարարները բռնէ իրեն խրկէ, և բանի եկող կտրիճները մէկէն տաճկըցընէ: Աս միջոցիս երկու զօրաւոր նախարարներ հակառակեցան մէկմէկու, Բաբէկէն սիասկան և Գրիգոր Սուփան, և երկուքն ալ զօրք ժողված ըսկսան մէկզմէկ ջարդել, մէկմէկու երկիրները քաղաքները աւրել, մարգիկը գերի տանիլ ու մեռցընել, ամենեին մտիկ ջընելով ալ ոչ յորդորանք ոչ խրատ, ինչւան որ Գրիգոր Սուփանը ըսպաննըւեցաւ և Բաբէկէն տիրեց անոր երկիրներուն ալ:

Եկաւ Բուղա, ըսկսաւ արիւնելուայ ընել Հայաստանը: Աշոտ արծրունի մեծ իշխանը ուզեց պատրաստըւիլ ու Բուղայի գէմ

848

850

եւրէլ, բայց տեսաւ որ նախարարնէրը չեն
ուզէր միաբանիլ, միաքը դրաւ Աշոտ որ
ընծաներով Բուզային սիրաբ առնէ.
բայց խաբւեցաւ, ու տնով տեղով կա-
պանքի մասնըւեցաւ :

Սմբատ սպարապետը տեսնելով որ բոլոր
ազգը ոտքի տակ կերթայկոր, և վախնա-
լով որ ինքն ալ փորձանքի մը չհանդըպի,
գնաց Բուզային քով, ճամբայ ցուցնող
եղաւ՝ որ ուզած չարութիւնները դիւրաւ
գլուխ հանէ : Վարժէր թէ ազգին աւելի
մնասովը իր անձին օգուտ մը ընէ . բայց
շատ սխալեցաւ. վասն զի Բուզաբոլոր հայ-
աստան արիւնի մէջ թաթխելէն ետեւ, չէ
թէ Սմբատը, հապա Շէխի անուհով Պար-
սիկը վերակացու դրաւ հայաստանին, ու
ինքը հաւնածները միայն ողջ պահած՝ գե-
րի տարաւ Պաղտատ, Սմբատն ալ մէկ տեղ :

855

Ամիրապետը երբոր տեսաւ դերիները,
սաստիկ յանդիմանութիւն ապէն ետեւ՝
Սմբատին հետ մէկտեղ զամէնքն ալ բանա
գնել տուաւ, ու կրսպասէր որ հաւատք-
նին ուրանան : Շատերը դարձան, ոմանք
ալ նահատակեցան . Սմբատն ալ զղջալով
ըրած մասնութիւններուն վըրայ, և հա-
ւատքին վըրայ հաստատ կենալով բանաին
մէջ մեռաւ, անոր համար Խոստովանող
կոչուեցաւ : Ահա մէկզմէկու կրուակ կե-
նալ չուզելուն օգուտը, ազգ ինչ բսել է
չիճանչնալուն պտուղը . առանձին իր քա-
ջութեանը վըրայ պարծենալուն և վստա-
հանալուն հետեանքը : Մէկ խօսքով ազի-

տութեան, իրենք զիրենք չիճանչնալուն,
 և խոհեմութեան սրահտութեան գործքե-
 րը ասոնք են : Ասոր ներհակ երբոր ըսկը-
 սան քիչ մը խոհեմութիւն ձեռք առնել,
 կրրցան այնպիսի վերջին թշուառութեան
 մէջ ընկած ազգը նորէն մէկէն ոտք հա-
 նել, ու նորէն թագաւորութիւն ձեռք
 ձգել :





ՄԱՄՆ ԵՐՐՈՐԴ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ

ԼԹ

Հ. Ի՞նչ կերպով ըսկաւ Բագրա Ք. Ե
տունեաց թագաւորութիւնը :

Պ. Աշոտ բագրատունեաց իշխանը՝
Սմբատ խոստովանողին որդին, Շէխին
վերահացութեան ատենը ըսկաւ հոգ
տանիչ Հայաստանին վերայ . աւրած տեղ
ւանքը կրնորոգէր, զամէնքը խաղաղու
թեան կըլորդորէր . և Տաճկի տէրու
թեան առջին ալ հաւատարմութիւն կը
ցուցնէր :

Ամիրապետը ըսելով Աշոտին ըրածնե
րը՝ զինքը Շէխին տեղ Հայաստանին վե
րահացու դրաւ : Ան ատենը Աշոտ զօրքը
շատցուց, իր Աբաս եղբայրն ալ սպա
րապետ դրաւ, ու թշնամիները Հայաս
տանէն վաճնուեց :

Ան ատենները երբոր Պաղտատի ձկջ
նոր ամիրապետ նստաւ, գերի դնացած
նախարարները խնդրեցին ամիրապետէն,
ազատեցան ու դարձան եկան Հայաստան,

Ք. Ե և Աշոտին հետ մէկ եղած՝ հայաստանը
կըջանային կարգի գնելու :

Քանի մը տարի անցնելէն ետքը նախա-
բարնէրը Գէորգ կաթողիկոսին հետ մէկ
եղած խնդրեցին ամիրապետէն որ Աշոտը
Թագաւորընէ հայոց վերայ, խոսաա-
նալով որ հաւատարիմ կենան իրենց
հպատակութեանը մէջ : Ամիրապետը որ
առաջուց գիտէր Աշոտին աղէկութիւնը,
հաւնեցաւ անոնց խնդիրքին, ու Թագ և
Թագաւորական ծիրանի խրկեց Աշոտին :

885

Աշոտ աթուրը դրաւ Բագարան քաղա-
քը, Թշնամիներուն բոլորովին յաղթեց .
ամէն բանին նորէն կարգ ու կանոն դրաւ :
Ետքը ելաւ բոլոր հայաստան սրտոտեցաւ,
գէտի փոքր հաշք ալ գնաց, ու անկէ
անցաւ Ղէօն կայսեր յարգութիւն ընելու
գնաց, ու մեծ պատուով ետ դարձաւ :

Շիրակ գաւառը երբոր հասաւ, ծանր
հիւանդութիւն եկաւ վերան, ու վախճա-
նեցաւ, հինգ տարի Թագաւորելէն ետե :
Իսկ բոլոր իշխանութիւնը երեսուն տարի
քչեց : Իր մարմինը մեծ հանդէսով տարին
Բագարան Թաղեցին : Խռովասէրները
պակասած, Ժողովուրդը եկած Թշուա-
ռութիւններէն սարսափած, և մէկբանի
խոհեմ իշխաններ գլուխ եղած, մէկէն
ըսկասան գլուխ վերցրնել ու փառաւոր-
ւիլ . բայց երանի՛ Թէ նոյն խաղաղասի-
րութեան մէջ մնային :

Հ. Աշոտ բագրատունիին տեղը ո՛վ
նստաւ Թագաւոր :

Պ . Սմբատ Աշոտին որդին հօրը տեղը անցաւ . բայց Աբաս Աշոտին եղբայրը ուղեւորով թագաւորել, գլուխ քաշեց, զօրք ժողովեց ու Սմբատին դէմ պատերազմի ելաւ, ըսկսան երկու կողմէն մէկըմէկ կտորրտել, նոր ծաղկած ազգը ոտից կոխան ընել: Ինչւան որ Գէորգ կաթուղիկոսին միջնորդելովը Աբաս երգում ըրաւ ու հաշտուեցաւ . բայց ետքը նորէն երգումը ոտքի տակ առաւ: Անտան Սմբատ նորէն վերան գնաց՝ նուաճեց զինքը:

Աբաս երբոր դեռ չարուծիւն կրմխաւծ էր կաթուղիկոսին դէմ, իր ընկերները պատժուեցան, ինքն ալ զղջաց, ու քիչ ատենէն մեռաւ: Եւ Սմբատ անոր տեղը սպարապետ դրաւ իր Շապուհ եղբայրը:

Խ

Հ . Սմբատ բաղրատունին ինչ երևելի գործք ըրաւ իր թագաւորութեան ատենը:

Պ . Սմբատ որչափ որ խոհեմութեամբ և անուշութեամբ կուղէր կարգաւորել տէրութիւնը, այնչափ աւելի ցաւերու հանդիպեցաւ: Ափշին Պարսից ոստիկանը ըտելով Սմբատին մեծնալը, նախանձեցաւ և ուղեց նուաճել: Սմբատ երսուն հազար կարիճ զօրքով գիմացն ելաւ . բայց առանց պատերազմելու անուշութեամբ Ափշինին սիրաբ առաւ, ու հաշտութիւն ըրին: Աս միջոցիս Գուին քաղքին բնա-

Ք. Ե կիչները աստուամբեցան . գնաց Սմբատ պաշարեց ու նուաճեց : Բայց ետքը երկրաշարժէն շատ աներ փլան և շատ մարդիկ կորսուեցան :

Երկու տարիէն Ափշին նորէն գրգռուեցաւ . ու սուտ ձայն հանելով թէ հայաստանէն անցնի երթայ պիտի , մտաւ հայաստան : Սմբատ պատրաստու թիւն չունենալով առջի բերանը քաշեցաւ , ինչւան որ զօրք ժողովեց ու գնաց Ափշինին գէմ՝ Նախջուան քաղաքը՝ զարկաւ ջարդեց , մնացածը ցրուեց ու Ափշինն ալ փախուց :

Աշոտ Սմբատին քեռորդին Վասպուրականին իշխանը , տեսնելով որ Ափշին Սմբատին թշնամի է ու անոր չարիքը կուզէ , ուզեց ասով ինքը փառք վաստրկիլ : Ուստի աստուամբեցաւ Սմբատէն ու գնաց Ափշինին շատ ընծաներով , յուսալով որ ինքը թագաւորէ . բայց յոյսը պարասկաւ . Ափշին անոր երես չհարւաւ , ու ետ դարձուց :

Գագիկ անոր աները Աշոտին ըրածին վերայ նեղանալով բռնեց բանա դրաւ զինքը երկու եղբայրներովը ու ինքը սիրեց Վասպուրականին :

896

Ասիէ ետքը Միջագետքին ոստիկանը Ահմատ՝ աստուամբեցաւ ամիրապետէն ու ըսկաւ հայաստանին վերայ գալ . Սմբատ վաթսուն հազարով գէմն ելաւ . խի Գագիկ Աշոտին աները դադատուի խօսք դրաւ Ահմատին հետ , հայոց զօրքը

իրեն մասնելու, յուսալով որ ինքը թագաւորութեան հասնի : Եւ Սմբատ թագաւորին խորհուրդ տուաւ որ հողս գեղին մօտ բանակի, Ահմատին ալ խնացուց իր յարմար գիւրքը, ու Սմբատին առաջ նորդեց գէշ ճամբաներով բոլոր գիշերը պարտօցրնելով . անանկ որ հողնած դագրած՝ հազիւ առաւօտեան գէմ հասան Ահմատին բանակած տեղին մօտ . ու քիչ մը կենալ քնանալ չքսկրսած, վաղեց Ահմատ վրանին . յանկարծակիի եկան Սմբատին զօրքը, բայց քաջութեամբ զարնրեւելով յաղթեցին :

Քաղիկ տեսնելով թէ յոյսը պարաստ կելլէ կոր, վախ ձեացրնելով փախչելու յորդորեց զամէնքը, ասանկով՝ ցրուեցաւ բոլոր բանակը : Ահմատն ալ վախնալով որ չըլլայ թէ ուրիշ կողմէն վերան վազեն հայերը, եւ քաշեցաւ գնաց : Իսկ Քաղիկն իր ըրած չարութեանը փոխարէնը գտաւ . ըրած անզգամութեանը վերայ ուրախացած հանդէս ընելու ատենը Սմբատին քեռորդին զինքը ըստաննեց :

Հ. Ափշին առջի անգամ Սմբատ թագաւորէն յաղթըւէէն ետքը ինչ նոր նեղութիւն հասուց անոր :

Պ. Ափշին Սմբատէն յաղթըւէէն ետքը ռիս պահելով առ թի կըստպասէր զինքը նուաճելու . ուստի երբոր ըսեց թէ Սմբատին զօրքը ցրուեր են, նորէն վերան եկաւ : Սմբատ կուղէր գէմն ելլէլ . բայց ո՞վ զինքը իրենց թագաւոր կըճանչնայ : Թա՛

գաւորը նախարարներուն խնաց ըրաւ որ
 գան ժողովին . բայց մէկը տեղէն չիշար
 ժեցաւ : Սմբատնեղը մտաւ, Ափշինին հետ
 հաշտութիւն ըրաւ՝ պատանդ տալով իր մէկ
 որդին ու մէկ եղբօրորդին . Ափշին յա-
 վըշտակեց թագուհին ալ, թագաւորին
 հարսն ալ : Երբոր աւելի չարիք կուղէր
 հասցընել Սմբատին, ինքը չարաչար սատ-
 կեցաւ և պատանդներն ու թագուհին
 ձեռքէն ազատեցան :

ԽԱ

Հ . Ափշին ոստիկանին մեռնելէն ետև
 Սմբատ կրրցան հանդիսաւ թագաւորել :

Պ . Չէ . վասն զի թէպէտ ոստիկանը
 փոխուեցաւ , բայց իր աղգը միշտ նոյն
 մնաց : Ափշինին տեղը անցաւ անոր եղբայ-
 րը Յուսուփ՝ չար և նենգաւոր . Սմբատ
 թագաւորն ուզելով որ ազատ ըլլայ ոս-
 տիկաններուն ձեռքէն, որովհետև տուր-
 քը անոնց ձեռքովը կրկնէր, ամիրապե-
 տին աղաչեց ու ըսկսաւ տուրքը շատակ
 իրեն խրկել : Յուսուփ բարկացաւ աս
 բանիս վերայ, զօրք ժողովեց վերան եկաւ
 Դուին քաղաքը . բայց Սմբատ խաղաղ-
 ցուց զինքը, ու հետը հաշտութիւն ընելով
 ետ դարձուց :

Երբոր մէկ քանի տարի խաղաղացաւ եր-
 կիրը Եգերացոց թագաւորը դէպի հայ-
 աստան վաղեց . անատենը Սմբատը Վրաց
 Արմենրակի թագաւորին հետ մէկտեղ , որ

ինքը թագաւորեցուցեր էր, զինքը նեղը Գ. Ե
 խոթեցին, ու երբոր հաշտութի խնդրեց,
 Սմբատ Ատրներսէհը խրկեց որ խօսին.
 Ատրներսէհ բռնեւ տուաւ զինքը ու Սմբա-
 տին բերաւ: Սմբատ բնական գլխասիրա
 ըլլալով և իմանալով ալ որ Եգերացիք
 նեղացած՝ նոր պատրաստութեան հետ
 են, չորս ամիս զինքը Անի ամրոցին մէջ
 փառքով պահեւէն ետքը՝ ազատ թողուց
 որ երթայ թագաւորէ: Ատրներսէհ նե-
 ղացաւ աս բանիս. Սմբատին նախա-
 բարներէն ալ շատը արդէն իրեն թշնա-
 մացած ըլլալուն, միաբանեցան Ատրներ-
 սէհին հետ և ուզեցին ըսպաննել Սրմ-
 բատը, բայց իրենք իրենց որոգայթին
 մէջ բռնրեցան, խաղք եղան ու ըս-
 կրսան յայտնի սրատերաղմիւ, ու բո-
 լորովին յաղթըւեցան: Անասենը Ատր-
 ներսէհ Սմբատին գլխութեանը աստուի-
 նած՝ թողութիւն առաւ ու ասպտամբ
 նախարարները ձեռքը տըւաւ, Սմբատ
 ալ զանոնք կուրցուց:

Հ. Ատրներսէհին Սմբատէն յաղթըւե-
 լէն ետև, նախարարներէն ո՞վ եղաւ որ
 Սմբատին դէմ չարիք մտածեց:

Պ. Հաղիւ թէ Սմբատ քիչ մը ըսկսաւ
 խաղաղիւ, ասպտամբեցաւ իրմէն Գա-
 գիկ արծրունին, որ իր քեռորդին էր, ու
 գնաց Յուսուփին քովը Սմբատին վերայ
 ամբաստանութիւն ընելու համար: Յու-
 սուփն ալ որպէսզի խռովութիւն ձգէ
 Հայաստանին մէջ, Գագիկը թագաւորե-

Ք. Ե ցուց: Սմբատ ընելով աս բանս, խմացաւ
 որ բանը գէշի պիտի երթայ, իրկեց Յով-
 909 հաննէս կաթուղիկոսը շատ սպարգենեւրով,
 որ երթայ Յուսուփին սիրտը առնէ: Յու-
 սուփ ղինքը բանս գրաւ, ու դարնան բե-
 րանը Գաղիկին հետ մեկտեղ մտան հայ-
 աստան, ըսկսան տակն ու վերայ ընել եր-
 կիրը, զարկին զարնըւեցան, շատ խեղճ
 մարդիկ ըսպաննեցին, շատ ալ գերի բըռ-
 նեցին, շատ իշխաններ ալ յուսահատած՝
 դացին անձնատուր եղան Յուսուփին,
 որոնց մէկն էր Աշոտ սպարապետը՝ Սըմ-
 բատին եղբոր որդին:

Սմբատ ալ տեսնելով որ չարիքներուն
 գեղ ընելու ճար չիկայ, Գուգարաց երկիրը
 փախաւ ծածկըւեցաւ:

Երկրորդ տարին Գաղիկ և Յուսուփ
 պատրաստըւեցան Սմբատին հետ զարնը-
 ւելու. Սմբատ ալ զօրք ժողովեց ու իր
 երկու որդւոցը ձեռքը տուաւ՝ Աշոտին և
 Մուշեղին, ասոնք աղէկ ջարդ մը տալէն
 էտե թշնամեաց, իրենց կողմէն Սևոր-
 գինները որ խօսք գրեր էին Յուսուփին
 հետ՝ ըսկսան փախչիլ, անասունը Աշոտ
 և Մուշեղ քիչոր մնալով ճողքեցին
 զօրքը ու փախան: Բայց Սևորգիներէն
 ոմանք դարանը մտած, բռնեցին Մու-
 շեղը Յուսուփին տարին. Յուսուփ ալ
 Մուշեղը ուրիշ շատ անձնատուր եղած
 նախարարներուն հետ մեկտեղ ըսպաննել
 տուաւ. իսկ զօրքը ցրուեցան ամէն գի-
 արիւնըւայ ըրին բոլոր երկիրը:

Հ. Մմբատ բաղրատունին թագաւորութեան վերջի տարիները ինչպէս անցուց և ինչ մահուամբ մեռաւ :

Պ. Մմբատ Գաղիկ արծրունիին ըրած մատնութենէն ետքն ալ հանգստութիւն չի գտաւ ինչևան իր ցաւալի մահը : Գաղիկ և իր եղբայրը Գուրգէն խմանալով որ Յուսուփին միտքը գէշ է, իրենց ալ մահ կրմտածէ, իրենք իրենց շահը մտածելով բանը բանէն անցնելէն ետև գաղտուկ Մմբատին խնացուցին որ կուղեն իրեն օգնել : Բայց Մմբատ յուսահատած էր, քովը զօրք չէր մնացած. ուստի ուրիշ ճար չի գտնելով քաշուեցաւ Արարատայ գաւառին մէջ Կասպոյտ բերդը

Ան ատենը Յուսուփ ուղեւորով որ ինքը տէր ըլլայ հայաստանին, գնաց Մմբատայ վերայ՝ Կասպոյտ բերդը սլաշարեց : Երբոր ըսկաւ սաստիկ ջարդ ըլլալ երկու կողմէն, Մմբատ Յուսուփէն երգման թուղթ ուղեց որ իրեն չիմնասէ, ու ելաւ գնաց Յուսուփին քով : Յուսուփ երեսանց սատուով ընդունեցաւ Մմբատը, բայց Մմբատ կասկածելով, հրաման առաւ ու Շիրակ գաւառը գնաց, անատենը Գաղիկ և Գուրգէն ալ փախան Յուսուփին քովէն իրենց Վասսուրական աշխարհին բերդերուն մէջ : Յուսուփ աս բանիս վերայ աւելի կատղեցաւ, ու քովի գանըւած նախարարները բռնեց բանտ գրաւ : Մմբատն ալ խարդախութեամբ կանչեց՝ շղթայի զարկաւ ու տարաւ Գուփն քաղաքը՝ խոր բան-

Ք. Ե տի մը մէջ գրաւ : Հոն Սմբատ քիչ մը հա-
 ցով ու ջրով՝ գեանի վերայ պառկելով
 տարի մը տանջուէլէն ետև, Յուսուփ
 զինքը մէկտեղ առաւ ու Երնջակ բերդին
 վերայ գնաց, ուր որ շատ նախարարներ
 քաշած կեցեր էին : Երբոր չիկրցաւ
 բերդին մնաս հասցընել, հանեց Սմբա-
 տը գիմացնին, ու հրաման տուաւ որ ծեծեն
 ծաղրեն, և գահիճներուն ձեռքը տուաւ
 որ տանջեն զինքը, ինչևան որ հաւատքը ու-
 րանայ կամ մեռնի . անանկով վերջա-
 պէս մորթելով գլուխը կարեցին, նահա-
 տակեցին, մարմինն ալ տարին Գուին, փայ-
 տի վերայ խաչի պէս կապեցին, ասկից
 շատ հրաշքներ ալ եղան, քանի մը տա-
 ճիկներ ալ դարձան քրիստոնեայ եղան :

914

Ասանկ խեղացի, խաղաղասէր և բարե-
 պաշտ թագաւորը քանրչորս տարի դըժ-
 բաղդութեամբ թագաւորեց, խեղճու-
 թեամբ ամէնուն սրտին ցաւ ու սարսափ
 պատճառելով մեռաւ . ինքը իր քաշած
 ներուն վարձքը առաւ, բայց աղքը աւելի
 խեղճութեան մէջ ընկաւ . ինքը որչափ
 ջանաց աղգին բարիք ընելու, աղգը այն-
 չափ անոր դէմ կեցաւ : Եւ թէ որ բարակ
 մտածենք՝ Սմբատը այնչափ տանջանքով
 մեռցնողը մեր աղգին նախարարներն էին .
 իսկ Յուսուփ անոնց կամքին որ

ԽԲ

Հ. Սմբատ մեռնելէն ետքը Հայոց վիճակը ինչպէս եղաւ :

Պ. Սմբատ Թագաւորը երբոր մեռաւ, Հայերն ալ ըսկսան ջանալ որ իրենք զիրենք աւելի Թշուառացրնեն : Գիշեր մը գաղտուկ մասնեցին Երնջակ բերդը Յուսուփին զօրացր, որ մասն զամէնքը ջարդեցին, և ուղածնին ընտրեցին գերի առին : Յուսուփ անկէ ետքը սահասպան դրաւ ամէն քաղքներուն, ու ինքը գերիներով մէկ տեղ գարձաւ Ատրպատական գաւառը :

Ան ատենը Աշոտ երկրորդ Սմբատին որդին, որ Երկաթ ըսեցաւ, մինակ վեց հարիւր կարիճ գանալով իրեն միաբան, վաղեց Հայաստանին ամէն կողմերը, մէկիկ մէկիկ զարկաւ ջարդեց Յուսուփին զօրքը, ու ինքը սահասպաններ գնելով ըսկսաւ տիրել Հայաստանին : Աս ատենելով նախարարներէն շատերը, եկան զինքը Թագաւոր անուանեցին : Թէպէտ Աշոտ Երկաթին ըրածները խելքէ գուրս բաներ էին ու Թշուառ ազգին մեծ միտիթարութիւն, բայց իրաւ է որ որչափ մեծ կրակ վառես, որ անցնելէն ետքը կրակին նիւթը կը հասնի կրմարի, մեր ազգին չար նախանձու կրակը ոչ երբէք մարեցաւ, իրենք զիրենք ու ազգն ալ մէկտեղ այրելէն չի դադրեցաւ : Նախարարներէն ոմանք նախանձեցան Աշոտ Երկաթին վերայ, և ըս-

կասան մէկզմէկու և Աշոտին գէմ՝ ելլալ ,
ասանկով արիւնըուայ ըրին Հայաստանը :

Յուսուփ լսելով եղածները , վաղեցնո-
րէն Հայաստան , ու խելքէ դուրս չարիք
հասուց ազգին վերայ ըստիպելով զամէնքը
որ տաճկրնան , շատերն ալ մարտիրոս
ըրին : Ուրիշ քովի ազգերն ալ տեսնելով
Հայաստանին աւերութիւնը իրենք ալ
քաղցին վերան , ու մէկ կողմանէ Յու-
սուփ , մէկալ կողմանէ օտար թշնամիներ
ըր , և մէջէն ալ նախարարները մէկզմէ-
կու հետ խօսք դրած ի պէս ըստսան տակնու
վերայ ընել Հայաստանը ու մէկզմէկու
արիւնը ծրծել : Աս սպառճառաւ մշակու-
թիւնն ալ բոլորովին գաղբելով՝ սաստիկ
սով ինկաւ , որ շատերը կրմեռնէին :

Հ . Գագիկ արծրունին որ Յուսուփէն
թագաւոր անուանեցաւ , իր բռնաւորու-
թիւնը ինչ վերջ ունեցաւ :

Պ . Գագիկ բռնաւոր առջի բերանը մեծ
չփոթութիւն և խառնակութիւն ձգե-
լէն ետքը , աչքը չիկարելով որ կարենայ
բոլոր ազգին վերայ տիրել , բռնի ինքնա-
գլուխ խշխեց իր նախարարութեան մա-
սին Աստղուբական գաւառին վերայ : Սըմ-
բատ թագաւորը որ ազգին խաղաղութիւր
և հանգիստը կրմնադուէր , իմացաւ որ Գա-
գիկին միտքը փառասիրութե՛ւ ետևէ է , ան-
կարելի է համողել անոր միտքը բռնաւո-
րութենէն ետ կենալու , անոր համար
հետը հաշտեցաւ . և այնպէս Գագիկ և
իր աղաքը ետևէ ետև թագաւոր անու-

նով ինքնադուլիս տիրեցին Ասսպուրա կանին վրայ, ջանալով շէնցընել ու ինքիրերնուն քանի որ կրցան թշնամիներէն պաշտպանել: Երբոր Գագիկ մեռաւ, աեղը յաջորդեց իր որդին Դերենիկ տասնըվեց տարի. ետքը անոր սղտի եղբայրը Աբուսահլ Համազասպ տասնըինը տարի: Անոր յաջորդեցին իրեք որդիքը մէկաեզ, Աշոտ, Գուրգէն, Սենեքերիմ: Սենեքերիմ երբոր մինակ մնաց, իր աեւրութիւնը Յունաց յանձնեց ու ինքը Սեբաստիա քաղաքը գնաց նստաւ: Հոն յաջորդեց իրեն իր որդին Դաւիթ, Դաւթին ալ իր տղաքը Ասոմ ու Աբուսահլ, և հոն լըմնցաւ ցեղը թագաւորութեան անուանը հետ մէկաեզ:

Հ. Աշոտ Երկաթին աստեւը երբոր Հայաստան տակն ու վրայ կըլար, չիզաւնրւեցաւ մէկը որ իրեն օգնէ:

Պ. Կոստանդին Պերփեռուժէն Յունաց կայսրը լսելով, և Յովհաննէս կաթողիկոսին ալ աղաչանքով իրեն կանչեց Աշոտը, և մեծ սպասիւ տուաւ անոր, և շատ Յունաց զօրքով խրկեց որ երթայ Հայաստանը մաքրէ թշնամիներէն: Բայց երբոր տանը թշնամիները բնակիչներն են, դրսէն եկող մարդիկը ինչպէս օգնեն:

Աշոտ երբոր կըգառնար Հայաստան, Կողբ քաղքին բնակիչները իրեն դէմ կեցան, Աշոտ անոնց յաղթեց ու եկաւ Երազգաւորս աթոռը դրաւ: Անաստեւը Յուսուփ վախնալով որ Աշոտ Յունաց

օգնութիւն բոլոր Հայաստանը իրեն ձեռքէն կը հանէ, և Հայոց բնութիւնը առած ըլլալով որ մէկզմէկու չի հանիւ, մէկզմէկ հալածել, օտար ազգաց ծառայել խիստ կը սիրեն, անոր համար Աշոտ Երկաթին հօրը եղբորորդին Աշոտը թագաւոր անուանեց, որուն գաւառին բնակիչները անկէ առաջ թագաւորին դէմ դնելով ջարդ կերեր էին, ու խրկեց Հայաստան որ Հայերը մէկզմէկ ջարդելով տկարանան, և ինքը ուղածին պէս խաղայ անոնց հետ: Ո՞ր պատմութեան մէջ լրսւած է որ ազգին սաստիկ թշուառ ատենը, փոխանակ միանալու թշնամիներուն դէմ դնել ջանալու, իրենք իրենց մէջ նոր թշնամութեան պատճառ աւելցնեն երկու ուրիշ բռնաւոր թագաւոր ալ նստեցնելով: Խեղճ ազգը չէր գիտէր թէ ո՞ր թագաւորին հնազանդի, որո՞ւն դէմ պատերազմի, և որո՞ւն բռնաւորութենէն փախչի, չորս դիէն ալ օտար թշնամիներէն պաշարւած: Ուստի ըսկաւ մէջերնին նորէն սաստիկ պատերազմ: Ան ատենը Աստակ Գուգարաց իշխանը մէկալ կողմէն ապստամբեցաւ ու ըսկաւ պատերազմի: Աղէկ մը մէկզմէկ ջարդելէն ետքը Յովհաննէս կաթողիկոսը հազիւ հաշտութիւն ընել տուաւ մէջերնին: Բայց Աշոտ բռնաւոր նորէն երկրորդ անգամ ըսկաւ պատերազմի, ինչւան որ նորէն Յովհաննէս կաթողիկոս հանգարտեցուց:

ԽԳ

Հ . Երկրորդ անգամ Աշոտ Երկաթը Աշոտ բռնաւորին հետ հաշտուելէն ետքը որչափ ատեն խաղաղ մնաց Հայաստան :

Պ . Խիստ քիչ : Այն զի ան միջոցին երբոր քիչմը խաղաղացաւ երկիրը, Աշոտ Երկաթը հարսնէք ըրաւ, Յուսուփն ալ միտք ունէնալով Ամիրասպետէն ապստամբելու, Աշոտին հետ բարեկամութիւն ըրաւ ու թագ խրկեց : Քիչ օրէն ետքը Աշոտ բռնաւորը նորէն երրորդ անգամ ապստամբեցաւ ու զարնուեցաւ Աշոտ Երկաթին հետ, մեծ կոտորած եղաւ մէջերնին . ինչւան նորէն Յովհաննէս կաթուղիկոսը հաշտեցուց : Աս միջոցիս ապստամբեցաւ Ուտէացւոց Մովսէս իշխանը : Աշոտ զան ալ շատ համոզելէն ետեւ, երբոր մրտիկ չըրաւ, գնաց վերան զարկաւ ջարդեց, Մովսէսն ալ վերաւորեց ու բռնեց աչւրները կուրցուց : Բայց ինքը Աշոտ ամենեկին չիկըրցաւ հանգստութիւն գանալ . վասնզի ապստամբութեան ոգի ամէն նախարարներուն միտքը մտեր էր . ինչւան իր Աբաս եղբայրն ալ նախանձելով իրեն՝ ապրստամբեցաւ . և երկու անգամ Աշոտ մեծ վտանգներէն քաջութեամբ ինքզինքը ազատելէն ետքը, ձգեց քաջեցաւ Սևան կղզին հարիւր հոգւով :

Հ . Աշոտ Երկաթին իր քաջութեամբը ազատած վտանգները որոնք են :

Պ. Առջինն է որ երբոր Ասասի Գուգարաց իշխանը ապստամբեցաւ ու Շահուդէ բերդին մէջ կեցեր էր, Աշոտ վերան գնաց ու առջի անգամ զարնըւէլէն ետքը, երբոր զօրքը ցրուեր էր որ ասդին անդին երթան կերակուր գանեն, ու ինքը երկու հարիւր յետուն հոգւով Ասիուրէթ բերդին մէջ կը հանդէսէր կոր, Ասասի խնայաւ, չորս հազար հոգւով եկաւ պաշարեց զինքը: Աշոտ սիրտ տուաւ իրեններուն, վազէց վերանին, շատերը ջարդեց, շատերն ալ բռնեց ու մէջերնէն անհաւատներուն քիթերնին ականջնին կտրեց, խի հաւատացեալներուն ամէն ունեցածը տուաւ ու թողուց: Ան ատենը Ասասի զղջաց՝ ինքիրեն եկաւ Աշոտին. Աշոտ ալ իրեն թողութիւն տուաւ ու նորէն իշխան դրաւ:

Երկրորդ, երբոր լսեց Աշոտ Երկաթ թէ Սահակ իր աները ապստամբեր է, ու թը հազար հոգւով շատ մնաս կընէ կոր Աւաի գաւառին մէջ, ինքը իրեք հարիւր կտրիճ զօրքով վազէց Չորափոր գաւառը, և յոգնած ըլլալով ելաւ քարաժայռ բլրի մը վերայ որ հանգստի, և առաւօտանց եպիսկոպոս մը դեսսպան խրկեց Սահակին, որ գադրի ըրած չարիքներէն: Սահակ զեպիսկոպոսը քովը պահեց ու յանկարծ բոլոր զօրքով Աշոտին վերայ վազէց: Աշոտ վախնալու տեղ, հարիւր հոգի խիստ յոգնածներէն հոն թողուց, ու երկու հարիւրով Սահակին տուած

Երդման թուղթը խաչին պատուանդանին
կապած՝ վաղեց վերանին, սաստիկ ջարդ
մը տուաւ, Սահակը և անոր սղան Գրի-
գորն ալ բռնեց, աչւնին կուրցուց ու
թողուց :

Երբորդ քաջութիւնը եղաւ, երբոր
ապստամբեցաւ Յլիկ Ամրամ Ռւտեաց-
ւոց իշխանը. Աշոտ Երկաթ չիգիանալով
քիչ մարդով դէսի՛ն ան կողմերը զբօսանքի
գնաց. հոն երբոր լսեց Յլիկին ապստամ-
բութիւնը, քիչ մը զօրք Եգերացոց թա-
գաւորէն օգնութիւն առաւ, ու գնաց
անոր վերան՝ որ անտառներուն մէջ շատ
զօրքով կեցեր էր : Ան ատենը Աշոտ
ապահովութեան համար նեղ ճամբանե-
րով մէկ բերդի մը մէջ մտաւ : Յլիկ Ամրամ
երբոր իմացաւ, եկաւ նեղ ճամբաները
բռնեց որ Աշոտ սաշար չունենալով անձ
նատուր ըլլայ : Աշոտին զօրքը ատենելով
վտանգը, գաղտուկ մէջերնին խորհուրդ
ըրին, որ ան գիշերը կապեն Աշոտը՝ Ամ-
րամին ձեռքը տան՝ որ իրենք խալթին :
Աշոտ Երկաթ իր զօրաց միտքը իմանալով,
կէս գիշերուն յանկարծ ելաւ ձի հեծաւ,
ցրուեց նախ կիրճին բերանը կեցած իր
զօրքը, հասաւ թշնամեաց բանակը, զար-
կաւ ցրուեց զամէնքն ալ, ու անցաւ գնաց
Կաքաւաքար բերդը. և հոնկէ հարիւր
հոգի հետը առած գնաց Սևան կղզին
առանձնացաւ, ու ըսկաւ լալ իր աղղին
թշուառութիւնը, ժողովրդեան անհնա-
զանդ բնութիւնը, իշխաններուն նախան-

ձոտ անմիաբան կամքը, և զօրքերուն անհաւատարմութիւնը: Ուրիշ նախարարներն ալ իրենց երկիրները քաշուած, աւելի մեկզմէկէ՝ քան թէ թշնամիներէն վախնալով անհոգութեամբ կեցեր էին:

Կրթութիւնն է որ մարդուս գաղանային կատաղութիւնը կրողսպէ, ու մարդու վայել բանավարութիւնը գործածել կուտայ. ճանչնալ Աստուծոյ մեծութիւնը, մարդիկներուն աստիճանը և իր չափը: Երբոր կրթութիւնը կրպակսի, և մարդս իր չափը չիճանչնար, կըսկըսի գաղանիսպէս ազգին փրասել, ընկերներուն և իրեն չարիք ընելը կըսիրէ:

Աս միջոցիս Գէորգ Մարգարէտունի քսան հոգւով կըստըտէր ասդիս անդին, ու յանկարծ յանկարծ թշնամիներուն վերայ վազելով կըջարդէր:

ԽԳ

Հ. Աշոտ Երկաթ երբոր Սեան կզգին քաշուեցաւ, Հայաստանը ինչպէս կրկաւավարէր:

Պ. Յուսուփ Պարսից ոստիկանը վերա կացու խրկեց Հայաստան Նրար սնունով մէկը: Որուն միտքը ուրիշքան չէր, բայց եթէ զարնէլ, քերէլ, յափշտակէլ, ու կործանէլ: Անառնը Բաբէկէն սիսակեանը գնաց Նրարին առջևը չարախօսութի ըրաւ իր Սահակ եղբորը վերայ: Նրար բարեկամութիւն ձեացընելով՝ Սահակ իշխանը

իրեն կանչեց, ու կռիւներնուն սպառնա-
 ուք լսելէն ետքը, երկուքն ալ շղթայով
 բանա դնել տուաւ. ինքը Գըւնոյ մէջ կա-
 թուղիկոսարանը իրեն սպալատ ըրաւ, ու
 կաթուղիկոսն ալ բռնել կուզէր. և դիտ-
 նալով թէ Յովհաննէս կաթուղիկոսը
 Բիւրակն բերդը քաշուեր է, վերան զօրք
 խրկեց: Արթուղիկոսը փախաւ, բայց բեր-
 դին բնակիչները եօթը օր կռիւ ընելով
 շատ մարդ ջարդելէն ետքը, ան վերջի
 գիշերը մէկ հոգի մը գաղտուկ բերդը
 մատնեց, ու բոլոր բնակիչներուն հետ
 մէկտեղ մատնիչն ալ ջարդուեցաւ. որոնց
 մէ շատերն ալ նահատակ եղան տաճիկ
 չըլլալնուն համար:

Ետքը Նըսր ետ կանչուեցաւ, ու տեղը
 Բըջը վերակացու եկաւ և ուզեց երթալ
 Սեան կղզին ու Աշոտ Երկաթը բռնել.
 Ճամբան Գէորգին քիչ զօրքին հանդիպե-
 ցաւ ու աղէկ ջարդ մը կերաւ: Անով
 բոլորովին կատաղած երբոր Գեղամայ ծո-
 վուն քով հասաւ, Աշոտ Երկաթ տես-
 նելով որ բանը գէշի սխախ երթայ, ինքը
 մէկէն տասը նաւ սպարաաստեց եօթնա-
 կան հոգւով, ու ելաւ ծովին վերայէն նե-
 տով սպատերազմեցաւ անոնց դէմ: Երբոր
 անոնք ըսկասն շփոթիլ, վազեց վերանին,
 զարկաւ ցրուեց բանակը, ու շատ աւարով
 նորէն կղզին քաշուեցաւ:

Իսկ Բըջը մէկքանի բերդերու ալ աւե-
 րութի և կոտորած ընելէն ետքը ետ կան-
 չըուեցաւ, տեղը նորէն եկաւ Նըսր, ու

Բ. Ե ըսկաաւ քիչ մը խաղաղութեամբ կառաւարել :

Աս միջոցիս Գազիկ բռնաւորն ալ իր երկիրները կը կառավարէր : Աշոտ Երկաթն ալ տեսնելով որ քիչ մը խաղաղութիւն եղաւ, ելաւ ըսկաաւ հոգալ երկիրը, ու իր Աբաս եղբօրը հետն ալ հաշարւեցաւ : Ասանկով Աշոտ Երկաթ Սմբաւ օին մահուանէն ետքը կռուով ու հալածելով քսանըջորս տարի թագաւորեց ու մեռաւ : Ասիկայ Շահընշահ ալ կոչւեցաւ որ ըսել է թագաւորներու թագաւոր :

Հ. Աշոտ Երկաթը մեռնելէն ետե Բագրատունեաց թագաւորութիւնը որոննանցաւ :

928 Գ. Աբաս իր եղբայրը թագաւոր օժեցաւ նախարարներուն հաւանութեամբբ, և աթոռը գրաւ Կարս քաղաքը, ըսկրոաւ Հայաստանին մէջէն թշնամիները ջնջել : Գնաց Գուլին, նոր վերահացուին հետը շատ սիրով և խոնարհութեամբ վարւելով՝ բանտ գրած իշխանները ազատել տուաւ, և կաթուղիկոսարանն ալ նորէն ձեռքէն ետ առաւ :

Շատ հայեր որ ասդիս անդին ցրուել էին, լսելով թէ խաղաղութիւն եղաւ Հայաստան, գարձան եկան. կրօնաւորներն ալ ժողովեցան ու ըսկսան վանքեր շինել. որոնց շատ օգնեց Աբաս :

936 Աս միջոցիս մեռան Աշոտ և Գազիկ բռնաւոր թագաւորները, և Գազիկին

յաջորդեց Վասպուրական աշխարհին վերայ Աշոտ Գեղեցիկ : Իսկ Աբաս խաղաղութեամբ թագաւորելով, ձեռք զարկաւ Կարսին կաթուղիկէ եկեղեցին նորէն շինելու :

Ան օրերը Ափսաղաց ու Վրաց թագաւորը որ Բեր կրտուէր, Աբասին վերայ պատերազմի ելաւ, և հասնելով Կուր գետին քովը՝ ծաղրելով լուր խրկեց Աբասին, թէ ինքը կուղէ գալ օրհնել տալ եկեղեցին Վրաց ծխով : Աբաս բարկացաւ, առաւ իր զօրքը՝ Բերին գէմն ելաւ, երկու անգամ սաստիկ զարնըւեցաւ յաղթեց բոլորովին, Բերն ալ բռնեց բերաւ Կարս՝ խոթեց եկեղեցին ըսելով, թէ ահա տես ան եկեղեցին որ կրփափաքէիր օրհնել տալու, աղէկ նայէ, որովհետեւ մէյմ՝ ալ պիտի չիտեսնես : Ետքը աչքները կուրցընել տուաւ :

Իսկ Ափսաղները վախնալով՝ եկան շատ ընծաներով հաշտութիւն ուզեցին ու Բերն ալ առին տարին : Բայց Յոյները կարծելով թէ Աբաս իրենց օրհնութիւնը ծաղրեր է, ըսկսան իրենք ալ հայոց եկեղեցւոյն խորհուրդները արհամարհել :

Աբաս՝ եղբօրը մեռնելէն ետքը քսանըջորս տարի խաղաղութեամբ թագաւորեց ու վախճանեցաւ, թողով երկու որդի Աշոտ և Մուշեղ :

Տ. Աստուծոյն աշխարհին թափափուրութեանը մէջ Աշտո Գերեհնիկին ատեն ինչ գործք հանդիպեցաւ յիշելու արժանի :

Պ. Աշտո Գերեհնիկ գրողուէլով ոմանց չարախօսութենէն, Ապլխարիպ Հաւնունի կարիճ սպարապետը իշխանութենէն ձգեց : Ապլխարիպն ալ կատղած գրք գուեց Գերեհնիկին դէմ հերայ և Զարաւանդայ իշխանը, որ եկաւ պատերազմեցաւ, ու շատ հայեր ջարդեղէն ետքը՝ բռնեց Աշտո Գերեհնիկն ալ բանտ դրաւ. և ամէն օր երբոր զբօսանքի կերթար՝ հետը կրտանէր, որպէս զի իր ծառաները հետը խաղան որ ինքը զուարճանայ : Աս բանիս վերայ նեղանալով վանքերուն առաջնորդները, նզովք կարդացին Ապլխարիպին վերայ : Անատենը Ապլխարիպ խելքը գլուխը ժողվեց, ուզեց ազատել զթագաւորը. ուստի գաղտուկ մարդ խրկեց Աշտո Գերեհնիկին՝ ըսելով որ իշխանին ծառաները հետը խաղալու ատեն, դու դէպ'ի Որմեայ ծովը վազէ, ես քեզ կազատեմ : Աս ըսածին հետեւելով երբոր Աշտո Գերեհնիկ դէպ'ի ծով վազեց, յանկարծ դարանէն դուրս ելաւ Ապլխարիպ իրեննէրովը, Գերեհնիկին ետեւն վազողներուն դէմ կեցաւ և մէկբանին ըսպաննեց. և երբոր մէկալնոնք փախան հեր քաղաքը

ու գրները գոցեցին, Ապլխարիսի կատ-
ղած քաշեց սուրը և ուժով երկրթէ
գրանը զարկաւ՝ մէջը խոթեց, ու ետ դար-
ձաւ գնաց նորէն Աշոտ Գերեհիկը
Թագաւոր նստեցուց, ինքն ալ մեծ պա-
տուոյ հասաւ :

Աս Ապլխարիսի վերայ կրտեսներէ մեծ
կտրճուածիւն անվախ, ու խելք . բայց
կրքոտ ըլլալուն՝ աղէկը գէշէն չէր կրնար
ընտրել : Երբոր մէկ ազգի մը իշխանները
չէն գիտեր աղէկը գէշէն ընտրել և կիրքը
ըստ տեղւոյն բանեցընել, ան ազգը յայտ-
նի կորրատեան ճամբուն մէջն է :

Հ. Աբասին Թագաւորութեանը ո՛վ
յաջորդեց :

Պ. Մեր ազգը աւազի պէս է . մէկըղ-
մէկ չիբռնելէն ետքը, բաց տեղ ալ հովէն
կըցըրէի : Աբասը մեռաւ . մէկէն ուրիշ մը
Թագաւոր նրստեցընելու տեղը՝ Թողու-
ցին երեսի վերայ ազգին կառավարու-
թիւնը : Թշնամիք ալ պատրաստ, չորս
կողմէն ըսկսան Հայաստանին վերայ վազել
ու երկիրը աւրըշարկել : Անատենը Աբա-
սին մեծ տղան Աշոտ Գ, երկու հազար
հոգիի ջափ ժողվեց ու ըսկսաւ անոնց դէմ
դնել . և կամաց կամաց շատցուց զօրքը
ինչւան քառասունըհինգ հազար հոգի .
անոնց վերայ սպարապետ գրաւ Գէորգ
իշխանին որդին Գոռ անունով . քսանը-
հինգ հազար զօրք ալ Գոռը ժողվեց, զօր-
քին թիւը հասաւ ութսուն հազարի . ա-
սով ամէնուն վերայ վախ ձգեցին :

Ք. Ե
961

Ինչ տարիէն ետև ժողովք ըրին նախարարները, կաթուղիկոսը, Աղուանից թագաւորն ալ մէկտեղ, ու Աշոտ երրորդը թագաւոր օժեցին Անի քաղքին մէջ: Իսկ Մուշեղ Աշոտին եղբայրը գլուխ քաշեց՝ դնաց կարս քաղաքը ինքնագլուխ թագաւորեց: Աշոտ երրորդ աչք գոցեց՝ նոր խռովութիւն չիհանելու համար. գիտնալով որ ինչ տարի առանց թագաւորի կեցած ու զինքը թագաւոր չընտրող ազգը՝ աւելի կուզէ առանց թագաւորի խռովութեան մէջ կենալ, քան թէ կարգաւորեալ թագաւորի մը հնազանդիլ:

Անոր համար ինչ և իցէ ատեն՝ ով որ հայ աստանի մէջ սպտտամբութիւն մը ընել կուզէր, գիւրաւ կը դըռներ սպարաաս ընկերներ աշխարհքը տակն ու վըրայ ընելու համար: Ուստի քանի որ ազգիս մէջ կրթութիւն չէ մտած, սպարապ է կրսէր Աշոտ՝ ջանալ հնազանդեցընելու զամէն քր: Մէկզմէկու չիհաւնելու՝ չիհնազանդելու և օտար ազգերու սիրով գերի ըլլալու օրինակներ խիստ շատ աչքին առջևը կրտեսներ, ու մեր ազգին խառնըւածքն է սպտաճառ, կրսէր: Մանաւանդ երբոր միտքը կրքերէր իր սպարուն Աշոտ Երկաթին ատենի գիպուածները և անոր քաշած նեղութիւնները առանց մէկ օդախ մը, ամենևին չէր ուզէր որ Մուշեղին ահաճութեան նշան մը տայ:

Ասանկով Մուշեղ կարսին վըրայ շատ տարի թագաւորելէն ետև մեռաւ, ու

տեղը նստաւ իր որդին Աբաա . անոր ալ յաջորդեց Գադիկ, որ թշնամեաց ձեռքէն յուսահատած՝ իր թագաւորութեան գաւառն ալ Յունաց յանձնեց :

Հ . Աշոտ երրորդ ինչպէս թագաւորութիւն քչեց :

Պ . Շատ խելքով և բարեպաշտութեամբ թագաւորեց Աշոտ երրորդ, ամէնուն հետ ջանալով խաղաղութիւն ընել : Շատ վանքեր շինեց, եկեղեցիներ, հիւանդանոցներ, աղքատանոցներ . և անձամբ կրպարտէր կրճառայէր հիւանդներուն, ու կը հոգար աղքատները, և շատ անգամ զանոնք իր սեղանը կառնէր . անոր համար Աշոտ Ողորմած կոչեցաւ :

Անատենները համտուն տաճկներուն սպարապետը ասլատամբեցաւ իր ամիրապետէն, ու հայոց վերայ սպառնալով ելաւ : Աշոտ ողորմած գէմն ելաւ, զօրքը ջարդեց ու համտունն ալ ըսպաննեց : Աս բանիս վերայ ամիրապետը ուրախանալով թագ ու սարգէններ խրկեց Աշոտին՝ զինքը Շահի Արմէն անուանելով : Աշոտ քսանըվեց տարի խաղաղասիրութեամբ թագաւորելով, մեծցուց զարդարեց իր թագաւորութիւնը . Անի քաղաքը մայրաքաղաք ըրաւ, սարխապները նորոգեց : Իր ընկերն ալ Խոսրովանոյշ թագուհին՝ անոր բարեպաշտութեանը հետևեցաւ . երկու մեծ վանքեր շինեց Սանահին և Հաղբատ՝ որ ինչևան հիմա կան :

Հ. Աշոտ երրորդին մեռնելէն, ետև
Հայաստանին վիճակը ինչպէս եղաւ և
Թագաւորութեանը ո՞վ յաջորդեց :

977

Պ. Աշոտ երրորդ Թողուց իրէք որդի.
Սմբատ, Գագիկ, և Գուրգէն : Սմբատ
հօրը տեղը անցաւ և կոչւեցաւ Սմբատ
երկրորդ. և հօրը տուած կրթութեանը
հետևելով Հայաստանը պահեց իր խա-
ղաղ վիճակին մէջ. վաճնտեց ամէն թշնա-
միները, և իր քաջութիւններուն համար
Շաշնշահ ըսեցաւ :

Ութը տարւան մէջ շինեց նոր բարձր
մեծ պարիսպ մը Անի քաղաքին շրջապա-
ար, քաղաքն ալ զարդարեց շատ շի-
նուածքներով ու եկեղեցիներով, ինչւան
որ եկեղեցիներուն թիւը հազար մէկ կը
հասնէր կրտսն :

985

Աս Սմբատ երկրորդը ըսկսաւ շինելու
կաթուղիկէ եկեղեցի մը Տրդատ անուա-
նի ճարտարապետին ձեռքովը, որուն
շինուածքը իր օրը չիլըմնցաւ :

Բայց Սմբատ ըսկսած առաքինութեանը
վերայ չիլըրցաւ հաստատուն կենալ. շատ
անգամ յաջողութիւնը մարդուս առա-
քինութիւնները մոռցրնէլ կուտայ : Տե-
սաւ Սմբատ որ ամէն կողմանէ ուղտձը
կըլայ կոր ու կըլօրանայ կոր, յանդգնե-
ցաւ իր քրոջը աղջիկը իրեն կին առաւ
ընդգէմ եկեղեցական օրէնքի, և նոյն

տարին ալ մեռաւ՝ տասուերկու տարի թա-
 դաւորելէն ետև : Օր մը առանց աղէկ մը
 քննելու ըստաննել տուաւ խենդ մարդ
 մը, ու հրամայեց որ մարմինը չիթաղեն :
 Երբոր մէկքանի կրօնաւորներ դաշտին
 երեսը գտան ու թաղեցին, նորէն հանել
 տուաւ. ան ատենը կրօնաւորները նե-
 ղանալով ըսին, թէ ինքն ալ անանկ պիտի
 ըլլայ :

Հ . Սմբատ երկրորդին ո՞վ յաջորդեց :

Պ . Իր երկրորդ եղբայրը Գագիկ Ա .
 որ իր բարեպաշտութեամբ, խոհեմու-
 թեամբ, քաջութեամբ ու մեծագործու-
 թեամբ առջիններէն վեր ու Բագրատու-
 նեաց ցեղին պարծանք եղաւ : Ասոր օրը
 թշնամիները բոլորովին պակսեցան . վասն
 զի ինքը իրեններուն սիրելի եղաւ և օտար-
 ներուն ահաւոր : Նոյնպէս իր կնիկն ալ
 Կատրամիտէ թագուհին բարեպաշտ ու
 աշխարհաշէն էր :

985

Ամէն ազգ օրէնքի կը յարմարի ու ա-
 նանկ խաղաղութիւն կը գտնէ և թագա-
 ւորութիւնը կը զօրացնէ . Գագիկ Ա .
 գիտնալով որ աս բանս անհնարին էր մեր
 ազգին, և իր հօրմէն ալ Աշոտ երրորդէն
 խրատուած ըլլալով կըրնար ինք զինքը
 ազգին բնաւորութեանը յարմարցնելու .
 որով թէպէտ կարգաւորեալ կառավա-
 րութիւն չէր ըլլար, ամէն տուրքերէն ա-
 ղատիլ և կըթուրթեամբ և ուսմամբ ազգը
 ծաղկեցնելու յոյս չիկար, բայց ինքը
 սիրելի կըլլար ու խաղաղութեամբ խօսք

հասկերցողները կրկառավարէր, չորս կողմի թշնամիներուն ալ սլատճառ չէր տար գազանու թիւննին ցուցնելու :

Թագաւորու թեան առջի օրերը խենթ կին մը ձայն հանեց, թէ Սմբատ երկրորդ մեռած չէ, և գիշերը երեցաւ ինծի : Գաղիկ ժողովուրդը դիւրաւ խաղաղը նեւու համար Սմբատին մարմինը գերեզմանէն դուրս ձգել տուաւ որ ամէնքը տեսնեն . ասով կրօնաւորներուն խօսքը կատարուեցաւ :

Գաղիկ առաջին երեսուն տարի թագաւորեց ամենայն յաջողութեամբ, խոհեմութեամբ բռնելով զամէնքը . և վախճանեցաւ երկու որդի թողլով, առջինը Յովհաննէս Սմբատ, երկրորդը Աշոտ :

Հ. Առաջին Գաղիկին թագաւորութեան ատենը հայաստանի մէջ սլատահած ինչ երևելի դիպուած կրօնատակուի :

Պ. Տայոց գաւառին մէջ Դաւիթ կիւրասպաղատին մահը . որովհետեւ Դաւիթ քաջ և բարեպաշտ ըլլալով Յունաց կայսերէն շատ սլատիւ ունէր : Անգամ մը այլադպիսները հարիւրհազար հողով վերան վազեցին . Դաւիթ օգնութիւն ուղեց Գաղիկ թագաւորէն և Վրաց թագաւորէն, որ ամէնը մէկէն եղան քսան հազար հոգի . ասոնք Աստուծոյ ասլաբինելով տաճկրներուն դէմն ելան, ջարդեցին, ցրուեցին, և իրենցմէ միայն մէկ քանի վրացի զօրք մեռան : Ասով Դաւիթ անուանը խիստ մեծցաւ . անոր համար

նախանձելով ոմանք, վրացի Եպիսկոպոսի մը ձեռքով թոյն խառնեցին հաղորդութեան մէջ ու ըսպաննեցին զինքը: Մեռաւ Դաւիթ ամէնուն թողութիւն տալով և իր ահբուծիւնն ալ կայսեր թողուց:

Մեր ազգին պատմութեանը մէջ միշտ կըլուի բարի և բարերար մարդիկներու վարք, և գրեթէ ազգէն ընդունածնին եղեր է միշտ չար հատուցմունք՝ նախանձին և հակառակասիրութեան ձեռքէն, որուն հետևանքն է ազգին կործանումը և փճանալը:

ԽԵ

Հ. Գաղիկ առաջինին մեռնելէն ետև հայաստանին խաղաղութիւնը զորչափ առե՛ն դիմացաւ:

Պ. Հայաստանին երկայն առե՛ն խաղաղութեան մէջ մնալը անկարելի եղեր էր: Վասն զի խռովութիւն սիրող մարդիկ ետևէ ետև կըշտանային, և մարդուս կիրքերը զըսպող կըթուծիւնը մէջերնին չեկար: Ժողովուրդը թագաւոր նստեցուցին 1020 Գաղիկին մեծ տղան Յովհաննէսը, որ թէպէտ խելացի էր, բայց ծանրաշարժ: Աշոտ որ քաջ կարիճ մըն էր՝ ուզէց որ 1021 ինքը թագաւորէ. զօրք ժողվեց, ըսկաւ պատերազմիլ Յովհաննէսին դէմ, յաղթեց ու եկաւ Անին պաշարեց: Ան առե՛նը նախարարները Պետրոս կաթուղի

կոսին և Վրաց թագաւորին հետ մէջ մասն հաշտեցուցին երկու եղբարքը՝ երգում առնելով ու հաշտութեան թղթով որ մեծը թագաւորէ, սղտիկն ալ անոր երկրորդը ըլլայ : Բայց նախարարներէն ոմանք թշնամութիւն ունենալով Յովհաննէսին հետ, գրգռեցին Վրաց Գորգի թագաւորը, որ ծածուկ մարդ իրկեց ու առանց կռուոյ թագաւորին ձմերոցը երթալու ատեն վերան հասան բռնեցին : Բայց Գորգին խմանալով Յովհաննէսին անմեղութիւնը և նախարարներուն չարութիւնը, զինքը ազատ թողուց՝ ու փոխարէն ձեռքէն իրէք բերդ առաւ :

Իսկ Աշոտ երդումը ոտքի տակ առաւ, և Յովհաննէսին տեղը անցնիլ ուղեւոր խարդախութեամբ հիւանդ ձեացաւ որ Յովհաննէսը անկասկած մինակ իր քովը գայ, և անկողինին քով որոգայթ սպառաստեց : Յովհաննէսը երբոր օտանրւելու եկաւ, որոգայթին մէջ բռնրւեցաւ. ըսկը սաւ աղաչել Աշոտին՝ որ իրեն խնայէ : Ան ատենը Ապիրատ մեծ իշխանը բռնեց Յովհաննէս թագաւորը կապեց իբր թէ բանտ գնելու համար, ու տարաւ նորէն աթոռը նստեցուց, ըսելով թէ Աւու է իմաստուն թագաւոր՝ քան զանողորմ բռնաւոր : Ու ինքը փախաւ Գրւին Ապուս վար ամիրային քովը, որ քիչ օրէն ըսպաննեց զինքը՝ հաւտալով ոմանց չարախօսութեանը :

Բայց Աշոտ չկրցաւ Յովհաննէսին

դէմ պատերազմի ելլել: Ասան զի նա խարարներէն շատերը տեսնելով իր անիրաւ և բռնաւորական կերպը, զինքը թողուցին: Ան ատենը Աշոտ ելաւ գնաց Ասսիլ կայսեր ու ինքզինքը սիրցուց, և կայսերէն զօրք իրէն օգնութիւն առած դարձաւ Հայաստան, պատերազմով անհետ մէկ քանի նախարարներու գաւառներուն, և զօրքը քովէն ետ իրկեց շատ պարգևներ տալով, ու ինքը ըսկսաւ կերուխումի հետ ըլլալ ինչևան որ մեռաւ, ու տասնըջորս տարւան Գագիկ անունով տղայ մը թողուց: Աս ատեններըս Սկիւթացիք Հայաստանին վերայ վազելով երբ որ ասդիս անդին ջարդ կրնէին, Յովհաննէս Թագաւորն ալ վախնալով Պետրոս կաթողիկոսը Ասսիլ կայսեր խաւրեց, թղթով մը խոստանալով որ իր մեռներէն ետքը Անին կայսեր կուտայ, միայն թէ զինքը պաշտպանէ Սկիւթացուց դէմ:

1024

Անկէ ետև մասնաւոր յիշատակի արժանի բան մը չիկայ Յովհաննէս Թագաւորին կամ Աշոտին վերայ ինչևան իրենց մահը, որ երկուքն ալ մէկ տարւան մէջ մեռան: Յովհաննէսին Թագաւորութիւնը անանկ ողորմելութեամբ քչեց քսան տարի: Հայաստան ընդարձակ էր և ճոխ, ամէն դին Հայ բնակիչներով լեցուն, բայց Թագաւորին կրճնազանգերով որ կուզէր: Եւ Թագաւորը որուն կիշխէր, հազիւ թէ իր բնա՛լած գաւառին, անոր ալ չէր իշխէր, վասն զի կայսեր

1039

յանձներ էր : Այսպիսի թագաւորու-
թեան մէկ քանի տարի մըն ալ քշելք
հրաշք սեպելու էր , քան թէ ծաղկելուն
ըսպասելու :

Հ . Յովհաննէս Սմբատ թագաւորին
ատենը Սկիւթացիք ինչ մնաս հասուցին
Հայաստանին . և ուրիշ ինչ մասնաւոր
գիպուածներ հանդիպեցան յիշատակի
արժանի :

Պ . Սկիւթացիք ըսկսան քալել գէպ ՚ի
Վասպուրական աշխարհին վերայ . Սե-
նեքերիմ Արծրունի թագաւորը վրանին
զօրք խրկեց ու վաւրնատեց . բայց մտածե-
լով սուրբ Ներսէսի մարգարէութիւնը , և
վախնալով որ պիտի ջընջուի , իր տէրու-
թիւնը յանձնեց Վասիլ կայսեր , ու տեղը
առաւ Սեբաստիա քաղաքը իր գեղերովը ,
և չորս հարիւր հազար մարդու չափ հետը
առած գնաց հոն քաշեցաւ :

Իսկ Սկիւթացոց իշխանը Տուղրիւ նե-
ղացած ըլլալով իր զօրացը ջարդուելուն
համար , դարձաւ եկաւ Հայաստանին
Նիգ գաւառին վերայ , ըսկսաւ այրել
աւրել ու զամենքը ստիպել հաւատքնին
ուրանալու : Ան ատենը Վասակ պահ-
լաւունին որ Բջնի բերդը կընստէր , գէմն
ելաւ հինգ հարիւր հոգւով : Երբոր Սկիւ-
թացոց բանակէն Եօթնգայլ անունով
կարիճ մարդ մը մենամարտութեան հա-
մար մինակ բանակէն դուրս ելաւ՝ կորը-
ծութիւն ցուցնել . ուղելով , Վասակ
վերան վազեց զարկաւ , գլխուն կէտը գե-

տինը ձգեց : Կատողեցան Սկիւթացիք ,
սաստիկ զարնրեցան ու աղէկ ջարդ-
կերան ցրուեցան : Բայց Վասիլ առան-
ձին քաշուած՝ Այ գոհութիւն տալու ա-
տենը , թշնամիներէն մէկը հոն պահւեալ
ըլլալով՝ ետեէն գլխուն քար մը զարկա-
ու ըսպաննեց :

Տուղրիլ անկէ անցաւ դնաց Պարսկաս-
տանին տիրեց ու նորէն անոնց թագաւոր-
ութիւնը հաստատեց :

Աս միջոցիս մարդ մը հայաստանին մէջ
ըսկսաւ ստորտելով , Այ ինծի կը կան-
չէր : Քանի մը տարի ալ առաջ Յովհան-
նէս Կողեռն վարդապետը գուշակեց հայ-
աստանին կործանումը :

Աս օրերս Կոստանդին Վասլի եղբայ-
րը և յաջորդ կայսրը մեռնելու ատեն ,
կանչել տուաւ հայու քահանայ մը , ու
եա տուաւ Յովհաննէս թագաւորին Ա-
նիին համար Վասլի տուած նամակը : Իսկ
անիրաւ երէցը նամակը քովը պահեց , ու
երբոր Միքայէլ կայսրն ստաւ 1034 թուա-
կանին , տարաւ արծաթասէր երէցը նա-
մակը նորէն կայսեր տուաւ , ու շատ ըստակ
պարգև առաւ : Առած ըստակն ալ իրեն
հետ կորաւ . բայց ըրած անիրաւութեան
յիշատակը յաւիտեան պիտի մնայ : Ան
օրերն է այն սարսափելի անողորմութեան
գործքը , որ ըրաւ խորիկ Պարսիկը Բեր-
կրի քաղքին քաղաքապետը :

Հ. Խտրիկ սպարտիկը ի՞նչ անողորմութեան գործք ըրաւ Բերկրի քաղքին քաղաքացոց :

Պ. Բերկրի վասպուրական աշխարհին մէջ Յունաց յանձնըւած քաղքներուն մէկը ըլլալով և Պարսից ձեռքը անցած, Յոյնք սպատերազմով առին Պարսից ձեռքէն, ու նորէն ետ տուին : Ան ատենը Գանձի Հայ իշխանը զօրք ժողովեց, եկաւ նորէն առաւ, ու Խտրիկ քաղաքապետը մէկքանի մեծերով միջնաբերդը փախուց, և զօրքը ամէնքը ուրախութեամբ ուտելու խամելու հետ ըսկսան ըլլալ : Աս եղածները լսելով մէկքանի ամիրաներ մէկ եղան, յանկարծ քաղքին վերայ վազեցին ու սաստիկ ջարդ տուին, Գանձին ալ ըսպաննեցին և Խտրիկը խալսցուցին . որ կատուած սիրտը սպառըշարկեցնել ուզելով, մարդու հասակով փոս մը փորել տուաւ, ու ողջ բռնած մարդիկներէն այնչափ մորթել տուաւ ան փոսին վերայ, ինչւան որ արիւնով լեցւեցաւ փոսը, ու ինքը մտաւ մէջը լըւացւեցաւ : Թէ որ սլատմելու մարդուս սիրտը չիգիմանար, հասպաղուարձութեան համար ընողները ու ընել տուողը ի՞նչ տեսակ գազանի սիրտ սէտք է որ ունեցած ըլլան :

Հ. Յովհաննէս Սմբատ Թագաւորը մեռնելէն ետև Հայոց տէրութիւնը ի՞նչ վիճակ ունեցաւ :

Պ. Երկու տարի առանց թագաւորի մնացին անհողութեամբ և անմիաբանութեամբ: Ինչևան որ Վեստ Սարգիս իշխանը ըսկսաւ զօրանալ թագաւորելու մտքով: Միքայէլ կայսրն ալ ըսելով Յովհաննէսին մահը, մարդ խրկեց Հայոց, ու կուզէր Անի քաղաքը իր գաւառովը, և երբոր Հայերը չուզեցին տալ, կայսրը վերանին իրեք անգամ զօրք խրկեց, որ Սարգիսին հետ մէկ եղած ըսկսան տակն ու վրայ ընել Հայաստանը: Բայց չորրորդ անգամուն հազիւ թէ արթնցան իշխանները, ու Վահրամ պահլաւունի սպարապետին առաջնորդելովը թնամեաց դէմ էլան ու սաստիկ ջարդով փախուցին: Բայց Սարգիս շատերուն միտքը համոզելով ըսկսաւ տիրելու չորս դին: Ան ատենը Վահրամ սպարապետը ուրիշ իշխաններուն և Պետրոս կաթողիկոսին հետ մէկ եղած, կանչեցին Գագիկ երկրորդը տասնըվեց տարւան՝ Յովհաննէս թագաւորին Աշոտ եղբօրը տղան, որ Սարգիսին ձեռքէն փախեր էր, թագաւոր օժեցին:

1040

1042

Հ. Գագիկ երկրորդ ինչպէս թագաւորութիւն քշեց:

Պ. Թէպէտ Գագիկ երկրորդ շատ կրթութրւած խելացի և կարիճ թագաւոր էր, բայց ժողովրդին ատենը չէր անանկ թագաւոր ունենալու. անոր համար հակառակութիւնով թագաւորնտաւ, շատ կռուով քիչ ժամանակ թագաւորութիւն

քշեց, և թշուառութիւնով լրմնացուց իր և ազգին թագաւորութիւնը :

Ահա Սարգիս տեսնելով որ ուղածը չկաջողեցաւ, փախաւ Անի քաղաքին միջնաբերդը ամրացաւ. Գագիկ անվախ ելաւ մինակ քովը գնաց համոզեց որ երթայ անկէց : Սարգիս ելաւ Սուրմառի բերդը գնաց, բայց ապստամբութեան միտքով. ան ատենը Գագիկ զօրքով վերան գնաց, բռնեց Սարգիսը կապեց ու բերաւ Անի քաղաքը. բայց անոր կեղծաւորութենէն և շատերուն ալ միջնորդէն խաբւելով ազատ թողուց : Եւ ինքը ըսկսաւ չորս դին պտրտիլ ու ապստամբները խրատել որ մէկ սիրտ մէկ հոգի ըլլան. վասն զի չէր ուղեր վրէժխնդրութիւն ընելով ցուցնել իր մեծութիւնը և կամքին կատարելը, հապա ազգին օգուտը. անոր համար ալ քաջ կտրիճներուն իրեն հետ միաբան շաանալը կուզէր : Բայց կրթեալ թագաւոր ան կիրթ ժողովրդեան վերայ այնպէս է, ինչպէս նոր լաթի կտորը հինին վերայ :

Ան միջոցին Սկիւթացիք անհամար բազմութեամբ նորէն հայաստանին վերան վազեցին. Գագիկ տասներկէց հազարով միայն անոնց դէմն ելաւ, դեռ շատերը իրեն հետ միաբանած չըլլալուն համար. բայց ինքը վարպետութեամբ անոնց դարան գործելով յաղթեց ու ցրուեց փախուց :

Իր թագաւորութիւնը կրլմանէր քաղաքի մը՝ որ մէջը կրակ ինկած ըլլայ, ու բնա-

կիւնքը և թշնամիք մէկ եղածը բռնկեցնելու նային • մինակ քաղաքատեար չորս դին ընկած կրակէն սպրեցնել կուզէ քաղաքը :

ԽԹ

Հ. Գագիկ կրօցա՞ւ համոզել Յուհայ կայսրը որ Անին թողու իրեն :

Պ. Չէ • Մոնոմախոս կայսրը Միքայէլին տեղը անցնելով, մարդ խրկեց Գագիկ թագաւորին որ Անին իրեն տայ : Գագիկ շատ անգամ սիրով խօսելով եկած մարդիկներուն հետ, ու ցուցնելով իր սլաոճառները, յանձ չառաւ : Անատէնը երկու անգամ զօրք խաւրեց կայսրը • բայց երկու անգամն ալ յաղթուեցան ու խաղք եղած ետ դարձան :

Կայսրը գրգռեց Դըւին քաղաքին Ատուսվար ամիրան • Գագիկ անոր սիրան ալ առաւ շատ ըստակով, ու հանդարտեցուց : Գագիկ խմացաւ որ Սարգիս ձեռքի տակէ չարութիւն կրնէ, բայց անխկայ ինքզինքը արդարացուց, ու ըսկսաւ ջանալ որ զամէնքը թագաւորին դէմ թշնամացնէ : Այնչափ որ շատ նախարարներ մէկ եղած Սարգիսին հետ՝ Գագիկէն գաղտուկ կայսրը համոզեցին որ Գագիկը իրեն կանչէ : Բայց Գագիկ խմացաւ կայսեր խաբէութեան միտքը ու ամենևին մէկ կերպով մը յանձ չառաւ երթալը : Ելխանները խաղաղութիւնը սլաոճառ

Ք. Ե բերելով խարեցին կաթուղիկուսը, ու պատարագի մէջ սուտ երգում ընելով խոտացան որ քաղաքը պաշտպանեն : Գագիկին ճարը հատաւ, քաղաքը հաւատարիմ մարդիկներուն յանձնեց ու գնաց :

Կայսրը զինքը սիրով ընդունեցաւ, ետքը ըսկտաւ բռնագատել որ մայրաքաղաքը իրեն տայ : Երբոր ամենակին մէկ կերպով մը Գագիկ յանձ չառաւ, կայսրը բռնի արդիւլեց զինքը կղզիի մը մէջ : Ան ատենը անօրէն իշխանները մէկ եղած՝ կուզէին Անիին բանլիքները խրկել կայսեր թէպէտ շատերն ալ դէմ կրկենային, բայց մէկաշնոնք բռնի խրկեցին : Գագիկ երբոր իմացաւ իշխաններուն ասանկ անօրէնութիւնը, յուսահատած ինքն ալ չէ թէ միայն Անին թողուց, հասլա բռնորովին հրաժարեցաւ թագաւորութենէն՝ իրէք տարի իշխեւէն ետեւ : Կայսրը իրեն մէկքանի քաղաքներ տուաւ Կասպագովկիայի մէջ, և Գագիկ հոն քաշեցաւ ողբով ու վայով կանցրնէր իր կեանքը :

1045

Գիտէր Գագիկ ազգը կառավարելու ճամբաները, կրօնները իր ազգին ողորմելու թիւնը և կարօտութիւնները, գիտէր անոնց կարողութեան չափը. ամիսոս կրտսեր, միայն թէ ազգս ինծի դէմ չեւէր՝ բոլոր աշխարհքիս կրտիրէի. և կուլար ազգին անմիտ փառասիրութիւնը և անմիաբանութիւնը, որոնցմով իրենք զիրենք կրճգէին կոր չիսալքսելու թշուառութիւններու մէջ : Բայց ինչ օգուտ. ազգը

ինքիր ձեռքովը Այ տուած թագաւորու
 թիւնը սա երկրորդ անգամ է որ գեանէ
 գեաին կրզարնէ : Անձնասպանին վըրայ
 լալ կըլայ, բայց օգնու թիւն ընէլ չըլար :

Հ . Գագիկ երկրորդին թագաւորու
 թեանէ հրաժարէլէն ետքը Հայոց վիճակը
 ինչպէս եղաւ :

Պ . Թշուառութեան ու ողորմելու
 թեան մէջ ընկած մնացին : Հոռմըները մէկ
 կողմանէ Հայերուն ջարդ ու վնաս տալէն
 ետքը, ետէ էին որ Հայոց կաթուղիկո
 սութիւնն ալ վերցընեն : Աւրիշ թշնամի
 ներն ալ Հայաստանը պարսպ գանելով,
 համարձակ ըսկսան լեցուիլ՝ թումբերը
 սլասուած գեաի մը սէս, որով երկիրը
 լճացաւ ամէն տեսակ թշուառութեամբ,
 ու անպիտանացաւ բոլորովին :

Տուղբիլ Պարսից թագաւորը շատ ան
 գամ համարձակ բիւրաւոր զօրք խրկէց .
 ետքը ինքն ալ եկաւ գերեց գերպից, ու
 չարութիւն չիմնաց որ չընէ :

Գագիկ Աբասեան որ գեռ կըթա
 գաւորէր իր գաւառին վըրայ, անոր գէմն
 էլաւ, բայց յաղթըւած ետ քաշւեցաւ :
 Թաթուլ սպարապետը բռնըւած՝ երբ
 որ Տուղբիլին առջին բերին, ան սլատե
 րազմի մէջ Արսուրան իշխանին աղան վե
 րաւորած ըլլալով որ Տուղբիլ խիստ կըսի
 րէր, Տուղբիլ ըսաւ Թաթուլին . Թէ որ
 սա աղան սպրի, քեզ ալ կըխալըսեմ :
 Թաթուլ կտորձութեամբ մը սլատասիա
 նեց . Թէ որ իմ զարկածս է՝ չսպրիր :

Ք. Ե Երկրորդ օրը տղան մեռաւ, Տուղրիլն ալ թաթաւը բարձրացնել տուաւ, ու աջ ձեռքը կրտսեց ու խրկեց տղուն հօրը, ըսելով թէ Տես տղադ, անանկ քաջ մարդէ մեռաւ, որ երկու անգամ չի զարներ :

1054 Անկէ անցաւ Տուղրիլ Մանազկերտ քաղքին վերայ, շատ մեքենաներով փոսեր փորելով չիկրրցաւ բան մը ընել. վասն զի հայ քահանայ մը անոր ամէն մեքենաներուն դէմ դնելու ներսէն գիւտեր կը գրանար : Ճարտար Գաղղիացի մըն ալ մէկ վառուկ հիւթով մը անոնց էն մեծ բաբանը բռննկցուց : Տուղրիլ կատղած՝ ետ դարձաւ, մտաւ Արծկէ քաղաքը, ջարդեց կողոպտեց, ու գնաց Պարսկաստան :

Արխասլան յաջորդեց Տուղրիլին, եկաւ նորէն հայաստան, ջարդելով կողոպտելով հասաւ Անի քաղքին վերայ. երկար ատեն զարնըւելէն ետև, թէպէտ բաբանով պարրասլին մէկ կողմը փլուց, բայց չիկրրնալով ներս մըտնել՝ երբոր ետ կը դառնար, քաղքին իշխաններն ալ վախցան՝ միջնաբերդը քաշեցան : Երկու օր դը մինակ մնացած կանչւըռտելուն ձայնէն Արխասլան ետ դարձաւ, մտաւ ջարդեց կողոպտեց, ան մեծ քաղաքը արիւնլըւայ ըրաւ, ու դարձաւ Գագիկ Աբասեանին վերայ, մարդ խրկեց որ գայ իրեն հնազանդի :

1064 Գագիկ Աբասեան գիտնալով որ բանը գէշ է, ելաւ սևերու մէջ պրըրած նստաւ, երբոր պատգամաւորը հարցուց

պատճառը, պատասխանեց թէ Ալփաս-
 լանին հօրեղբօրը Տուղբիլին մահուանը
 վերայ սուգ կրնէ: Ալփասլան երբոր լը-
 սեց, զարմացաւ, սիրտը գուժ շարժե-
 ցաւ, եկաւ սիրով հետը սրագորւեցաւ
 և հրաման տուաւ որ հանդիստ թագա-
 ւորէ: Բայց Գաղիկ գիտնալով որ հան-
 գիստ չունենայ պիտի անկէ ետև, Ալ-
 նանգայ գաւառն ալ Յունաց յանձնեց,
 ու ինքը Ծամնդաւ բերդը քաշեցաւ:

Ծ

Հ. Գաղիկ երկրորդ ինչ վախճան ու-
 նեցաւ:

Պ. Թշուառ կեանք և չարաչար մահ
 ունեցաւ Գաղիկ երկրորդը: Կապագով
 կիոյ մէջ Հոռմընէրուն Հայոց դէմ ըրած
 անողգամուժիւնները ամէն օր աչքին առ-
 ջին տեսնելով, վերանին չարաչար նեղա-
 ցած էր: Իմացաւ որ Կեսարիոյ մեարա-
 պօլիսը ուրիշ Հոռմընէրուն պէս իր շանը
 անուներ Արմէն գրեթէ, ալ չիկրոցաւ համ-
 բերել: Օր մը մեկփանի կօրիճներ հետը
 առած՝ գնաց մեարապօլիսին տունը: Երբ
 որ կերակրի նստեր էին, Գաղիկ ուզեց
 որ շունը տեսնէ. մեարապօլիսը շփո-
 թեցաւ, բայց ուրիշ ճար չիգտնելով կան-
 չեց շունը Արմէն ըսելով: Գաղիկ հար-
 ցուց թէ սո՞ս է շանը անունը. մեարապօ-
 լիսը չիգիտնալով ինչ ըսելիքը, Գեռ սրղ-
 աիկ է, անոր համար, ըսաւ: Ան ատենը

Գաղիկ իրեններուն աչք ըրաւ . մէկէն եւան նախ ծառաները կապեցին, շունն ալ բռնեցին սարկի մը մէջ գրին : Անոնք կարծեցին թէ շունը առնեն տանին պիտի . բայց կտրիճները բռնեցին մեարսաօլիան ալ սարկին մէջ խոթեցին, ու ըսկան շունը ծեծել, այնչափ ծեծեցին որ շունը կատղեցաւ ու խածնելով մեարսաօլիտը ըսպաննեց :

Երբոր Հոռմըները աս բանս խմացան, կատղեցան Գաղիկին դէմ . բայց Գաղիկ գնաց դէպի Տարսոն, զգուշութեւ կըստը տէր . ու Հոռմըներէն որուն որ հանդէպէր՝ շատ չարիք կըհասցընէր անոնց :

Օր մը իրեք հոգւով, որոնց մէկն էր Ռուբէն իր ազգականը, դէպի Ալիզիսառայ բերդը գնաց սարսուղին մէջ հանդէլու համար : Բերդին տէրերը երբոր խմացան, իրեք եղբարք Մանասալեայ տղաքը՝ յիսուն հոգի դարանի մէջ . ստուցին, ու իրենք իբրև թէ զինքը պատուելու համար դիմացը ելան : Ան ատենը յանկարծ մէկալնոնք դարանէն ցաթկեցին բռնեցին կապեցին Գաղիկը ու բերդը խոթեցին . քովինները հազիւ կըրցան փախչիլ : Գաղիկին մէկալ մարդիկը երբոր խմացան, բերդին վըրայ վազեցին . բայց բերդը անառիկ ըլլալով բան չիկըրցան ընել : Իսկ ներսինները չարաչար տանջելով մեռուցին Գաղիկը, ու մարմինը բերդին վըրայ կախեցին : Ահա Ալիզիսառայ բերդին վըրայ հայատտանի այնպիսի հին

և շատ դարերու մէջ իր կարրձու թեամբը
 դամէնքը սարսափեցնող ազգին վերջի
 թագաւորը, որ ազգը պայծառացրնե-
 լով ինչւան հոն փառքով հասնելու տե-
 ղը, տեսէք ի՞նչ սոսկալի ու ցաւալի վի-
 ճակի մէջ կեցեր է : Թագաւորին վիճա-
 կէն ժողովուրդին ալ աղետալի դառնու-
 թեան չափը կրրնաս գուշակել : Մեռաւ
 Գաղիկ երկրորդ ասանկ սարսափելի կեր-
 պով յիսուներհինգ տարւան : Արեք տարի
 թագաւորեց, երսուներհինգ տարի պան-
 դրխաութիւն քաշեց : Թողուց երկու
 տղաք, անոնք ալ ասդիս անդին ցրուած
 կորսուեցան :

Աս միջոցներուս մեկալ բռնաւոր
 թագաւորութիւններն ալ ջնջուեցան :
 Անկէ ինչւան հիմա հայաստան ան-
 տէր մնացեր է. քաղաքներէն մէկ քա-
 նին ողորմելի գեղ դարձած, և ուրիշ
 շատ քաղաքներ ու անթիւ անհամար գե-
 ղեր բոլորովին անապատ եղած, գրեթէ
 ութըհարիւր տարի է որ միշտ աւրըւելու
 վերայ է. և թէ այսչափ տարի մէկ երկիր
 մը չէ թէ մինակ երեսի վերայ մնացած,
 հասաւ միշտ չորս կողմէն կատաղի թշնամի-
 ներէ աւրըւելով ի՞նչ աստիճանի թշուա-
 ռութիւն կրրնայ ունենալ, մտածելով
 կարելի է որ քիչ մը խնայել, բայց գրով
 կամ քերնով անկարելի է որ պատմելի :

Ասկէ ետե ըսկսաւ Ռուբինեանց պղտիկ
 թագաւորութիւնը, բայց հայաստանէն
 գուրս Աիլիկիայի մէջ :

Ք. Ե

Հ. Հայաստանին մէջ Յոյները որչափ
ատեն կըրցան իրենց տէրութիւնը բանե-
ցընել :

1086

Պ. Խիստ քիչ. Հայոց տէրութիւնը
վերնալէն ետև մէկքանի տարի ետքը Մե-
լիքշահ Պարսից Թագաւորը Աւփասլա-
նին տղան շատ ուժովնալով, և տեսնելով
որ Յոյները եկեր Հայաստան Պարսից մա-
սին ալ տիրեր են, վերանին պատերազմի
ելաւ, ու բոլոր Հայաստան նորէն ոտքի
տակ առնելով Յոյները բոլորովին վաճ-
տեց, հասաւ ինչւան Միջերկրական ծո-
վունքով, ու սուրը ծովը նետեց՝ փառք
տալով Աստուծոյ, որ իր տէրութիւնը ինչ-
ւան Եւրոպային ծովը հասուց. ու չորս
դին արիւն ծրծող պահապաններ դնելով
եւ դարձաւ : Աս եղաւ Յունաց վերջի
քաշւիլին. որ անկէ ետև մէյո՛ւ ալ ոտք
չկըրցան կոխել Հայաստանին աւերակ-
ներուն մէջ :





ՄԱՄՆ ՉՈՐՐՈՐԳ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԵԱՆՅ

ԺԱ

Հ. Ինչպէս ըսկաաւ Ռուբենեանց Բ. Ե
ԹագաւորուԹիւնը :

Պ. Ռուբեն Գազիկին ազգականը երբ 1080
որ անոր բռնուէլու ատենը քովէն փա-
խաւ, գնաց Աիլիկիա դաւառը՝ ուր որ
շատ հայեր կային. անոնցմէ կտրիճները
յորդորեց որ հումրներէն վրէժ խնդրեն,
և անոնց հեա մէկ եղած մէկքանի բերդե-
րու տիրեց : Ռուբենին հեա էր նաև Աշ-
տիլ իշխանը որ միշտ պատերազմի մէջ
յանկարծ վըրայ հասնելուն համար Գող
Աշտիլ ըսեցաւ : Յոյնք աս ատենախառ-
նափնդոր կռիւներու հեա ըլլալով չիկըր-
ցան դէմ դնել. շատ հայեր ալ ըսելով
Ռուբենին ըրածները, ելան Աիլիկիա ե-
կան. ասանկով Ռուբեն տիրեց Աիլի-
կիային տասնըվեց տարի ու մեռաւ :

Հ. Առջի Ռուբենին ո՞վ յաջորդեց : 1095

Պ. Ռուբենին որդին Աոստանդին առա-
ջին հօրը տեղը անցաւ ու խելքով և քա-
ջուԹեամբ ըսկաաւ մեծցընել իր պզտիկ

Բ. Ե տէրութիւնը : Աստուծոյն ներս որ Լա-
տինացիք երուսաղէմի վերայ կերթային ,
Կոստանդին անոնց շատ օգնեց քրիստո-
նէութեան սիրով ու անոնցմէ ալ պատիւ
գտաւ :

1100 Կոստանդին առաջին հինգ տարի միայն
իշխեց ու մեռաւ . անոր յաջորդեց իր որ-
դին Թորոս առաջին , որ աւելի ընդարձա-
կեց տէրութիւնը՝ քաղաքներ առնելով
Յունաց ձեռքէն , որոնց մէջ երևելի էր
Անարզաբա քաղաքը : Պարսիկները և
Սկիւթացիք ըսկասն հայաստանէն գէտի
Կիլիկիա քաշել , բայց երկուքներուն ալ
գէտ էլան Թորոս ու գող Ասաիւ , ու շատ

1112 ջարդ տալով ետ դարձուցին : Թորոս գնաց
նաև Կիլիստուա բերդին վերայ գիշեր ա-
տեն , ուր որ Գաղիկ թագաւորն ըսպան-
ներ էին . հոն դարանի դրաւ մարդիկներ ,
ու ինքը առաւօտանց բերդէն հեռանալ
ձեացուց . երբոր անոնք բերդին դուռը
բացին՝ կարծելով թէ Թորոս յուսահա-
տեցաւ , ու անհողութեամբ կելլէին ու
կրմանէին , յանկարծ դարանէն ելան՝
մտան բերդը , Թորոսն ալ ետ դարձաւ ,
ու զամէնքը ջարդեցին . բանեցին զԳաղի-
կը ըսպաննող իրէք եղբայրները . հրամայ-
եց անոնց Թորոս ու բերին Գաղիկին
սուրը և զգեստները . ան միջոցին մէկը
փախաւ ու ինքզինքը բերդէն վար նետեց
մեռաւ , մէկալն ալ Թորոս հաստ բրով
ծեծելով ըսպաննեց , ըսելով թէ ասանկ
մարդը սէտք չէ թրով ըսպաննել . եր-

քորգն ալ հետը տարաւ : Քսանկրէք, Ք. Ե տարի օիրեց թորոս ու մեռաւ, ու տեղը անցաւ իր եղբայրը Լևոն Ա :

Հ. Առաջին Լևոնին ատենը յիշատակի արժանի ինչ գործք եղաւ Կիլիկիայի մէջ :

Պ. Թէպէտ պզտիկ էր Կիլիկիոյ տէրու թիւնը, բայց մէջի թշուառութիւնները նոյն էին ինչ որ Հայաստանին թագաւորութեան մէջ. վասն զի մեր ազգին սովորութիւնն էր ցրուած կենալ, ամէն իշխան իր քաղաքը իր բերդը հոգալ առանձին ինքնիշխան թագաւորի պէս. և երբոր իրենք կուղէին նէ կօղնէին թագաւորին, չէ նէ՝ թագաւորը չէր կրնար անոնց հրամայել. թէպէտ ազգին մէջ ասանկ օրէնք չիկար, բայց իշխաններուն բռնութիւնը օրէնքէն վեր էր : Ասանկ անկարգ կարգով կարգաւորեալ թագաւորութիւն չիկրնար ըլլալ :

Լևոն ըսկաաւ քաջութիւններ ընել, քաղաքներ առնել, ինչւան Մամեստիա քաղաքն ալ առաւ ու զամէնքը ըսկաաւ վախոցրնել :

Պեթեկին անունով Անախոք քաղաքին քաղաքապետը Լևոնին վերայ նախանձելով խաբէութեամբ զինքը սեղանի կանչեց ու բռնեց բանտ գրաւ : Լևոն նեղը մտած՝ երկու քաղաք տուաւ Պեթեկինին և իր մէկ որդին սատանդ թողուց ու ազատեցաւ :

Ետքը գնաց նորէն պատերազմով եւ առաւ տուած քաղաքները. և այնչափ

Ք. Ե աշխատացուց լատին իշխանները, որ նեղը մտած՝ պատանդը ետ դարձուցին, և տեղը իրենք անոր պատանդ տուին ու հաշտուեցան :

Բայց Յովհաննէս Պերփեռուժէն կայսրը տեսնելով Ղևոնին ըրածները, ուղեց զինքը նուաճել. և որպէս զի յաղթուի, շատ զօրք ժողովեց ու մեծ պատրաստութիւնով վերան ելաւ : Ղևոն տեսաւ որ իշխանները իրեն հետ միաբան չեն, և ինքը մինակ այնչափ բազմութեան դէմ չիկրընար դնելու, փախաւ ամուր տեղանք պահւրտեցաւ : Եկաւ կայսրը տիրեց բոլոր Ախլիկիային, և սաստիկ պատերազմով շատ արիւն ընելով առաւ Անարղաբան և Վահկայ բերդը : Զօրք ալ խրկեց Ղևոնին ետևէն, որ նեղը խոթեցին ու բռնեցին իր ընտանիքովը մէկտեղ, և կայսրը զինքը տարաւ Վոստանդնուպօլիս, ու երկրթէ շղթաներով բանտ դնել տուաւ : Մինակ քաջութիւնը առանց կարգաւորեալ տէրութեան ու միաբանութեան խրուի (չալըի) բոց կրնամանի. ոչ տեսնելու համար միակերպ լոյս կուտայ, և ոչ տաքնալու կրակ :

1137

Ղևոն տարի մը բանտը կենալէն ետև՝ կայսեր դուժը շարժեցաւ, զինքը բանտէն հանեց ու հանդիստ կըստահէր իր պալատը : Օր մը կայսրը բաղնիք գացեր էր. Ռուբեն Ղևոնին շղան գրկեց աւազանը՝ տարաւ կայսեր առջին, ամէնքը զարմացուց. բայց շատերն ալ նախանձելով վը-

բանն ամբաստանութիւնն ընելով ըստխալեցին կայսրը, որ Ռուբենին աչքնէրը փորել տուաւ, որ ցաւէն մեռաւ. Ղևոնն ալ մէկալ թորոս տղուն հետ մէկտեղ նորէն բանտ գրաւ. հոն Ղևոն ցառով ու լալով մեռաւ: Կայսրն ալ նորէն թորոսը բանտէն հանել տուաւ ու քովը կրպահէր, որ իր աղէկ ձիւքէրովը սիրելի եղաւ:

Երբոր նստաւ Կիւ Մանուէլ կայսրը, թորոս միջոց մը դանելով փախաւ Կիլիկիա, ու յայտնեց ինքզինքը քահանայի մը, որ առաւ իր տունը սպահնաց, ու ետքը յայտնեց մէկ քանի իշխաններուն, որոնք սիրով ընդունեցան զինքը, ու մէկ եղած ըսկասն նորէն տիրել Կիլիկիայի:

1144

ԾԲ

Հ. Թորոս երկրորդ ինչպէս կրցաւ նորէն ձեռք ձգել հօրը իշխանութիւնը:

Պ. Տասըհազար հոգիի չափ իրեն հետ միաբանած՝ քալեց Կիլիկիոյ քաղաքներուն վերայ, տիրեց ամէն տեղերուն: Կայսրը իր հօրեղբորորդին Անգրոնիկոսը շատ զօրքով խրկեց վերան, հրաման տալով որ Կիլիկիայի մէջ հայ բնակիչ չիթողուն: Թորոս գետազան խրկեց ասոնց, ըսելով թէ ես կայսեր կըհնազանդիմ՝ թէ որ արդարութեամբ կառավարէ. Անգրոնիկոս սպառնալիս տուաւ, Արգարութիւնն ան է որ՝ զքեզ կապէիք քու հօրը կապւած շղթայովը:

Թորոս բարկացաւ, շատ մարդ դարանը
 գրաւ, ինքն ալ ուրիշ բազմութիւնով
 զօրացը ետևէն ինկաւ. սասնկով յան-
 կարծ մէջ առին բոլոր Յունաց զօրքը,
 աղէկ ջարդ մը տուին ցրուեցին, շատ
 իշխաններ ալ բռնեցին: Վայսրը նեղա-
 ցած՝ ուղեց գնել իր իշխանները Թո-
 րոսին ձեռքէն: Թորոս հարցուց թէ քա-
 նի՞ կաժեն. դեսպանները շփոթած՝
 Դու գիտես, ըսին: Թորոս պատասխան
 տուաւ. Թէոր շատ բան աժէին՝ ես չէի
 ծախէր, տուէք ինչ որ կուզէք: Անոնք
 ալ իշխանները չանարգելու համար շատ
 ըտտակ տուին: Թորոս հրամայեց որ բոլոր
 ըտտակները բաժնեն զօրացը. երբոր դես-
 պանները զարմանալ ցըցուցին, Թորոս
 ըսաւ, Ստակը իրենց բաժնեցի, որպէս զի
 նորէն ձեզմէ իշխաններ բռնեն:

Սկիւթացիներն ալ հռոմէններուն գրգը-
 ուելովը իրեք անգամ վազեցին Թորոսին
 վերայ, բայց յաղթուեցան:

Հ. Թորոս երկրորդ տէրութիւնը ձեռք
 առնելէն ետքը ուրիշ ինչ պատերազմ
 ըրաւ:

Պ. Ան միջոցին Ստեփանէ Թորոսին
 եղբայրը ուղեց ինքնագլուխ իշխել եր-
 կիրներուն. անոր համար ըսկաաւ զօրք
 ժողվել և ասդիա անդին տիրել. Յունաց
 ալ շատ չարիք հասուց: Յոյնք դարանը
 մտան, չիկարծած ատենը վերան հասան
 բռնեցին ու կաթսայով տաք ջրի մէջ զին-
 քը ըսպանեցին:

Ան ատենը թորոս իր Մէհնէ կղբօրը հետ Բ. Ե վրէժ խնդրելու համար ըսկաւ ալ տւելի պատերազմիլ Յունաց դէմ. անցաւ Ախարոս կղզին ալ, շատ Յոյներ չըբբունէր, քիթերնին ականջնին կարել կուտար ու կըթողուր: Կայսրը խիստ կատուած՝ մեծ պատրաստութիւնով թորոսին վերայ ելաւ: Թորոսին աչքը վախցաւ, կայսեր հետ հաշտութիւն ըրաւ ու մէկքանի տարի ալ անցնելէն ետքը վախճանեցաւ, քսանըջորս տարի իշխանութեանը մէջ կենալէն ետքը:

Հ. Թորոս երկրորդին իշխանութեանը սիլ յաջորդեց:

Պ. Թորոս երկրորդ պզտիկ տղայ մը 1168 ունէր, յանձնեց թովմաս պայլին իր աներոջը՝ որ իշխանութեանը յաջորդել տայ: Թովմաս պայլ տարի մը իշխելէն ետքը, Մէհնէ թորոսին եղբայրը որ առաջուց ասպատակներ առանձին Բերիա քաղաքը կրնատէր, Բերիայի ամիրայէն իրեն զօրք օգնական առնելով՝ եկաւ Ալիլիկիա, ըսկաւ պատերազմիլ: Տեսան իշխանները որ գլուխ պիտի չելէն ու երկկիր տակն ու վերայ պիտի ըլլայ, նեղը մտած՝ կանչեցին Մէհնէ թորոսին տեղը նստուցին: 1169 Ան ատենը թովմաս պայլը վախնալով քաշուեցաւ դնաց Անտիոք. Թորոսին աղան ալ մէկքանի անգգամ մարդիկ ըսպաննեցին:

Ետքը Մէհնէ ինքզինքը անկարգութեան 1174 տուաւ, զօրքն ալ իրմէն ձանձրացած՝ ըս

սրաննեցին զինքը, ու ակզը նստուցին Ստեփանէին որդին Ռուբեն երկրորդը :

Հ . Ռուբեն երկրորդ իր իշխանութիւնը ինչպէս բանեցուց :

Պ . Շատ խելքով վարեցաւ Ռուբեն իր իշխանութեանը մէջ : Իր սղտիկ երկիրը շէնցրնել նայեցաւ . Տարսոն քաղաքը հռմբներուն ձեռքէն առաւ . ան սառճառաւ իրեն հետ թշնամացաւ հեթում Լամբրոնին քաղաքապետը՝ թորոս երկրորդին փեսան . Ռուբեն ալ գնաց Լամբրոնը սաշարեց : Հեթում քաղաքապետը երբոր նեղը մտաւ, Անաիոբին Պեմունդ քաղաքապետին աղաչեց որ իրեն օգնէ . ան ալ վախնալով որ կըսալթըւի Ռուբենէն, խարդախութեամբ սեղանի հրամցուց զՌուբենը, ու բռնեց բանտ դրաւ :

Ան ատենը Լեոն երկրորդ՝ Ռուբենին եղբայրը՝ կատղեցաւ ու գնաց զօրքով նորէն Լամբրոնը սաշարեց, ու այնչափ նեղը խոթեց զհեթումը, որ զղջալով հաշտութիւն խնդրեց : Անկէ անցաւ Լեոն գնաց Պեմունդին ձեռքէն աղատեց զՌուբենն ալ ու բերաւ աթոռը նստեցուց : Ո՛ւր էր թէ բոլոր ազգը ասանկ մէկզմէկու օգնել ջանային աննախանձ, զամէնքը իրենց վայլած փառքին հասցրնել ուղեւում : Ինչպէս հիմա անմիաբանութեան զնասը ամէնքնխկրկրենք, անանկ ալ անատենը եղբայրութութենէ առաջ եկած աղէկութիւնները ամէնքնխ ալ կը վայլէինք :

Ռուբէն երկրորդ տասնըմէկ տարի Ք. Ե
 իշխանութիւն քչէլէն ետքը հրաժարե- 1185
 ցաւ, իր տեղը երկրորդ Աւոնը նստեցուց,
 ու ինքը կրօնաւոր եղաւ Գրազարդ վանքը:

ԾԳ

Հ. Աւոն երկրորդ ինչ գործք ըրաւ
 յիշատակի արժանի:

Պ. Աւոն երկրորդ պարծանք եղաւ Ռու-
 բէնեանց ցեղին՝ թէ քաջութեամբ թէ
 խելքով և թէ բարեպաշտութեամբ:
 Ընդարձակեց տէրութիւնը, շատ նոր
 բերդեր շինեց, այլևայլ հիւանդանոցներ
 հաստատեց իրենց եկամուտովը. Սիա 1186
 քաղաքն ալ բոլորովին նորոգեց, ու ա-
 թուաբար Տարսնէն հոն փոխեց:

Եւրոպացոց երկրորդ անգամ Երու-
 սաղէմին վերայ պատերազմի երթալու
 ատենը իրենց շատ օգնութիւն ըրաւ
 կերակրի կողմանէ. Աւոնին աս գործ-
 քը բոլոր Եւրոպա հռչակեցաւ: Աւ-
 տինացոց զօրագլուխը Գերմանացոց Փրի-
 տերիկոս կայսրը ըլլալով, խոստացաւ
 Աւոնին թագաւորական պատիւ տալու.
 բայց շուտ մեռնելով՝ խոստմունքը ան-
 կատար մնաց:

Աւոն տեսնելով որ ամէն բան յաջող
 կերթայ կոր, ուզեց թագաւոր օժելը.
 դեսպան խրկեց Ներիկոս կայսեր որ Փե-
 տերիկոսին տղան էր, և Ալեքստինոս սըր-

Ք. Ե բաղան պատկին: Սրբազանը փառաւոր
 Թագաւորական Թագ մը խրկեց Աոնրադ
 արքեպիսկոպոսին ձեռքովը . կայսրն ալ
 դրօշակ մը խրկեց առ իւր ի նշանով անուա-
 նը յարմար . վասն զի անկէ առջի Հայոց
 նշաններն էին արծիւ, աղաւնի, վիշապ:

1198 Եւ Սիս քաղաքը սուրբ Սովիա եկեղե-
 ցւոյն մէջ Ներսէս Շնորհաւուոյն եղբորոր-
 դւոյն Գրիգոր կաթողիկոսին ձեռքովը
 Ղևոնը Թագաւոր օծւեցաւ . հոն Ղամբրո-
 նացին ալ ատենաբանութիւն ըրաւ:
 Տաճկընէրուն ամիրապետը և Յունաց
 կայսրը Թագ ու պարդեններ խրկելով Ղևոնը
 պատուեցին: Կր բարեպաշտութիւնը և Աս-
 տուածածնայ ջերմեռանդութիւնը տը-
 լին իրեն աս ամէն յաջողութիւնները .
 վասն զի յայտնի կերևնար որ ամէնուն
 սիրտը շարժեր էր իրեն բարկք ընելու:

Հ. Ղևոն երկրորդ Թագաւոր օծւելէն
 ետքը ինչ գործք ըրաւ յիշատակի ար-
 ժանի:

Պ. Սոյ մէջ մեծ եկեղեցի մը շինեց
 Եջմիածին անուանով: Թագուհին երբոր
 վախճանեցաւ, Ղևոն նորէն կարգըւեցաւ
 Ախպրոսի Թագաւորին աջկանը հետ: Աս
 բանիս վերայ նեղացաւ Քայքաուղ Իկո-
 նիոյ ամիրան, ու վերան պատերազմի
 ելաւ: Ղևոն դէմն ելաւ, բայց իշխան-
 ներուն յանգգնութենէն զօրքը սաշար-
 ւեցան յաղթըւեցան: Ղևոն ուրիշ զօր-
 քով ծածուկ ճամբով գնաց Քայքաուղին
 երկիրը մտաւ, ըսկսաւ տակն ու վերայ

ընել: Քայքայուել ըստիպւելցաւ եւս դառնալով: Ք. Ե.
նալու, ու հոն հաշտութիւն ըրին:

Երկրորդ տարին Բերիայի ամիրան եկաւ Վիլիկիայի վերայ, սլատգամ խրկելով թէ կամ եկու հնազանդէ, կամ թէ չէ՝ քու զատիկ օրերդ ցաւի օրեր կընեմ: Անոն լրտեսի ձեռքով առաջուց իմացաւ ամիրային գալը, և իրեն սլատգամ խրկելը. անոր համար երկու երևելի իշխաններ սլատգամաւորներուն գիմացը խրկեց որ զանոնք խաղցրենն. իսկ ինքը ժողովեց զօրքը՝ յանկարծ հասաւ թշնամեոյն վերայ, ջարդեց, ամիրան ալ փախուց մէկ երկու հոգւով. կողոպտեց բանակը, դարձաւ եկաւ գետի մը քով շարեց աւարները ու սլատգամաւորները բերել տուաւ: Երբոր տեսան անոնք, զարհուրեցան ու թագաւորին ոտքը ընկան որ իրենց խնայէ: Անոն զանոնք թողուց որ աղաւ երթան, ապրսալրելով որ ըսեն ամիրային թէ ինչ հարկ որ ինքը Անոնէն կուզէր, Անոն իրմէն կուզէ:

Անոն աւրուեցաւ Ատախներուն հետ ալ՝ հաւատքի վերայ խռովութիւն հանելուն համար. ասոնց շատ անգամ ազգարարութիւն ընելէն ետքը, տեսաւ որ չեն հանդարտիր, զամէնքն ալ իր ակերութենէն դուրս վաւրեաց ու իրենց իշխանները բանա դրաւ: Եւ թէպէտ շատ աղաչողներ եղան որ Ատախներուն հրաման տայ Վիլիկիա գալու, բայց ճարչեցաւ՝ չիթողուց: Եւ ինքը Անոն երթաւ

Ք. Ե Ը լով զօրացաւ փառաւորուցաւ, ու բարի
 1218 մահոտաւ մեռաւ երսուներ չորս տարի
 թագաւորելէն ետև:

ԾԴ

Հ. Աւոն երկրորդին ո՞վ յաջորդեց:

Պ. Որովհետև Աւոն մինակ աղջիկ աղայ
 մը ունեցաւ Չապէլ անուանով, Աւոնին
 1219 յանձնելովը զանիկայ հօրը տեղը նստե-
 բե՛ն անուանով մէկը գլուխ վերցուց՝ թա-
 գաւորելու մտքով: Ան տակեր Աոսաան
 1220 դին Չապէլ թագուհիին երկրորդը վերան
 գնաց, բռնեց զինքը բանտ դրաւ. հոն մե-
 ռաւ Ռուբեն իր օգնականներովը:

Ետքը իշխանները մէկ եղան, Չապէլ
 թագուհին կարգեցին Փիլիպպոս անուանով
 իշխանի մը հետ որ մօր կողմանէ միայն հայ
 էր: Ահա ասանկ մեր ազգին իշխանները
 միաբանեցան, բայց ըրած գործքերնէն
 կխմացելի որ դարձեալ մտքերնին անմիա-
 բանութիւն էր: Ռուբենին ցեղէն գանը-
 ւած մարդը բանտի մէջ կըստաննեն, ու
 զիրենք ասող օտարազգի մը իրենց թա-
 գաւոր կընտրեն: Քիչ օրէն իրենք ալ
 խմացան որ անխելքութիւն էր ըրածնին:
 Վասն զի Փիլիպպոս երկու տարիի միջոց իշ-
 խանութեանը մէջ հաստատուելէն ետքը
 լսկաւ բաղքին հարստութիւնները Ան-
 տիոք կրէլ: Իշխանները նեղանալով բը-
 նեցին Փիլիպպոսը բանտ դրին, որ հոն մե-

ուսւ : Եւոքը Զապէլը կարգեցին Աոստան Բ. Ե
դին իշխանին հեթում որդւոյն հետ, որ
Արշակունեաց ցեղէն էր :

Հ. Հեթում առաջին ինչպէս Թագաւորութիւն քշեց : 1224

Պ. Հեթում Թագաւորը Զապէլ Թագուհիին և Աոստանդին իշխանին հետ մէկ եղած՝ ըսկսան զարդարել տէրութիւնը, մանաւանդ բարեպաշտութեան և բրիստոնէութեան կողմանէ. և շատ սարի սասնկ խաղաղութեամբ անցուցին Աիլիկէցիք, Թէպէտ Հայաստան տակն ու վըրայ էր Թաթարներուն և Սկիւթացիներուն ձեռքէն :

Հ. Առաջին Հեթումին Թագաւորութեան ասեւնը Սկիւթացիք Հայաստանին ինչ նոր վնաս հասուցին, և Հեթում ինչ կերպով օգնեց Հայաստանին :

Պ. Չարմաղան Սկիւթացոց զօրավարը եկաւ նորէն Անի քաղաքը պաշարեց. քաղաքը սասաիկ սով քաշէլէն ու չարաչար պատերազմէլէն ետքը, երբոր քաղքըցոց կէսը եկան իրեն ընկան, Չարմաղան զիրենք հոգալու պատճառաւ՝ զօրքին մէջը ցրուեց, ու ետքը յանկարծ ամէնքը մէկէն ջարդել տուաւ : Ետքը քաղաքն ալ մտան, տղոցմէ՝ կանանցմէ և արհեստաւորներէն զսա զամէնքը ըսպաննեցին : 1233

Հեթում տեսնելով Սկիւթացոց ըրած չարիքը, և վախնալով որ առաջ կուգան, ինքը շատ ընծաներով դեսպան խրկեց, 1239

Ք. Ե ու խոստացաւ որ հնազանդի անոնց իշխաններուն :

1254 Իսկ Ջասուէլ թագուհին սրբութեամբ մեռնելէն երկու տարի ետքը Հեթում թագաւորը ինքը անձամբ գնաց Թաթարաստան Մամիդոյ խանին աղաչելու որ Հայաստանին նեղութիւնը քիչ մը թեթեւցնէ : Խանը զինքը մեծ պատուով ընդունեցաւ, մէկտեղ դաշինք դրին, ու դառնալու ատենը Հայաստանի Թաթար գործակալներուն ալ հրաման տարաւ որ Հայերը չինեղեն. և ինքը ուսելից որ անցաւ՝ ամէնէն մեծ պատիւ գտաւ. տարի մը ու չորս ամիսէն հասաւ իր աթոռը : Բայց աս պատճառաւ Իկոնիոյ ամիրան հետը թըշնամացաւ. Հեթում անոր յաղթեց, շատ տեղ ալ ձեռքէն առաւ ու զինքը ետ դարձուց ամօթով :

Կոստանդին Լամբրոնին իշխանը որ Հեթումին քեռին էր՝ ասպատակեցաւ, ու միացաւ Իկոնիոյ ամիրային հետ : Հեթում երբոր լսեց, վերան գնաց զօրքով, Լամբրոն բերդէն ՚ի զատ ամէն տեղերը ձեռքէն առաւ : Կոստանդին նեղը ընկած՝ ուղեց հաշտութիւն ընել. բայց Հեթում չաւտալով երբոր իրէք չորս անգամ անոր խրկած գեսպանները արհամարհեց, Կոստանդին գաղտուկ փախաւ բերդէն, գնաց զօրք առաւ Իկոնիոյ իշխանէն, յանկարծ Հեթումին երկրին վերայ վաղեց ու շատ միաս տուաւ, շատ գերի ալ բռնեց տաճիկ զօրքերուն տը-

ւաւ : Հեթում որչափ որ կարելի էր ժողովեց զօրքը, եւ լաւ կոստանդինին գէմ, զարկաւ ցրուեց անոր զօրքը, զինքն ալ Լամբրոն փախուց . հոն պաշարուած մնաց կոստանդին ինչևան որ մեռաւ :

Հեթում խաչակրաց զօրքին ալ շատ օգնութիւն ըրաւ :

Ծ. Զ

Հ. Հեթում առաջին կրրցան խաղաղութեամբ թագաւորել ինչևան վերջը :

Պ. Հեթում առաջին որչափ որ խոհեմութեամբ և զգուշութեամբ կրջանար առիթ ջնտալու խռովութեան, այնչափ աւելի նոր նոր խռովութիւններ գիմացը կելէին :

Եգիպտացոց Փնտուխտար ամիրան՝ որ Երուսաղէմն առաւ, թաթարներուն յաղթեց, Հեթումին ալ լուր խրկեց որ Եգիպտացոց ձեռքէն առած քաղաքները եա տայ : Երբոր Հեթում մտիկ չըրաւ, ըսելով թէ անոնք առաջ մերն էին, ամիրան շատ զօրք խրկեց յանկարծ Կիլիկիայի վերայ, որ սկսան տակն ու վրայ ընել երկիրը : Հեթում գէմերնին հանեց իր երկու որդիքը Լևոն և Թորոս, ու ինքը գնաց որ Սկիւթացոցմէ օգնութիւն առնէ : Ան միջոցին չարաչար յաղթըւեցան հայերը . ու երբոր երկրորդ անգամ՝ նորէն ժողվըւած ըսկսան զարնըւիլ և յաղթել, Թորոս զարնըւեցաւ ընկաւ, Լևոնն

